

Նաիրա Արարատի Խաչատրյան

**Ուղեկիցներիս
Երթուղիներով**

**գրականագիտական
հոդվածների
ժողովածու**

Երևան
2017

ՀՏԴ -----

ԳՄԴ -----

Ժողովածուն տպագրության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի խորհրդի կողմից

Խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մարտին Գիլավյան

Խաչատրյան Նահրա Արարատի, Ուղեկիցներիս երթուղիներով. գրականագիտական հոդվածների ժողովածու / Ն.Ա. Խաչատրյան, Եր., Զրատ., 104 էջ/

Ժողովածուն բանասիրական գիտությունների թեկնածու, սահյանագետ, ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Նահրա Խաչատրյանի հիմնադրող գիրքն է, ուր ներկայացված են վերջին տասնամյակում տարբեր ամսագրերում և թերթերում տպագրված և անտիպ գիտական հոդվածներ՝ նվիրված դասական և ժամանակակից հայ գրականությանը: Գիրքը հասցեագրված է բանասերներին, ուսանողներին, ուսուցիչներին և ընդհանրապես հայ գրականությամբ հետաքրքրվող անձանց:

Մենք խամաճիկ ենք խեղկատակ կյանքի անփուլյժ ձեռքերում,
Մեր դերերն առած՝ գիշեր ու ցերեկ անգիր ենք անում:
Երջանիկ է նա, ում կարճ թե երկար, բայց դեր է տրվում,
Մարդկանց մեծ մասը սոսկ փուչ դեկորի համար է ծնվում:

Նաիրա Խաչատրյան

Արևմտահայ առաջին վեպը

XVIII դարում հայ գրականության մեջ լայնորեն տարածում գտած դասականապաշտության գեղարվեստական սկզբունքները եթե մինչև XIX դարի 50-ական թվականները որոշ չափով կարող էին հարմարվել չափածոյի ու դրամատուրգիայի գրական ձևերին, ապա արձակի ժանրային բնույթին չէին համապատասխանում: Այս երևույթն ավելի շուտ ուշադրության արժանացավ արևելահայ նոր գրականության մեջ, որը նկատելիորեն արագ ընթացք ունեցավ, քան արևմտահայ նոր գրականության սկզբնավորումը:



Հովհաննես Հիսարյան

Բարեբախտաբար արևմտահայ գրականագիտական միտքը գրականության զարգացման աստիճանից առաջ էր անցել: XIX դարի 50-ական թվականներից արևմտահայ մամուլի ու գրականության որոշ ներկայացուցիչներ փորձեցին ընդօրինակել Եվրոպայում արդեն կայուն ճանապարհ անցած զգացապաշտության գրական ուղղության գեղագիտական ու գաղափարական սկզբունքները: Պոլսում արդեն իսկ ձևավորվել էր առաջադեմ մտավորականների այն կորիզը, որը մտահոգված էր ազգի հոգևոր վերածննդի հարցերով: Առանց կողմնակի առաջադիմական ազդեցությունների մտավորականությունն ի գորու չէր իրականացնել իր ծրագրերը, ուստի Եվրոպայից ներթափանցած զգացապաշտությունն արևմտահայ գրականության մեջ դարձավ հաստատուն՝ մերժելով մինչ այդ իշխող դասականապաշտության գրական ուղղության դրույթները: Ամենակարևորն այն էր, որ ուշադրության կենտրոնում հայտնվեց անհատն իր ներաշխարհով: Չգացապաշտությունը որդեգրած հեղինակները շրջապատը, մարդկային կյանքն իր ներքին բովանդակությամբ ու զգացմունքայնությամբ, փորձում էին անցկացնել իրենց իսկ անհատական, հեղինակային ընկալումների ոլորտով: Այս մասին շատ դիպուկ է ասել ռուսական զգացապաշտության խոշորագույն ներկայացուցիչ Կարամզինը՝ դեռևս 1794 թվականին գրված «Ի՞նչ է անհրաժեշտ հեղինակին» (“Что нужно автору?”) հոդվածում: «Ты берешься за перо и хочешь быть автором:спроси же у сомого себя,наедине, без свидетелей, искренно: каков я? ибо ты хочешь писать портрет души и сердца своего.Читай

историѣ несчастий рода человеческого и если сердце твое не обольется кровию, оставь перо, или она изобразит нам хладную мрачность души твоей. Я уверен, что дурной человек не может быть хорошим автором»²⁵: Այս սկզբունքով մեր գրականության մեջ և՛ արևմտահայ, և՛ արևելահայ թեւերում սկսեցին ստեղծագործել մի շարք հեղինակներ: Չգացապաշտությունը (սենտիմենտալիզմը) ծագել է 18-րդ դարում Անգլիայում: Լորեն Սթեր-նը Ֆրանսիայում կատարած իր ճանապարհորդությունը կոչել է սենտիմենտալ, որից էլ անվանվել է գրական այս մեթոդը²¹: Այն հայ գրականությունն ներթափանցեց առաջին հերթին ֆրանսիական գրականությունից, որի պահանջով և՛ չափածոյում, և՛ արձակում կարևորվեց բնապաշտական և մարդկային զգացմունքների պատկերումը: Բարոյախոսական-խրատական արձակի ձևով զգացապաշտությունն ավելի վաղ արտահայտվեց արևմտահայ, քան արևելահայ գրականության մեջ: Կրոնա-դաստիարակչական արձակի այդ նմուշներն առանձին գրքերով դեռևս չէին տպագրվում, այլ սփռված էին ժամանակակից մամուլի էջերում: Դրա վառ օրինակներից են Յովհաննես Մամբրե Յիսարյանի «Խոսրով և Մաքրուհի» վեպը, որն էլ արևմտահայ առաջին վեպն է: Այն տպագրվել է Յ. Յիսարյանի խմբագրած «Բանասեր» ամսագրի էջերում 1851 թվականին: Չգացապաշտության գրական մեթոդով գրվել է նաև «Անկիծա սեր անպսակ» վերնագրով անավարտ գործը, որը պատկանում է Ն.Ս.Ն. ստորագրությամբ անհայտ հեղինակի գրչին:

Յ. Յիսարյանը XIX դարի 50-60-ական թվականների արևմտահայ հայտնի մտավորականներից է և յուրօրինակ ազդեցություն է ունեցել արևմտահայ նոր գրականության զարգացման գործում: Ծնվել է 1827թ. հունիսի 24-ին Կոստանդնուպոլսում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում:²³

Յ. Ասատուրի վկայությամբ⁵ եղել է Վենետիկի Ռաֆայելյան վարժարանի առաջին աշակերտներից մեկը: 1847 թվականին վերադարձել է Կ. Պոլիս և սկսել աշխատակցել «Յայաստան» պարբերականին: 1851 թվականից Յովհ. Յիսարյանի խմբագրությամբ շարունակաբար սկսել է տպագրվել «Բանասեր» ամսագիրը, սակայն նյութական բավարար միջոցներ չունենալու պատճառով 1852 թվականից դադարել է տպագրվելուց: 1859 թվականին Յիսարյանը փորձել է վերականգնել «Բանասերի» տպագրությունը, սակայն հաջողվել է լույս ընծայել միայն մեկ համար: Բացի խմբագրական աշխատանքից, արևմտահայ մի շարք մտավորականների նման, ողջ կյանքի ընթացքում զբաղվել է ուսուցչու-

թյամբ: Նա ոչ միայն պարապում էր պետական վարժարաններում, այլև հայերենի մասնավոր դասեր էր տալիս հայ հարուստ ընտանիքներում: Երկար տարիներ հայերեն է դասավանդել նաև թուրքական վարժարանում:

Ի. Անրի Գայոլ անունով մի ֆրանսիացու տպարանում էր տպագրվում «Բանասեր» ամսագիրը, որի փակվելուց հետո՝ 1852 թվականից Հիսարյանը գլխավոր խմբագիր է դառնում նույն տպարանում տպագրվող «Journal Asiatique de Constantinople» խորագրով մի թերթի: Շուտով, թողնելով այդ աշխատանքը, նա զբաղվում է միայն ուսուցչությամբ: Հ. Հիսարյանը մահացել է Կ.Պոլսում 1916թ. օգոստոսի 9-ին²³:

Նա գրել է հրապարակախոսական բնույթի հոդվածներ, վեպեր՝ «Նոսրով և Մաքրուհի», «Նեռն կամ կատարած աշխարհի», գրել է նաև «Դիվան որ է տաղարան» վերնագրով բանաստեղծությունների շարք, կատարել է թարգմանություններ, որոնցից ֆրանսիացի լուսավորիչ-վիպասան Բեռնարդեն դը Սեն-Պիեռի «Հնդկաստանի տնակը» պատմվածքը տպագրել է «Բանասեր»-ի էջերում:

Հ. Հիսարյանը լավատեսորեն համոզված էր, որ մեր ազգն այն ազգերից չէ «... որ երդում ըրած է աչքերը խփելու, որպեսզի չտեսնե լույսը, ու ականջը խցելու, որ չլսե»¹⁰:

Նա համոզված էր, որ այդչափ զարգացած և գրքի ու գրի հարգն իմացող ժողովրդի կյանքում որքան կարևոր է գեղարվեստական գրականության դերը, և պակաս կարևոր չէ այն լեզուն, որով այն մատուցվելու է ժողովրդին: Լինելով խիստ առաջադեմ մտածողության տեր՝ նա առանց երկմտելու իր հանդեսը հրատարակում է մաքուր աշխարհաբար լեզվով այն դեպքում, երբ Կենտրոնական Թուրքիայում բազմաթիվ հայ պարբերականների և գրականության լեզուն հայատառ թուրքերենն էր և գրաբարը¹⁸:

Չնայած աշխարհաբարի տարածման և կարևորության դերը գիտակցողներից առաջինը չէր Հիսարյանը (դեռևս 1846 թ-ին «Բազմավեպ»-ի էջերում այդ մասին գրել էր Արսեն Բագրատունին⁸), սակայն առաջին կիրառողներից էր աշխարհաբարը որպես վեպի լեզու: Բացի լեզվից Հիսարյանը կարևորում էր նաև մամուլում տպագրվող նյութերի թեման՝ այն պետք է անպայման շարժեր հասարակության հետաքրքրությունը և միևնույն ժամանակ զվարճություն պատճառեր: Սրանով էր ընթերցողը կապվելու գրականությանը, որը ազգի լուսավորության, դաստիարակության և ապագայի հիմքն էր լինելու: Կրթությունն ասելով Հիսարյանը ոչ միայն ի նկատի ուներ մտավորը, այլ որ

այս շրջանում, երբ սրվել էին կրոնական տարածայնությունները հայ լուսավորչականների և կաթոլիկների միջև^{18,24}, պակաս կարևոր չէր նաև հոգևոր կրթությունը: Որպես լուսավորիչ արձակագիրն էլ և գնում դեպի բնությունը, ապավինում նրա իմաստությամբ: «Բանասեր»-ի 1851 թ. տպագրված N 5-ի հոդվածներից մեկում գրում է. «... Ամեն գիրք մարդու արվեստն է, բայց բնությունը Աստծո արվեստն է»:¹¹

XIX դարի կեսին արևմտահայ լուսավորական գրականությանը բնորոշ էր կրոնա-բարոյախոսական բնույթը, որից հետագայում իր «Նեռն կամ կատարած աշխարհի» վեպում Հիսարյանը բոլորովին հրաժարվում է՝ տուրք տալով հետադիմական գաղափարապաշտությանը: Նա այլևս չի կարևորում նույնիսկ աշխարհաբարի դերը: Վիպագրության զարգացման ուղիներում Հիսարյանը հակվում է իրականության արտացոլման, մարդկային ապրումների ու զգացմունքների պատկերմանը, առօրյա անցուդարձերի գեղարվեստական բացահայտման որոնմանը: Զանի որ մեր գրականության մեջ դեռևս վիպական գործերի օրինակներ չի տեսնում, առաջարկում է ընդօրինակել եվրոպականին: Նա հստակորեն զանազանում է եվրոպական վիպասանության երեք տեսակ՝ առնչելով կամ նկարագրական, քաղաքական կամ իմաստասիրական և բարոյական: Այս երեք տեսակի վիպասանությունների հիմքն էլ սերն է: Այս մասին նա գրում է իր «Խոսրով և Մաքրուհի» վեպի առաջաբանում⁹:

1851 թ. «Բանասեր» ամսագրի էջերում տպագրված «Խոսրով և Մաքրուհի»-ն արևմտահայ առաջին վեպն է: Վերջինիս սյուժեն արկածային է: Այստեղ հաստատվում է ճակատագրի թելադրանքով կյանքի ընթացքի անփոփոխելիության գաղափարը, և ազատ կամքի ինդիքը դառնում է անուժ ու ավելորդ^{4,17}:

Ճակատագրապաշտության արդարացմանն էին հանգում նաև արևելահայ մի շարք հեղինակներ, որոնք առաջնորդվում էին այն խրատականով, թե չի կարելի չարություն անել, քանի որ այն հատուցվում է: Այսպիսին էր «Արարատ» շաբաթաթերթում⁶ տպագրված «Ոչ ոք չէ կարող նախասահմանության կարգը փոխել» խոսուև վերնագրով վեպը:

«Խոսրով և Մաքրուհի» վեպում ծավալվող գործողությունները բավականին խառն ու ավելի շատ երևակայական են, քան իրական: Վեպի գլխավոր հերոսների՝ Խոսրովի և Մաքրուհու միջև անկեղծ, հովվերգական սիրո ողբերգական վախճանն անխուսափելի է, որի դեմ, ըստ նրանց, պայքարելն անօգուտ է, քանզի նախախնամությամբ այդպես էր սահմանված:

Մաքրուիու հոր՝ պարոն Տիգրան Աստվածատուր Սիսակյանի համար ճակատագիրը երջանկություն չէր սահմանել: Ամուսնությունից 2 տարի անց Նա կորցնում է սիրած էակին: Չդիմանալով մեծ վշտին՝ Տիգրանը հիասթափվում է կյանքից, թողնում մարդկային հասարակությունը և փոքրիկ դստեր հետ գնում է ապրելու քաղաքից հեռու, բարձունքի վրա՝ Բոսֆորի հիասքանչ ափին, հրաշալի բնության գրկում կառուցված շքեղ ապարանքում: Հայրն ապրում է միայն դստեր համար, ոչինչ չի ինչայում նրան, սակայն Մաքրուիին կտրվում է մարդկանցից, հայկական միջավայրից: Նա եվրոպական կրթություն է ստանում, որն ըստ հեղինակի առաջադիմություն էր: Արձակագիրը Մաքրուիու կերպարի միջոցով փորձում է առաջ քաշել և որոշակիորեն լուծում տալ կանանց դաստիարակության, լուսավորության, կրթության և բարոյականության հարցերին: Մաքրուիին որքան էլ կրթված, սակայն կտրված է իրական կյանքից, Նա ապրում է գրքերի աշխարհում, նրան կյանքն անծանոթ է, ուստի դատարկ ու անիմաստ: Մաքրուիու կյանքին հակադրվում է Խոսրովի մանկությունը: Որբության պատճառով Նա դիմել է ամեն միջոցի: Շրջագայել է, շարունակ մաքառել գոյության համար: Նա եղել է շատ երկրներում, շփվել է տարբեր մարդկանց հետ: Հաղթահարել է բոլոր դժվարությունները բնածին խելքի ու ճարպկության շնորհիվ: Խոսրովը համակրելի է և պարկեշտ: Պատահական չէ, որ հարուստները օգնել են նրան կրթություն ստանալու: Նա հասել է գրեթե ամեն ինչի, սակայն որոշում է թափառել՝ հույս ունենալով սոցիալական անհավասարության, բռնության, շողոքորթության, կեղծիքի և այլ արատների պատճառը գտնել: Նա իր ինամակալ Պողոս բեյի նավով շրջագայում է Եվրոպայի, Ասիայի մի շարք երկրներով, իսկ վերադարձին նավը խորտակվում է, և նախախնամության համաձայն՝ ծովը նրան ափ է գցում, ուր գբոսնում էր Մաքրուիին: Վերջինս նրան տեսնելով՝ հիշում է տարիներ շարունակ երազում տեսած երիտասարդին, և նրանց համակրանքը փոխադարձվում է: Իմանալով այդ հիասքանչ սիրո մասին՝ Մաքրուիու հայրը հրճվելու փոխարեն տրտմում է: Ահա թե ինչ է պարզվում: Տիգրան Սիսակյանը մի եզրիպատացու օգնական էր, որը վստահում էր նրան ամեն ինչում: Եզրիպացի Րիզա բեյը, իմանալով Տիգրանի և իր սիրելի հայրիկի կապի մասին, սպանում է վերջինիս: Նույն բեյի զոհն էր նաև Տիգրանի կինը՝ Սոփիան, որին եզրիպացին տանում է իր հարեմը՝ Տիգրանի դավաճանության դիմաց վրեժխնդիր լինելու: Խոսրովը Րիզա բեյի և Սոփիայի որդին էր: Երբ եզրիպացին երկու կանանց էլ սպանում է, Տիգրանը վերցնում է աղջկան, իսկ տղա-

յին հանձնում է մի արտատիրոջ: Խայրիեն մահից առաջ խնդրում է Տիգրանին, որ իրենց աղջկա անունը ի նշան մաքուր սիրո դևի Մաքրուհի և կրթի, դաստիարակի, որպեսզի աղջիկը կյանքում առաջնորդվի միշտ սիրով, լինի զգացմունքներում ազատ, սիրի ում ցանկանա, բացի եգիպտացուց, որովհետև իրենց կործանողը եգիպտացի էր:

Մաքրուհին չի խախտում մոր կտակը: Խոսքովը, չդիմանալով սիրո մերժման վշտին, նետվում է ծովը, իսկ Մաքրուհին վշտի ծանրությունից ընկնում է անկողին և մեռնում՝ հավատացած լինելով ճակատագրի գոյությանը և մարդու չնչինությանը: Հերոսները նման են մտածելակերպով. երկուսն էլ խորշում են հասարակությունից և նախընտրում միայնություն բնության գրկում՝ ապավինելով նրան: Նույնիսկ Խոսքովն աշխարհի հնամենի քաղաքակրթության կոթողները դիտելիս չի սքանչանում կամ գնահատում գեղեցկությունը, այլ դրանցում ևս մարդկային փառասիրության հետքեր է նշմարում և էլ ավելի հիասթափվում: Մարդը միայն բնության գրկում է ազատ: Բնապաշտությունը հասնում է այն բարձրակետին, որ Հիսարյանի հերոսները հանգում են աստծո գաղափարին, որը և ստեղծել է ողջ բնությունը: Գրողն ընկնում է ճակատագրապաշտական նախապաշարումների և միստիցիզմի գիրկը: Վեպում հերոսները կրոնական նախապաշարումների զոհ են, նրանք որքան էլ կարևորում են ազատությունը, միևնույն է, իրենց սիրո համար պայքարել, երջանիկ լինել ի վիճակի չեն: Կյանքի ճանապարհին պատահած առաջին իսկ խոչընդոտից հիասթափվում են և փարվում հոգու անմահության գաղափարին: Իրական կյանքում չկա մշտական երջանկություն, մարդը կարող է մեկ կանգնած լինել փառքի գագաթնակետին, մեկ էլ գահավիժել անդունդ:

Հովհաննես Հիսարյանը, ստեղծելով արևմտահայ առաջին վեպը, հավանաբար ընդօրինակել է Սոֆոկլեսի «Եդիպոս արքա» ողբերգությանը²⁶, որտեղ գրվում է. «...Ով մահկանացու՛ և մարդ, սպասի՛ր կյանքիդ վերջին օրվան, մի՛ գովաբանի՛ր ճակատագիրդ, ոչ ոքի բախտավոր մի՛ համարի՛ր, մինչև գերեզման կիջնես առանց դառն վիշտ տեսնելու»⁴, ինչպես նաև Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպին, Կարամզևի «Դժբախտ Լիզա» վիպակին և համաշխարհային գրականության մի շարք այլ նմանատիպ հանրահայտ երկերի, սակայն կերպարները սոսկ արտաքին տառապանքով են նման: Հիսարյանը չի հասել սոցիալ-հոգեբանական խոր ընդհանրացումների: «Խոսքով և Մաքրուհի» վեպը դժվար է հայկական, ազգային կոչել, քանզի միայն անուններն են

հայկական, իսկ միջավայրը, խնդիրները, ասելիքը, անգամ մտածելակերպը օտար են: Բացակայում է կյանքի ճշմարտացի պատկերը, այն իր սահմանափակության պատճառով անգամ կարեկցանք չի առաջացնում ընթերցողի հոգում:

Վեպն ունի նաև դրական կողմեր: Հերոսները չնայած իրական միջավայրի ծնունդ չեն, սակայն բնական արարածներ են, կարող են խորհել, ունենալ զգացմունքներ, տառապել կյանքի հարվածներից, ինչ-որ տեղ չհամաձայնել ճակատագրի հետ: Այսքանն արդեն բավական էր, որ արևմտահայ արձակը դասականապաշտության մեջ մի քայլ առաջ գնար:

Վեպը հարուստ է նաև բնության պատկերներով, գեղեցիկ նկարագրություններով, որոնցով առավել տպավորիչ է դառնում հերոսների հուզաշխարհը: Այս ամենով հանդերձ վեպի ամենաբարձր արժանիքն աշխարհաբար լեզուն է:

Գրականություն և ծանոթագրություններ

1. Ալեքսանյան Ս. Գ., Հայ լուսավորական ռեալիզմը, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1980, Երևան:
2. Անանյան Ն. Վ., Արևմտահայ սենտիմենտալ վիպագրությունը և Հովհ. Հիսարյանը, Լրաբեր հաս. գիտ (ՀՍՍՀ ԳԱ), 1969, N 10, էջ 55-61:
3. Անանյան Ն. Վ., Արևմտահայ վիպագրություն, Երևան, ԳԱԱ հրատ.:
4. Առաքելյան Ա.Գ., Հունական գրականության պատմություն, Երևան, 1968, էջ 256-276
5. Ասատուր Հ., Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921թ.:
6. «Արարատ» պարբերական, 1850-1852թ., Թիֆլիս
7. Արփիարյան Ա., Պատմություն XIX դարու թուրքիո հայոց գրականության, Կահիրե, 1943թ.:
8. «Բազմավեպ», Վենետիկ, 1846թ., էջ 196
9. «Բանասեր» ամսագիր, 1851-1859 թթ., Կ. Պոլիս, «Խոսքով և Մաքրուհի» վեպ, Հ. Հիսարյան, 1851թ.
10. «Բանասեր», Նախաշավիղ, Կ. Պոլիս, 1951թ. էջ 8
11. «Բանասեր» N 5, «Ազգային բարօրություն», Կ. Պոլիս, էջ 226
12. Գյոթե, «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպը
13. Դանիելյան Ս., Արևմտահայ վեպի «Առօրեական ճանապարհները», (լրագիր), ՀՀ, 1994թ., 17 հունիսի:
14. Երևանի թատրոնի և կինոյի Պետական ինստիտուտ «Հանդես» N 10 (գիտական հոդվածների ժողովածու), Երևան,

2010թ.:

15. Լեո Ելժ, հ.3, 4, Երևան, 1984թ.
16. Կարամզին Ն. Մ., «Դժբախտ Լիզա» վիպակ
17. Կուն Ն., Յին Յունաստանի լեգենդներն ու առասպելները, Երեւան, 1979 թ.
18. Հայ նոր գրականության պատմություն, հ.1,2, Երևան, 1962թ.
19. Հիսարյան Մ. Յ., Դիվան որ Է տաղարան, Կ. Պոլիս, տպ. Մյուհենտիսյան, 1971, 20 սմ, մասն 1-74 էջ, մասն 2-75-127 էջ:
20. Հիսարյան Մ. Յ., Նեռն կամ կատարած աշխարհի, Կ. Պոլիս, տպագր. Արամյան, 1867թ., 17 սմ:
21. Ջրբաշյան Էդ., Սախչանյան Յ., Գրականագիտական բառարան, Երևան 1972թ.
22. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան 1980թ.
23. ՍՍՀ հանրագիտարան, հ. 6, Երևան 1980թ. էջ 423
24. Սարգսյան Ս., Ալիշան, Երևան 1978թ.
25. “Карамзин Н.М., Избранные статьи и письма, Современник, 1982г., ст.351
26. Софокл, Царь Эдип, Москва.

Կրոնական տարածայնությունները XIX դարասկզբի հայ գրականության մեջ /Ազապի/

19-րդ դարի սկզբին լուսավորչական և կաթոլիկական կրոնների միջև լարվածությունն ավելի է սրվում: Այս մռայլ օրերին կատարյալ ողբերգություն էր օտար երկնքի տակ ապրող, կրոնական հողի վրա մասնատված հայերի անհմաստ պայքարը միմյանց դեմ, որն, իհարկե, թշնամու սրտով էր: Ամենամանրախնդիր առօրեական անցքից մինչև ամենանշանակալի իրադարձություն կարող էր առիթ դառնալ վեճերի և անգամ կռվի: Կրոնական անհանդուրժողականությունը քաղաքական ասպարեզից



Հովսեփ Վարդանյան

թափանցել էր նաև բարեկամական մթնոլորտ, ազգակցական ու ընտանեկան միջավայր: Անգամ գերեզմանոցում տարբեր կրոնական ծիսերին պատկանող հանգուցյալներին թաղվելու տեղ չէին տալիս, միմյանց միջև չէին կայացնում ամուսնություններ:

19-րդ դարի կեսերից սկսած հայ կաթոլիկների մոլեռանդությունը այն աստիճանի է հասնում, որ նրանք իրենց հայ չէին համարում, այլ սոսկ կաթոլիկներ, իսկ գավառում կոչվում էին ֆրանկներ՝ այսինքն ֆրանսիացիներ, որը պատիվ էին համարում: Հայ ասելով հասկանում էին միայն լուսավորչական հայ:

1828 թ-ին անգլիական կառավարության միջամտությամբ, որը թրջական կառավարության հետ միասին վախենում է ֆրանսիական լրտեսական ցանցի մեծացումից, սուլթանական կառավարությունը հրատարակում է Սուլթան Մահմուդ Բ-ի հրովարտակը, ըստ որի Թուրքիայի սահմաններում ապրող բոլոր հայ կաթոլիկները դատապարտվում են աքսորի: Միայն Պոլսից տեղահանվում է 12000-ից ավելի մարդ: Հատկապես շատ ահավոր էր 1829 թ-ի դեկտեմբերի տեղահանությունը, որն ուղեկցվում էր լացով ու ողբով: Ցրտին ու սովին շատերը չէին դիմանում: Շուրջ 400 անմեղ երեխա իր մահկանացուն է կնքում այս մահվան ճանապարհին՝ անգամ գերեզմանի չարժանանալով անմարդաբնակ հեռաստաններում: Միայն 1830 թ-ի հունվարի 16-ին Սուլթան Մահմուդ Բ-ի հրովարտակով կաթոլիկներին ներում շնորհելուց հետո նրանք իրավունք են ստանում վերադառնալու իրենց նախկին բնակա-

վայրերը:

Կաթելիկների և լուսավորչականների պայքարը խիստ մտահոգում էր ժամանակի առաջադեմ մտավորականներին: Թեման իր արտահայտումն էր գտնում գեղարվեստական գրականության մեջ, որի ապացույցներից է 1851թ. տպագրված Յովսեփի Վարդանյանի թուրքերեն հայատառ «Ազապի հիքեայեսի» («Ազապիի պատմությունը») վեպը:

Վերջինիս հպանցիկ անդրադարձ է կատարել Միքայել Նալբանդյանն իր 1863-1864 թթ-ին գրած «Կրիտիկա Սոս և Վարդիթերի» նշանավոր հոդվածում: Նա ցավով է նշում, որ այդ վեպն ունենալով բարձր արժանիքներ, գուցե ավելի քան եվրոպական «ամենավոր վիպասանությունները», գրված է թրքերենով, և պոլսահայ հեղինակներն անգամ թարգմանում են Ալեքսանդր Դյումայի «Գոթակա մատուռը», սակայն այդ վեպը չեն փորձում հայացնել: «Մարգարեն, իր գավառի մեջ պատիվ չունի», - նշում է Նալբանդյանը և ավելացնում, - «Ավելորդ է ասել, որ միայն Տաճկաստանի առաջնակարգ հայ գրագետի բան է նորան թարգմանելը, չլինի թե ռուսիացի հայերը փորձ փորձեն»: Նալբանդյանը գուցե նկատի ուներ, որ վեպն արևմտահայերենով թարգմանվի՝ հավատարիմ մնալու համար միջավայրին, սակայն համարյա 100 տարի անհայտության մեջ մնալուց հետո միայն այն թարգմանեց Գ. Ստեփանյանն արևելահայ գրական լեզվով և ծավալուն առաջաբանով ու ծանոթություններով տպագրեց 1953 թ-ին, իսկ երկրորդ անգամ՝ 1979 թ-ին՝ արդեն հստակ նշելով նաև հեղինակի՝ Յովսեփ Վարդանյանի (1815թ. - 1879թ.) անունը: Վերջինս կաթոլիկական դավանանքին էր պատկանում, պետական պաշտոնյա էր, ուստի ոչ միայն «Ազապի» վեպի, այլև բազմաթիվ հրապարակախոսական հոդվածների և գեղարվեստական երկերի տակ չի նշել իր անունը, որպեսզի իրավական տեսակետից չեզոք երևա, քանզի ժամանակի սուր խնդիրների էր անդրադառնում: Միայն իր մահից հետո են մտերիմները իրավունք ստացել հիշատակել նրա անունը: Չնայած որ Յովսեփ Վարդանյանը տիրապետում էր մի շարք լեզուների, քաջ գիտեր նաև հայերեն և կարևորում էր նրա դերը ժողովրդի կյանքում և գրականության զարգացման մեջ, իր բազմաթիվ ու բազմաժանր երկերը գրել է թրքալեզու՝ տուրք տալով ժամանակի պահանջներին:

Թուրքիայի կենտրոնական մասերում ապրող արևմտահայերի լեզուն թուրքերեն էր: Անգամ գեղարվեստական երկերի և պարբերականների լեզուն հայերն էր, սակայն հայատառ էր: Հայերին պատկանող թուրքերեն հայատառ գրականության մեջ

միայն այն բառերը, որոնք ազգային և կրոնական գաղափարներ էին արտահայտում հայերեն էին օգտագործվում: «Ազգայի» վեպը տպագրվելուց անմիջապես հետո իրարամերժ կարծիքների է արժանացել: Չնայած, որ այն ամենաընթերցված վեպն էր իր ժամանակի, չի ընդունվել կաթոլիկների կողմից: Յատկապես վեպին թշնամանքով է վերաբերվել կաթոլիկ հայերի պատրիարք Անտոն Յատունյանը, որն էլ երևի վեպի Ֆասիդյանի կերպարում տեսել է իրեն: Նրա թշնամանքն այնքան է խորացել, որ իր իշխանության տակ գտնվող եկեղեցիներում հատուկ կոնդակ է ընթերցել տվել, որտեղ վեպը դիտվել է որպես երիտասարդությանը մոլորեցնող և անգամ կրոնական սկզբունքները ոտնահարող երկ:

Վեպը, որքան էլ թրջալեզու, գրված է հայերի համար և շոշափում է հայ կյանքի կարևոր անցքերը, որոնք սպառնում էին ազգի միաբանությանը, ուստի և ապագային: Այն ծավալուն չէ. 16 գլուխներից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ վերևագիր և նախորդի ու հաջորդի հետ սերտ կապ: Վեպում շատ են գործողությունները, երկխոսությունները, այն գրված է պարզ ու հասկանալի, որն էլ պատճառ է հանդիսացել, որ սիրվի ու շատ ընթերցվի, որքան էլ կաթոլիկներն այն վատաբանել են և անգամ արգելել տներում ունենալ:

Հովսեփ Վարդանյանը, լինելով ժամանակի առաջադեմ, զարգացած մտավորականներից, գիտակցում էր, որ ազգային դաստիարակության, միաբանության համար կարևոր է գեղարվեստական գրականության դերը, ուստի իր այս վեպով փորձել է ընդգծել կրոնական տարածայնությունների ու պառակտությունների հրեշավոր ազդեցությունն առանց այդ էլ օտարի տիրապետության տակ տանջվող տարաբախտ ժողովրդի կյանքում:

Վեպի կարևոր արժանիքներից է նաև կերպարներ կերտելու արվեստը: Նարնք բոլորն էլ համոզիչ են, հետաքրքիր և ներկայացնում են հասարակության գրեթե բոլոր շերտերի վարքը, կենցաղն ու մտավոր դաստիարակության աստիճանը: Դրանցից են՝ բարձր հոգևորական աստիճան ունեցող Ֆրանսիայից մինչև աղքատ ծառա Նիկոլն ու դայակ Անաթառամը, կրթված առաջադեմ Ազգային ու նրան հակառակ Նիկողոս աղայի կինը՝ տգետ ու սահմանափակ Վարդենի տատուն, ազնիվ ու նվիրված Մարկոս եղբորից մինչև խարդախ ու նենգ ձկնորս Յամբարձումը, կրթակիր թ ու զարգացած Յակոբից մինչև նրա հակապատկեր մանկամիտ ու թեթևաբարո Ռուբենիկ աղան, բախտախնդիր ու հարբեցող վարժապետ Բառնիկն ու աղքատ, անգրագետ, բայց իր իրավունքները ճանաչող Սոֆին:

Վեպի կենտրանական հերոսներն են կաթոլիկ Վիչեն աղայի որդի Յակոբը և լուսավորչական Բաղդասար աղայի եղբոր դուստրը՝ Ագապին, որոնց շուրջն էլ ծավալվում են գործողությունները: Նարնք երկուսն էլ զարգացած են, կրթված: Յակոբն ամենայն հավանականությամբ «Յամազգյաց» ընկերության համախոհներից է, որն ակնարկում է վեպում Ֆասինդյանը, իսկ Ագապին սովորել է դաշնամուր նվագել և ֆրանսերեն կրթություն է ստացել, սակայն չի խորշում հայկականից: Նրանց սերը փոխադարձ է, պատրաստ են իրենց կյանքը զոհաբերելու մեկ-մեկու համար: Նրանք իրենց առաջադիմական հայացքներով համախոհ են, սակայն իրականությունը ճիշտ ընկալելով՝ կասկածում են իրենց երջանիկ լինելուն: «Մեր դավանանքների միջև եղած տարբերությունը, մեր ժողովրդի մեջ եղած անիմաստ ու շատ ծանր հետևանքներով հղի անմիաբանությունն այնպիսի հզոր հեևարաններ ունի, որոնցից պետք է շատ վախենալ»:

Այդ բռնի ուժը հակառակ է լուսավորության, միաբանության ու սիրո և իր տգիտությամբ, թշնամանքով մարդկային հասարակությանն առել է իր կրակի տակ: Այդ վատագույն ուժերի իրական դեմքն է Ֆասինդյանը, որն իր բոլոր չար գործերը քաղարկում է աստծո անվան տակ, իբրև թե նրան «հաճելի լինելու համար»: Իր հավատի մեջ ոչ այնքան մոլեռանդ Վիչեն աղային սուտ սրտացավությամբ խորհուրդ է տալիս. «Աշխարհի բոլոր բաները դատարկ են, կարևորն այն է, որ հանդերձյալ կյանքում լավ լինի, երբ կփրկես որդուդ հոգին, նոր միայն կարող ես համոզված լինել, որ կատարել ես հայրական պարտականությունները»:

Յետադեմ, սահմանափակ ու սնափառ գաղափարականների շարքը լրացնում են կաթոլիկ ու լուսավորչական հակամարտ թևերի ներկայացուցիչներ Բաղդասար, Անտոն, Սարգիս, Նիկողոս աղաները, ձկնորս Յամբարձումը:

Վեպում առաջին անգամ արևմտահայ գրականության մեջ ուշադրության է արժանացել նաև կանանց ազատության, ինքնուրույնության հարցերը:

Մեծ մասամբ ամուսնությունները կայանում էին փոխադարձ շահ ունենալով և սիրո վրա չէին հենված: Խնդիր էր կանանց տարիքով մեծ լինելն ամուսիններից. նման կերպար էր Վարդենի տատուն: Ամուսինների մեծ մասը սիրային ժամանց էր փնտրում ընտանիքից դուրս՝ համարելով այն բնական ու գրեթե բոլորի կողմից ընդունված սովորույթ: Դժբախտ ամուսնական զույգեր են Սոֆին ու Յամբարձումը, Աննան ու Պողոսը, դժբախտ են լինելու նաև Ֆուլիկն ու Ռուբենիկը, որովհետև վերջինս «պսակի ուժով

իբր թե տեր դարձավ Ֆուլիկին»։ Երգանիկ կարող էր լինել միայն այն ընտանիքը, որն հիմնվելու էր սիրո և փոխըմբռնման վրա, սակայն Հակոբի ու Ազապիի սերը ևս կործանվեց. Ազապին ինքնասպան եղավ՝ թունավորելով իրեն, իսկ Հակոբը ծանր ապրումներից մահացավ, որովհետև կրոնական շղարշի տակ թաքնված չարանեղ անհանդուրժողականությունը չէր կարող ընդունել առաջադիմական ոչինչ։

Վեպում պատմական դեպքերով ու դրանց վերաբերյալ առողջ դատողություններով հագեցված է «Տիկին Աննա» վերնագրով XII գլուխը։ Այստեղ հեղինակը դժբախտ կնոջ՝ Աննայի կյանքի պատմությանը զուգընթաց ներկայացնում է կաթոլիկների տեղահանությունն ու լուսավորչականների տարածայնությունները, սակայն համոզված է, որ եթե միավորվեն հայոց բոլոր առաջադեմ ուժերը, ապա ոչ մի թշնամի չի կարող ընկճել նրանց։ Աննայի հոր՝ Գրիգոր աղայի և Պողոսի միջև կրոնական հողի վրա ոչ մի վեճ չէր առաջացել և նրանք համերաշխ էին ու միաբան։ «Ընդհակառակը, երբ ուրիշները այդպիսի պատճառներով թշնամանում էին միմյանց հետ, զարմանում էին և համարում տգիտության արդյունք», - հիշում է տիկին Աննա։

Ոչ միայն Հովսեփ Վարդանյանը, այլև ժամանակի մի շարք առաջադեմ մտավորականներ տոգորված էին ազգային համերաշխության գաղափարներով, որն էլ լինելու էր ազգի պահպանման արհավատչյան։

Մեկտեղ հոգևիք, մեկտեղ ցանեք,
Մեկտեղ թափեք մեր քրտինքներ,
Ըզիունձ բարյաց յերկինս հանեք,
Որ կյանք առնուն հայոց դաշտեր։
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Զան զանձկալի եղբայր անուն։

Սկրտիչ Պեշիկթաշլյան


Օգտագործված գրականություն

1. Հովսեփ Վարդանյան «Ազապի», Երևան, 1953թ.։
2. Լեո ԵԼԺ, հ. 3, 4, Երևան, 1984թ.։
3. Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, 2, Երևան, 1962թ.։
4. Ս. Սարգսյան, Ալիշան, Երևան, 1978թ.։
5. Ս. Նալբանդյան, ԵԼԺ հ. 4, Երևան, 1984թ.։
6. Ս. Պեշիկթաշլյան, Բանաստեղծություններ։

Հայոց գրերը և Մեսրոպ Մաշտոցի կերպարը հայ ժամանակակից գրականության մեջ

Քեզ ծնեց ազգս,
Որ անմահության առջևից գևար,
Քեզ ծնեց ազգս,
Որ նենգ սրի տեղ
Ունենար արև ու պայծառ քնար ...
/Լ.Դուրյան/

Մեսրոպ Մաշտոցի կերպարը և հայոց գրերի սրբազան գյուտը մեր հոգևոր մշակույթի մշտամա թեմաներից են: Սրանցով է սկզբնավորվել մեր ինքնուրույն գրականությունը, որի առաջին նմուշը Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանն է: Այս թեմաները չեն հնանում, ինչպես չեն հնանում ժողովրդի երազներն ու վառ հույսերը, մաքառման ոգին ու ապրելու կորովը:



Մեսրոպ Մաշտոց

Մաշտոցի կերպարի և հայ գրերի շուրջ տարբեր դարաշրջաններում հյուսվել են նաև ավանդություններ, բանավոր ստեղծագործություններ, որոնց մի մասի հեղինակը ժողովուրդն է, մյուս մասինը՝ անհատ հեղինակներ: Ավանդություններում և հին ու միջին դարերի մի շարք ստեղծագործություններում Մաշտոցի կերպարը հանդես է գալիս իբրև հրաշագործ, գերբնական մեկը: Ոչ միայն հայոց եկեղեցին, այլ նաև ժողովուրդը Մաշտոցին դասել է սրբերի կարգին ու երկրպագել նրան: Բոլոր դարաշրջաններում էլ կարևորվել է գրերի գյուտի նշանակությունը և գնահատվել ըստ արժանվույն: Սովսես Խորենացին այսպես է բնութագրել ուսուցչապետին. «Մտքով՝ ստեղծող, խոսքերով՝ պայծառ, գործերով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սովորեցնելու մեջ չձանձրացող»...

Մաշտոցի այբուբենը նաև ժամանակակից գրականության հիմնական թեմաներից է: Հատկապես սերնդի հայրենասիրական դաստիարակության, լեզվի և մշակույթի պահպանման, ազգի գոյապայքարի ամենաոգևորիչ խթաններից է այն: Սիրո և արդարացված հպարտության հզոր տարերք կա մի շարք գրողների ստեղծագործություններում: Թեմային սիրով անդրադարձել

են Պարույր Սևակը, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Համո Սահյանը, ավելի ուշ՝ Ռաֆայել Ղազանչյանը, Լյուդվիգ Դուրյանը, Հովհաննես Մելքոնյանը, Մուշեղ Գալշոյանը, Մետաքսեն, Սուրեն Մուրադյանը, Յուրի Սահակյանը, Պատվական Խաչատրյանը և շատ ուրիշներ:

Գևորգ Էմինի հայրենասիրական խոհերում Մաշտոցն ու հայ գրերն ունեն իրենց փառապանծ տեղը: Դրանցից հատկապես «Մեր այբուբենը» բանաստեղծությունը խտացնում է հեղինակի ակնածանքը գրերի գյուտի հանդեպ: Այս բանաստեղծությունը Գևորգ Էմինի հայրենասիրական քնարերգության ամենահաջողված էջերից է, ինչո՞ւ չէ նաև լավագույններից մեկը հայոց գրերին նվիրված բազում երկերի շարքում:

Այբուբեն չէ սա՝
Բերդ է անմատույց,
Գանձ է աննվաճ,
Դուռ է փրկության,
Ելք, երբ հույս չկա,
Չարթոնքի նվագ
Էությունն է մեր,
Ընթացքն ու ուղին,
Թագ ու զորավար,
Ժողովող մի կանչ,
Իմաստուն խորհուրդ
Լինելու հնար:

Այս թեմայով են գրված նաև Գ.Էմինի «Մեր դպրության Արարատ լեռը», «Անմահ Մաշտոցը», «Տոն, որ միշտ մեզ հետ է» ստեղծագործությունները և նաև մի շարք հրապարակախոսական հոդվածներ, էսսեներ: Հայոց գրերի՝ հայոց ոգեղեն ուժի հրաշալի անդրադարձ կա նաև «Յոթ երգ Հայաստանի մասին» էսսեում: Այստեղ Հայոց պատմության պատմական ուղին ու ճակատագիրը ներկայացնող յոթ խորհրդանիշների շարքում /դար, քար, ջուր, հող, հուր, գիր, երգ/ իր աներկբա տեղն ունեն գիրն ու երգը, որոնցով էլ ապրել է ու հարատևել է հայը:

Մետաքսեի «ճստիկ» կոչված հերոսներից մեկը քաջ գիտակցում է այդ: Նա Մաշտոցին արժանի հետևորդ է, ուստի ոգևորված արտասանում է.

Քո տառերի լույսը պես-պես
Ուժ է տալիս հոգուս այնպես...

... Որ սիրասուն հողս հայոց
Աչքիս նման պահեմ անխոց,
Քեզ պես սիրեմ ազգս Հայկյան,
Պաշտեմ տունը մեր Հայաստան...

Բավականին ինքնատիպ է ու հետաքրքիր արձակագիր Մուշեղ Գալշոյանի ստեղծագործություններում հեռվում մնացած հայրենի «Էրզրի» թեման: Այն կարոտի երգ է, հավատի երգ: Հավատ այն բանի, որ քանի կա հայը իր հիշողությամբ, գրով, հոգով ու սրտով, չի խամրելու երազանքը լուսաշող ապագայի մասին: Գալշոյանի «Մամփրե արքա» պատմվածքում մեր հոգևոր ժառանգության կենսարար, ապրեցնող ուժն է, որում էլ ամբարված է ժողովրդի արդար պայքարն ու ապրելու գաղտնիքը: Այբուբենի տառերը մեր պաշտպան գինվորներն են, մեր գոյության առհավատչյան. «Քանզի սուրբ Մաշտոցն է իր սրտից հանել ի յույս»: Հայոց գրերի ասքը շարունակվում է. ութսունամյա Մամփրեն թռնուհու օգնությամբ սովորում է գրել: Յուրաքանչյուր տառ առանձին ճակատագիր ունի, որը ձուլվում է ժողովրդին ու հողին: Մամփրեն Մաշտոցի գրերի գաղտնիքը մեկնում է յուրովի, որը համընկնում է ժողովրդի մտածողությանը: «Մաշտոցի գրերը գինվորներն են... Գեղեցկադեմ, մաքուր, զուլալ և արի գինվորներ... Հայոց երկրի թշնամոց դեմ կռվող հերոս գինվորներ... Իսկ թագավորը Մամփրեն է, այսինքն՝ նա, ով այդ գինվորներն ունի իր հրամանի տակ և նրանց կառնիվ է տանում՝ հանուն հայրենիքի, հանուն արդարության, հանուն ճշմարտության, հանուն գեղեցիկի...»:

Հայոց գրերը սովորելը Մամփրեի համար ծերունական կամակորություն չէ կամ գրագետ դառնալու ձգտում, այլ պայքարի շարունակություն է «Էրզրի» խլող թալանչի Օսմանի դեմ: Գիրը Մամփրեի համար գինվոր-ասպետ է, որը դեմ է բոլոր կարգի կեղծիքներին: «Ամեն հացակեր հայոց գրերի գլխին հարկ չէ, որ արքա դառնա»: Ուրեմն գիր սովորելուն էլ պետք է արժանի լինել, որովհետև այն սուտ գիր չէ, այլ ազգի պատմություն, դարերի քննություն բռնած, բազում փորձություններ հաղթահարած նախնիների ավանդ ու նաև հաղթանակի վկայագիր: «Մամփրե արքա» պատմվածքը հայրենիքի, մեր լեզվի ու սուրբ գրի անմահության օրհներգ է, հարատևության հերոսական ասք:

Նման մի հերոսապատում է Ռաֆայել Ղազանչյանի «Այբուբենի վերջին տառը» պատմվածքը: Ուսուցիչը սովորեցնում է հայոց այբուբենը: Տառերը սաղավարտավոր գինվորներ են, որոնք

հերթական շարվել են՝ Այբ, Բեն, Գիմ, Դա... Թուրք ասկյարները ներխուժում են դպրոց, երբ հերթը «Զ»-ին էր: Վիրավոր ուսուցիչն աշակերտի մատը թաթախում է իր արյան մեջ ու գրում վերջին տառը՝ սովորեցնելով «բաջ» բառը:

Խիստ հուզիչ ու ուշագրավ է Հովհաննես Մելքոնյանի «Այբուբենը արորի վրա» պատմվածքը: Անօրեն թուրքերը կտրում են Մաճկալ Բղարի լեզուն՝ մտածելով, թե կմեռնի հայերենը: Սակայն Բղարն արորի վրա փորագրում է հայոց գրերը և սովորեցնում իր արաբախոս Շավարշ որդուն: Մաճկալ Բղարի և հերոս նախնիների պատվիրանն է սերունդներին՝ թշնամուն հաղթեն նաև գրով, պահպանեն մեսրոպատառը սրբորեն, և այն զինվորի պես կպաշտպանի մեզ օտարվելուց:

Մաշտոցին և այբուբենին նվիրված բազմաթիվ հաջողված ստեղծագործությունների շարքում /Սուրեն Մուրադյանի «Հանելուկներով այբուբեն», Պատվական Խաչատրյանի «Ասք Մաշտոցի մասին», Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից», Գուրգեն Գաբրիելյանի «Այբուբեն երգերի մեջ» և այլն/ առանձնացնենք Լյուդվիգ Դուրյանի «Մաշտոց» պոեմը: Ա - նախերգանքից մինչև Զ վերջերգը ներկայացվում են հայոց 36 տառ-զինվորյալները, որոնցով էլ ապահովվել է հայերիս գոյությունը: Դարերի խորքից են գալիս 36 կտրիճ զինվորները և գնում են «դարահողով ճանապարհով, որ սկիզբ ունի, սակայն չունի վերջ»:

Պոեմի վերջերգը հնչում է որպես Մեսրոպ Մաշտոցի կերպարն ամբողջացնող ձոն:

Դու մի անուն չես Մաշտոց անունով,
Դու ամբողջ ազգ ես լցված անհունով,
Դու սփռված սեր, երդում անկատար,
Դու սխրանքների սերումով հարուստ,
Դու քո տառերով կառուցված տաճար,
Դու մեր արյունը մաքրելու պատճառ...
... Դու ամեն հայի պահապան ծնող,
... Դու հար ուսուցիչ, մենք հար աշակերտ:
(Լ. Դուրյան)

Հովհաննես Թումանյանը հրապարակագիր


Յուրաքանչյուր ժողովրդի հասուն գրականություն ունի իր համար եզակի գրական խորհրդանիշ-գրողներ, որոնց վաստակը ժամանակի հետ չի հնանում: Որքան հեռանում ենք նրանցից, լույսի նման ավելի են պայծառանում ու որոշակի դառնում՝ տեսանելի դարձնելով նաև գրական այն միջավայրը, որտեղ ձևավորվել ու զարգացել են իրենք:

Սեփական ժողովրդի կենսագրությունից մեզ հայտնի հասարակական, սոցիալական, պատմական պայմանները պիտի որ երկնեին այնպիսի մեկին, ինչպիսին միայն Թումանյանը կարող էր լինել, ուստի նրա հայտնությունը հայ գրականության, ինչո՞ւ չէ, նաև հասարակական կյանքում պատճառաբանված էր ու սպասված:

Մեզնից ամեն մեկը Թումանյանի ստեղծագործության մեջ ճանաչեց իրեն, վերհիշեց ազգային անցյալը, տեսավ տխուր ներկան, հավատաց վաղվա օրվան:

Երանություն էր խոստացել հույսս ինձ,
Սակայան չգտա նրան կյանքի մեջ,
Բայց չեմ վիատել, անսպառ մեկ իղձ
Դեռ ինձ մղում է դեպ հառաջ անվերջ:
Հառա՛ջ, կռվելով, և կգա մի օր,
Որ կընկնի ներկան վատշվեր, դաժան,
Նրա ավերի վրա փառավոր
Ապագան լուսո կըկանգնի նշան:¹

Բավականին ծանր ու հակասական էր հայ ժողովրդի վիճակը Թումանյանին բաժին ընկած ժամանակահատվածում: Մի կողմից պետականություն չունեցող և անգամ հայոց եկեղեցու իշխանությունն ու իրավունքներն աստիճանաբար կորցնող մղձավանջային մթնոլորտ, մյուս կողմից, սրան հակառակ, սոցիալ-քաղաքական ակնառու փոփոխություններ ու ազգային բուռն զարթոնք:



Հովհաննես Թումանյան

1 Հովհ. Թումանյան, Բանաստեղծություններ, Զառյակներ, Երևան, 2009, էջ 10:

Ամենուր հակադրություն էր, ամենուր՝ պայքար: Իրար էին բախվում ազգային հույսերն ու հիասթափությունները, խորանուր էր անդունդը վայելքների ու անկումների միջև, շարունակաբար էլևեջում էին պայքարն ու պարտությունը: Եվ շատ բնական է, որ այս թոհուբոհում ծնվեց Թումանյանի նման մեկը, ով հայրենիքի երգիչը լինելուց գատ ունեցավ քաղաքացիական քաջություն՝ վտանգի պահին ազգային շահի պաշտպանների շարքում կանգնելու:

Հայրենիքի բանաստեղծից հայրենիքի զինվորի վերափոխված Մեծն Լուռեցին դիմում է հայրենակիցներին. «Ձեզ է ապավինել հայ փախստական ժողովուրդը, և ամեն տեղից ձեզ է նայում հայ ազգի աչքը: Հավաքվեցե՛ք մեր մութ անտառների նման, կանգնեցե՛ք անսասան մեր սարերի նման, կրակ թափեցե՛ք և գարկեցե՛ք մեր սարերի կայծակների նման: Թո՛ղ թշնամին էլ տեսնի, աշխարհքն էլ, որ կարելի է Երզրումի վրայից էլ անցնել, Ղարսի վրայից էլ, բայց Լուռու սարերից անցնել չի կարելի»:²

Թումանյանն այն մեծություններից էր, որ լինելով տաղանդաշատ քնարերգու և օժտված արձակագիր, չառանձնացավ իր ստեղծագործական աշխարհում, չմնաց սոսկ մուսայի գերի, այլ դարձավ հայրենիքի համար պայքարող մարտիկ՝ իր հանրային հայտնի գործունեությամբ, հրապարակախոսական խոսքով՝ առաջամարտիկի կամքով վստահեցնելով, որ հայրենիքին պիտանի լինելուց առավել պարզև չկա ճշմարիտ բանաստեղծի համար:

Հովհաննես Թումանյանի համար հայրենասիրական գործունեության կարևորագույն մասը կազմում է հրապարակագրությունը: Նրան խիստ հուզում էին հասարակական-քաղաքական կյանքի հարցերը, որոնց ավելի շատ անդրադարձավ տասական թվականներին՝ գրելով հարյուրավոր գրական-հրապարակախոսական հոդվածներ ու տպագրելով ժամանակակից մամուլի էջերում: Այս երկերը շոշափում էին բազմաթիվ խնդիրներ, որոնցով մտահոգված էր մեծ բանաստեղծը: Դրանք վերաբերվում էին մամուլին, դպրոցին, դաստիարակությանը, ժողովրդի պատմական ճակատագրին ու գրականությանը, քաղաքական, մշակութային ինքնուրույնության իրավունքին: Այս երկերում հեղինակը գեղարվեստական պատկերավորման հարուստ միջոցներով ոչ միայն ներկայացնում է հասարակական-քաղաքական կյանքի որոշակի խնդիրներ, այլև առաջ է քաշում գրական-փիլիսոփայական հարցադրումներ: Թումանյանի հրապարակախոսական երկերը, գրողի ոճին համապատասխան, ողողված են գեղարվեստական շնչով,

2 Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ.7, Երևան, 1995, էջ 354:

որից էլ շարադրանքը դարձել է հուզական ու առավել տպավորիչ: Ժամանակակից մամուլին նվիրված բազմաթիվ հոդվածների հեղինակ է Թումանյանը («Կեղտոտ մամուլ», «Ամսագրի կարիքը», «Արգելքներ», «Մեր մամուլն ու իր ընթերցողները», «Ընդդիմախոսություն», «Մեր գրական վարք ու բարքից», «Մի երկու խորհուրդ մեր գավառական մամուլին» և այլն):

1896 թվականին գրված «Արգելքներ» հոդվածում Թումանյանն արդրադառնում է «Մշակի» թիվ 104-ի առաջնորդող հոդվածին՝ «Արգելքներ կյանքի մեջ» վերնագրով: Յեղինակը ցավով է նշում, որ ամեն օր մեր կյանքում առնչվում ենք գաղափարի և իրական կյանքի անհաշտություններին, ծրագրերի ու դրանց գործադրության հակասություններին: Չնայած հաճախ առաջադեմ, ուսյալ կոչվածները բողոքում են «անկարգության վնասակարությունից», անարդարությունից, կաշառակերությունից, սակայն անմեղ ձևանալով, ոչ թե պայքարում են ազաի քահանաների ու տանուտերերի դեմ, այլ իրենք էլ են ենթարկվում նրանց տգետ ու դաժան օրենքներին: Երևի թե կաշառք տվողը պակաս մեղավոր չէ վերցնողից, գուցե նրանից էլ առավել է, քանզի, եթե երկրորդը չի ընդունում իր մեղքը, ապա առաջինը համոզված է, որ անարդար է, շեղվում է օրենքից, սակայն կանգ չի առնում: Երկի մեջ վարժապետն ընդամենը բավարարվում է գյուղացուն խղճալով. ուրիշ ոչինչ: Թումանյանը գտնում է, որ առաջադեմ կյանքի բնականոն ընթացքի առաջին արգելքը հենց սա է:

Հրապարակագիրը բազմիցս անդրադարձել է «Մշակ», «Մուրճ», «Սուրհանդակ», «Լույս», «Հորիզոն», «Նոր-դար» և մի շարք այլ պարբերականներում տպագրված նյութերին, դիպուկ քննադատել, մեկնաբանել դրանք: Այդուհանդերձ, Թումանյանը հավատացած էր, որ գավառական թերթերը ահագին գործ կարող են կատարել ի նպաստ առաջադիմության: «Ձեր էջերում մշտական տեղ հատկացրեք հայրենի երկրի ժողովրդական բանավոր գրականությանը, նրա ամեն տեսակ ավանդություններին, հեքիաթներին, առակներին, առածներին, հավատալիքներին, սովորություններին, և ապագա սերունդը, մանավանդ գրականությունը, շնորհակալ կլինի»:³

3 Հովհ. Թումանյան, Քննադատություն և հրապարակախոսություն, հ. 4, մի երկու խորհուրդ մեր գավառական մամուլին, Երևան, 1969, էջ 85:

Մի շարք հողվածներում⁴ Թումանյանը բավականին բարձր, հիրավի, ըստ արժանավույն է գնահատել հայ մեծերին՝ Նահապետ Զուլպակին, Սայաթ-Նովային, Րաֆֆուն, Խաչատուր Աբովյանին, Ղևոնդ Ալիշանին, Մկրտիչ Պեշիկթաշյանին, Գամառ-Քաթիպային, Ծերենցին, Գաբրիել Սունդուկյանին, Ալեքսանդր Շիրվանզադեին և մի շարք այլ անվանի գրողների: «Մեր գրական վարք ու բարքից»⁵ հողվածում, գրված 1899 թվին, հողվածագիրը հերքում է «Նոր-դարի» էջերում սպրդած այն անհիմն միտքը, թե մեր նշանավոր գրողները միայն հայի վատ կողմերն են ներկայացնում, որով հիասթափեցնում են ազգին և պախարակում այլոց աչքերում: Թումանյանը, հակադրվելով այդ մտքին, ցույց է տալիս մեր գրականության մարդասիրական, ազգափրկիչ դեմքը: «Մեր գրողները ի ծնե կոչված են գործերի ներքին իմաստը թափանցելու, սրտերի գաղտնիքը կարդալու և այնտեղից խոսելու ժողովրդի հետ»:

Մեծերի կողքին Թումանյանը գնահատում է նաև երիտասարդ հեղինակների մուտքը և հորդորում «գրականություն սիրող ու հասկացող անհատներին»⁶ հովանավորել նրանց տևտեսապես, որով և նրանք կխրախուսվեն նաև ստեղծագործական կյանքում: Թումանյանը կոչ է անում հայ գրողներին համախմբվել և իրենց տաղանդն ի սպաս դնել ազգի բարօրությանը:

«Գուցե մոտիկ է օրը, երբ հայ մարդը, որ երեկ-մյուս օրը եկեղեցու շուրջն էր պատվում, այնուհետև անցավ ուսումնարան, գալու է հասկի և գրականությանն ու արվեստին»:⁷

«Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» ծավալուն հողվածում Յովի. Թումանյանը գրում է. «Գրականություն ունենալու համար ժողովուրդները պետք է ոչինչ չխնայեն, և նույնիսկ պաշտպանելու դեպքում էլ լավ իմանան, որ իրենց պահածներից ու պաշտածներից տասնից մինն է միջակ գրող դուրս գալու, հարյուրից մինը տաղանդավոր և հազարից մեկը՝ հանճարեղ»:⁸

Բացի դպրոցի, գրականության ու կրթության հարցերի քննությունը, Թումանյանի հրապարակախոսական միտքը ծավալվում

4 Նույն տեղում, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները, էջ 35, 2. Աղայանց, էջ 49, Վիրավորական հարգանք, էջ 57, Ուղղված «Վերք Յայաստանին», էջ 92, Շիրվանզադեի հոբելյանը, էջ 118, Սայաթ-Նովայի շիրիմը, էջ 158:

5 Նույն տեղում, «Մեր գրական վարք ու բարքից», էջ 32:

6 Նույն տեղում, «Յայ գրողներին», էջ 122:

7 Նույն տեղում, «Նորերի համար», էջ 114:

8 Նույն տեղում, էջ 254:

Է նաև ազգային անցյալի ու ներկայի շուրջ:

«Չայկական հարցն ու իր լուծումը», «Փորձիչ», «Անգիտակից թշնամիներ», «Դեպի մեծ կյանք», «Պայծառ Էջեր»⁹ և մի շարք այլ հոդվածներում Թումանյանն ընդգծում է հարևան ազգերի հետ համագործակցության անհրաժեշտությունը՝ հատկապես կարևորելով հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը որպես փրկության ամենամոտ ու հավանական ճանապարհ:

Յումանիստ բանաստեղծն իր ողջ կյանքում ժողովուրդների խաղաղության, ազգերի եղբայրության և հավասարության համար պայքարող մարտիկ էր: Նա գտնում էր, որ ազգերին լավ ճանաչելու, նրանց միջև փոխադարձ սեր ու հարգանք ստեղծելու համար ավելի ազնիվ հող ու ավելի մեծ կապ չի կարող լինել, քան գրականությունն է:

Ամենայն Չայոց բանաստեղծի բոլոր երկերում իշխում է ժողովրդական իմաստության հանճարեղ պարզությունը: Նրա ստեղծագործությունները, նույնիսկ զանազան առօրեական խնդիրների մասին խոսելիս, երբեք չեն կորցնում իրենց թարմությունն ու արդիականությունը, ուստի մեր սերունդը դեռ շատ բան ունի սովորելու նրանից:

9 Չովի. Թումանյան, հ. 4, Զննադատություն և հրապարակախոսություն, Երևան, 1969:

Խեղված ճակատագրեր

Անհատի պաշտամունքի տարիները, հատկապես 1937 թվականը, հայ ժողովրդի համար դարձավ ոճրալի: Այս նոր եղեռնի գոհեր դարձան բազմաթիվ մտավորականներ: Վտանգավոր էր ժամանակաշրջանը, յուրաքանչյուր խոսք, միտք, անգամ լռություն կարող էր մեկնաբանվել իշխանությունների դեմ ու դատապարտվել: Այդ տարիների գրական պայքարը դուրս եկավ իր սահմաններից և ընդունեց քաղաքական բնույթ՝ ողբերգական հետևանքներով: Բոլշևիկների հետապնդումներից կարողանում էին խուսափել միայն նրանք, ովքեր ենթարկվում էին իշխողների կամքին և ապրում նրանց սկզբունքներով:

Տաղանդի գնահատման չափանիշն իշխանություններին հնազանդվելու չափն էր: Այդ տարիներին ողբերգական ճակատագրերի արժանացած գրողներից էին Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Կարեն Միքայելյանը, Վահան Թոթովենցը, Գուրգեն Մահարին, Վաղարշակ Նորենցը, Լեռ Կամսարը, Վահրամ Ալազանը, Չապել Եսայանը, Մկրտիչ Արմենը, Բոգդան Ջանյանը և շատ ուրիշներ:

Նրանք՝ այնքան տարբեր ու այնքան նման. բոլորն էլ դատապարտվեցին որպես «ժողովրդի թշնամի» և տանջանքների ու նվաստացումների ենթարկվելով՝ կա՛մ սառնասրտորեն գնդակահարվեցին, կա՛մ աքսորի տաժանակիր տարիներ անցկացրին հայրենիքից հեռու՝ անծայրածիր սիբիրյան ճամբարներում: Կարմիր սատանայի ոճիրը չէր սահմանափակվում մարդկային կորուստներով ու անձնական նվաստացմամբ, այլ շատ ավելի հեռուն էր գնում, կալանավորվում և արգելվում էին բազմաթիվ ձեռագրեր և անգամ վաղուց տպագրված գրքեր: Երկիրն ամայանում էր: Ամայանում էր նաև մարդկային միտքը, ու ոգու սովն էր սպառնում ամենուր: Բոլշևիկյան կարմիր սատանայի հրեշավոր ուրվականը սպառնում էր լուսավոր ու պայծառ ապագայի երազանքին անգամ:

Ստալինի մահից հետո վերանայվեցին այս հեղինակների գործերը և նոր լույսով մեկնաբանվեցին, սակայն այն, ինչը որ ժամանակն էր արել՝ կորստի մատնելով նրանց երիտասարդությունն ու առողջությունը, հաճախ նաև կյանքը, անվերագտնելի են:

Հայ գրականության մեջ պայծառ ու հուշիկ մի անունն է Վահան Թոթովենցը:

«Ծիրանագույն վերջալույս փայփայած» այս գրողի մայրամուտն, ավա՛ղ, մռայլ էր ու ողբերգական: 1937 թվականի դեկտեմբերի ութին բազմաթիվ նվաստացումներով ու խոշտանգումներով

ընթացող հետաքննությունն ավարտվեց՝ նրան անհիմն մեղադրելով անգլիական հետախուզության հետ համագործակցելու, գրական ճակատում իբրև թե վտանգավոր գործունեություն ծավալելու և Հայաստանի հակախորհրդային, աշտրոց-կիստական կազմակերպությանն անդամակցելու համար: Խորհրդային իշխանությունների կողմից որակվելով «հայրենիքի դավաճան»՝ Վահան Թոթովենցը դատապարտվում է ՅՍՄ քրեական օրենսգրքի խստագույն պատժով՝ գնդակահարություն և գույքի առգրավում: Այս անհեթեթվճիռն իրականացվում է 1938 թվականի հուլիսի տասնութին: Պատմում են, որ նա պատին հասցրել է հազիվ նշմարելի արձանագրել: «Կեցցե հայ ժողովուրդը»:



Վահան Թոթովենց

1955 թվականին հետմահու Վահան Թոթովենցի գործը վերանայվում է: 1956 թվականի փետրվարի տասնմեկին Չինվորական գլխավոր դատախազությունը կայացնում է որոշում. «Վահան Հովհաննեսի Թոթովենցը մեղադրվել և դատապարտվել է անհիմն: Արդարացնել»:

Ընդամենը այսքանը, և շատերը, գոհունակությամբ խոսելով խորհրդային իշխանությունների մասին, միամտաբար պիտի ասեին. «Կեցցե՛ արդարությունը», այն արդարությունը, որն ուշացած է, որը գուցեև մի նոր կեղծիքի ու չարության հիմք էր դառնալու: Իսկ ո՞վ պատասխան կտա կորած մի կյանքի համար, տապալված ճակատագրի ու մթագնած երագների համար: Թոթովենցի կյանքի վերջին տարիները՝ 1936-38 թվականները, երբ նրա ուժերի ծաղկման, հասում ջահելության, սակայն վաղաժամ մայրամուտի մթին, դաժան մղձավանջի հետ համընկան, գուցե մեր գրականության համար ամենաբեղմնավորն էր լինելու: Մահվան հետ ի վերջո հաշտվում են, գնդակահարությամբ, ինչպես Թոթովենցը, Բակունցը... թե անկողնում՝ հիվանդությունից, բոլորի վերջն է դա, բայց նման գրողների դեպքում հաշտվելն անհնարին է. չէ՞ որ կիսատ մնաց ստեղծագործական ուղին, մտահղացած, բայց չգրված բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք այդպես էլ մերը չդարձան:

Վահան Թոթովենցի մասին պատմում են, որ վերջին անգամ ցանկացել է տեսնել որդուն՝ Լևոնիկին: Քննիչները թույլատրել են: Նա ծնկի էր եկել որդու առջև, գրկել նրա գլուխն ու ինչ-որ երկա՛ր-երկա՛ր շնչացել նրա ականջին, հետո համբուրել էր տաք, արցունքոտ, կարոտագին, հետո նորից շնչացել, համբուրել... մինչև

որ դժբախտ հորը և Լույսը ան դժբախտ որդուն ուժով բաժանել էին իրարից: Որդին՝ քսանամյա Լևոն Թոթովենցը, մի քանի տարի անց գոհվել է Երկրորդ համաշխարհային պատերազմում: Դժբախտ ավարտ Թոթովենցի տոհմին, սակայն հարատևում նրա գրական ժառանգությանը:

Ես սիրեցի այս կյանքին բոլոր բաները, ատեցի,
երգեցի և հարբեցա:
Ես ծունկի եկա քարերու վրա, աղոթեցի Աստծո
ու հայիոյեցի անոր:
Ես լսեցի աշխարհի խոսքը և տեսա գործը:
Հիմա պատրաստ եմ ես մահվան:
Կերթամ մերկ ու դատարկ ձեռքերով, որպեսզի
հոն սկսիմ կառուցանել ու ստեղծել:
Ես ապրեցա միայն այս աշխարհին համար:
Կը թողում ամեն ինչ այստեղ:

Լույսը ան տաղանդաշատ ու Լույս-
քան ողբերգական մի անձնավորություն
էր ևս և Չապել Եսայանը (Իգաբելա Յով-
հաննիսյան)՝ արևմտահայ գրականու-
թյան այն մոհիկաններից մեկը, որին վի-
ճակված էր ապրել 19-րդ դարի վերջի և
20-րդ դարի առաջին տասնամյակների
ողբերգական իրադարձություններով լի
ժամանակները, տեսնել 90-900-ական
թվականների համիդյան ջարդերը, 1909
թվականին երիտթուրքերի կազմակեր-
պած կիլիկյան հայերի կոտորածը, 1915-
23 թվականների Մեծ եղեռնի հետևանքով
արևմտահայերի տեղահանման ու բնաջնջման, Արևմտահայաս-
տանի ամայացման գարհուրելի ոճրագործությունները և լինել
անձի պաշտամունքի տարիների նահատակ մտավորական: Լի-
նել և՛ արևմտահայ և՛ սփյուռքահայ և՛ խորհրդահայ: Չապել Եսա-
յանն իր ստեղծագործություններում ոչ միայն հայ ազգին հուզող
խնդիրներ է արծարծում, այլև ողջ քաղաքակիրթ մարդկության:
Նրա գրական մտածողությունը՝ ազգային և եվրոպական ձևերի
համադրումով, հայ հոգեբանական-ռեալիստական արձակը մղում
էր դեպի որակական նոր մակարդակ:



Չապել Եսայան

Արդեն ճանաչման ու հռչակի հասած Չապել Եսայանը 1933
թվականին Խորհրդային Չայաստանի կառավարության հրավե-

րով տաղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում պետական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնում: Նրա շնորհիվ Էապես բարելավվում է արտասահմանյան գրականության դասավանդումը: Եսայանն ապրում էր բուռն ստեղծագործական կյանքով: Մի կողմից մասնակցում էր ժամանակի գրական կյանքին, մյուս կողմից ստեղծում էր սեփական գրականություն և իր իսկ թարգմանությամբ դասավանդում Ֆրանսական գրականություն: Նրա այս առավելություններն ու անցյալի ազգանվեր գործունեությունը 30-ական թվականներին չէին կարող անհետանալ մնալ: Թեև Եսայանը գիտակցում էր մթնոլորտի լարվածությունը և տեսնում, թե ինչ էր կատարվում շուրջը, սակայն միայն ինքնապաշտպանական նկատառումներով փորձում էր փառաբանել խորհրդային կարգերն ու առաջնորդներին: Սակայն նա, ևս շրջապատված լինելով լրտեսական ցանցով, որը զրպարտչական մի մեքենա էր, իր նման շատերի պես որպես «ազգի թշնամի» ձերբակալվում է: 1938 թվականին Չապել Եսայանը՝ իբրև արտասահմանյան հետախուզության գործակալ և հակահեղափոխական-տրոցկիստական խմբի անդամ, դատապարտվում է գնդակահարության: Իրականում նրա կյանքն ընդհատվել է դրանից 4-5 տարի հետո: Երևանի բանտերում նրան տանջելով չէին բավարարվել, հայության դատն աշխարհով մեկ պաշտպանելու և թրքերի ոճրագործությունները դատապարտելու համար նա «ինտերնացիոնալիզմի» պահանջով և բուլշևիկյան «արդար» կամքով չարչարվել է Բաքվի բանտերում և սպանվել խորհրդային թրքերի ձեռքով՝ ենթարկվելով անասելի նվաստացումների ու պատժաճևերի: Ցավալի է, բայց փաստ: Չնայած 1957 թվականի հունվարի 9-ին հետմահու արդարացվել է, սակայն այն կորուստները, որոնք կրեց հայազգի տաղանդաշատ դուստրը, անվերադառնալի են...

Շատերի հետ իր չկատարած մեղքերի համար դատապարտվեց նաև Մկրտիչ Արմենը: Նա չգնդակահարվեց, այլ աքսորվեց Սիբիր:

«Պատվիրեցին հանձնել ձեզ» պատմվածքների ժողովածուն այդ տարիների տխուր տարեգրությունն է: Առաջաբանում գրում է. «Այս գիրքը պատվիրեցին հանձնել ձեզ ձեր հայրերը, եղբայրները և զավակները, որոնց հետ ես հանդիպեցի 1937-ին և դրանից հետո ութը տարի շարունակ



Մկրտիչ Արմեն

ճամբարում ինքս էլ եղա նրանց պես մի կալանավոր»:

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ փորձում էր դառնացնել և դժվարացնել նրանց առանց այդ էլ դժվար կյանքը: Կալանավորները հատուկ հրամանով շարունակ տեղափոխվում էին ճամբարից ճամբար, որպեսզի չհարմարվեին մի տեղի և չմտերմանային, իբրև թե դրանով խուսափում էին հետագա քաղաքական բարդություններից: Մկրտիչ Արմենը աքսորի ութ տարիների ընթացքում տեղափոխվել է 60 անգամ: Սակայն իր իսկ վկայությամբ, որքան էլ զարմանալի թվա, չնետեց հավատի բարձր պահող ջահը եղևնու խեժով պատած իր ձեռքերից:

Վերադարձից հետո գրում է այս գիրքը որպես մնայուն մի հուշարձան անցած տարիների ողբերգական պատմության: «Պատվիրեցին հանձնել ձեզ» ժողովածուն կազմված է քսանութ նորավեպից, որոնք բոլորն էլ վերաբերվում են աքսորականների կյանքին: Բոլորի մեջ գրեթե նույնն է ճամբարի առօրյան, նույնը մարդկային տառապանքն ու կարոտը, ուրախությունն ու հիասթափությունը. միանման անշուք ու մռայլ բարաքներ, ցուրտ, անձրևոտ կամ ձյունապատ անտառ, անբույր, անտեսք, անշունչ, անհյուրընկալ, այն աստիճան նողկալի, որ երևի գնդակահարությունն ավելի մեղմ պատիժ էր, քան այսպես ամեն օր մեռնելն ու ողջ մնալը:

Փոքրածավալ ստեղծագործությունների մեջ հեղինակին հաջողվել է տալ կյանքի, ժամանակի լայն ու խոր հոգեբանական պատկերներ ու խտացված կերպարներ: 1964 թվականին «Գրական թերթում» (թիվ 30, հուլիսի 24) տպագրված «Սյուժե և ճմարտություն» հոդվածով Մկրտիչ Արմենը ապացուցեց ու համոզեց քննադատությանը, որ այս շարքը ժամանակի թելադրանքն է, այն համարձակ է, ազնիվ, գրված է գեղարվեստական բարձր ճաշակով: Արմենի գրեթե բոլոր հերոսների ոգևորությունը հաճախ նրանում է, որ բախվում են երևակայականն ու իրականը:

Այսպես՝ երևակայականի, երազայինի ու իրական կյանքի բախումից էր ծնվել նաև այս տարիների առաջադեմ, համարձակ մտավորականների ողբերգությունը: Իրականում իշխանությունները չէին ստեղծում այն երկիրն ու միջավայրը, որը երազային ու ցանկալի էր՝ խոստացված բոլշևիկների կողմից: Նման պայթունավտանգ ժամանակաշրջանում ստեղծագործելն ու անգամ ապրելը դառնում են վտանգավոր ու անհնարին: Եթե 1953 -ից՝ Ստալինի մահից հետո, անհիմն դատապարտվածներից շատերն արդարացվեցին հանցանշաններ չունենալու պատճառով, ապա նրանցից շատերի ստեղծագործությունների մի ստվար մասը մինչև այսօր էլ անհայտության մեջ է: Հենց Չարենցի՝ թվում

Է, թե ամենաուսումնասիրված հեղինակի 1935-1937 թթ. գրական ժառանգության շատ էջեր կորած են: Բանաստեղծի ձերբակալությունից, ապա և կնոջ՝ Իզաբելայի կալանավորումից հետո դրանց մի մասը տարբեր ճանապարհներով ընկել է առանձին անձանց ձեռքը, և գրականագիտությունն այս ուղղությամբ դեռևս ուսումնասիրությունների պահանջ ունի:

Ծանոթանալով ու պատկերացնելով անհիմն ձերբակալված մտավորականների, գրողների անելանելի ծանր վիճակին՝ սկսում ես ավելի ու ավելի գնահատել ազատությունը, և կյանքը նոր իմաստ ու բովանդակություն է ստանում: Ձերբակալվածներից յուրաքանչյուրը ենթարկվել է մարդկային անասելի տառապանքների, ստորացվել ու անարգվել, կորցրել այն, ինչը ոչ մի մեղանչումով ու արդարացմամբ չես վերականգնի: Այս թեմայով խորհելիս շարունակ հիշում ես Չարենցի դեռևս 1920 թվին գրված «Մահվան տեսիլի» հետևյալ տողերը, որը կարող է համարվել յուրաքանչյուր նահատակի վերջին խոսք.

Թող ո՛չ մի գոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախադանին թող մոտ չգան,
Եվ թող տեսնեմ իմ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:

1936-37 թվականների մռայլ մղձավանջն անգամ չկարողացավ լռեցնել Չարենցի նման անհատին, քաղաքացուն ու բանաստեղծին:

1936 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին «Իջել է այսօր Յելիկոնն ամբողջ» բանաստեղծության մեջ գրում է.

Ջնարավո՞ր է արդյոք մի ամբողջ
ժողովրդի երգ դատարան տանել
Եվ որպես մի խեղճ,
հանցապարտ ամբոխ
Ե՛վ խարազանել, և՛ ամբաստանել...
Կարո՞ղ է արդյոք մի ժողովրդի
Երգն ամբողջովին, դպրությունը ողջ
Լինել հանցավոր...



Եղիշե Չարենց

Չարենցը համոզված էր, որ երբևիցե արդարացվելու են և՛ ինքը

և՛ իր մյուս ընկերներն ու համախոհները: Չարենցն իր ընկերների ճակատին տեղացող պատիժներից չի խուսափում և պատրաստ է վերցնելու՝

Նրանց կատարած հանցագործության
Ճանրությունն ամբողջ, և կրել անահ
Ձերբակալություն, և՛ աքսոր, և՛ մահ,
Ոչ իբրև տաժանք, այլ՝ սուրբ խնդություն...

Երկար խոշտանգումներից, նվաստացումներից, օրեր, ամիսներ տևած հարցաքննություններից չընկճվեց արի բանաստեղծի ոգին, սակայն վերջնականապես քայքայվեց նրա առանց այդ էլ հիվանդ մարմինը: Եղիշե Չարենցը վախճանվեց 1937թ. նոյեմբերի 27-ի առավոտյան ժամը 7-ին Երևանի բանտի հիվանդանոցում: Մահացածի բժշկական ակտում գրված է, որ նա տառապում էր խորացման բարձր աստիճանի հասնող մորֆինիզմով, աղետամոքսային ուղու խիստ քայքայմամբ, լյարդի, երիկամների, թոքերի գանգան հիվանդություններով: Բնությունն ժամանակ պարզվեց՝ «Տղամարդու դիակ՝ միջինից ցածր հասակի, խիստ նիհարած: Ձախ նախաբազկի ներքին մակերեսին կա դաջվածք՝ «1927թ. հունվար ամիս, Ա. Չ.» գրությամբ: Երկու ազդրերին՝ սրկման հետքեր..., սիրտը՝ դիակի բռունցքի չափ...»:

Այն սիրտը, որն իր իսկ բնութագրմամբ որպես վառ ատրուշան պահեց վառ: Եվ եթե նա այսպիսի ողբերգական վախճան ունեցավ որպես մահկանացու՝ ճղճիմ մահկանացուների ձեռքով, ապա նրա տաղանդի արգասիքը՝ գրական ժառանգությունը, ապրելու է և կապրեցնի դեռ շատ ու շատ սերունդների:

Մեկ անգամ չէ պատմությունն ապացուցել, որ ճշմարտությունը երկար բանտարկվել չի կարող և վաղ թե ուշ բացահայտվելու է: Սակայն այդ ապրողների համար, իսկ նահատակներին մնում է միայն սկզբունքի համար կործանվելու հպարտությունը:¹⁰

10 Այս հարցերի մասին ավել հանգամանորեն տես՝ Դ. Գասպարյան, «Փակ դռների գաղտնիքս», Ե., 1994: Տես նաև Նույն հեղինակի «Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը», Ե., 1996, «Ակսել Բակունց: Կյանքը և ստեղծագործությունը», /Եր., 2009/ գրքերը: Հարցերի վրա լույս են սփռում նրա աշխատասիրած Եղիշե Չարենցի «Նորահայտ էջեր» /Ե., 1996/ գիրքը՝ ծանոթագրությունների ընդարձակ բաժնով և մի շարք այլ հրապարակումներ՝ «Հոսող ժամանակը և մնացող պատմությունը» / «Ազգ», 2008, թիվ 50, 15 մարտ/, «Գրականությունը որպես ուղիղ ճանապարհ» / «Ժամանակի միտքը», 2008, թիվ 16, 8-14 հուլիս/:

Կարեն Միքայելյանի փոքր արձակը

«Գրում եմ ցավով...»¹¹
Կ. Միքայելյան

Անհատի պաշտամունքի տարիներին անհիմն բռնադատված մտավորականներից է Կարեն (Գերասիմ) Միքայելյանը (27.04.1883 – 13.12.1941): Կյանքի իրեն բաժին ընկած ճանապարհը սկսել է Նախիջևանի (Օրդուբադի) Վերին Ագուլիս գյուղից: Հայ մտավորականի դասական կերպար է: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, եղել ազատ ունկնդիր Մոսկվայի համալսարանում, այնուհետև կրթության պակասը լրացրել է Գերմանիայում՝ ավարտելով Ենայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը: Տիրապետում էր հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն լեզուներին: Կարեն Միքայելյանը տաղանդավոր արձակագիր էր, թարգմանիչ, գրական ու հանրային գործիչ: Որպես առաջադեմ մտավորական ետ չէր մնում քաղաքական տեղաշարժերից: 1903 թվականից հարել է հեղափոխականորեն տրամադրված խմբակներին, Կ. Հզորյան ստորագրությամբ թղթակցել «Շավիղ» թերթին: Մտերիմ և համախոհ է եղել ժամանակի մի շարք հայտնի մտավորականների և քաղաքական դեմքերի, այդ թվում՝ Վ. Տերյանի, Պ. Մակինցյան, Ա. Մյասնիկյան, Գ. Լևոնյան...



Կարեն Միքայելյան

1910-12 թվականներին եղել է Մոսկվայում տպագրվող «Գարուն» գրական-գեղարվեստական ամսանախի խմբագիրներից: Հատկապես մտերիմ էր Բոյուսովին, որի խմբագրությամբ լույս տեսնող հայ պոեզիայի անթալոգիայի թարգմանական աշխատանքներին է մասնակցել (1916թ.): 1936-ին ռուսաց լեզվով «Հայաստանի պոեզիան» նոր ժողովածուի աշխատանքների կազմակերպիչն էր, որն էլ պատճառներից մեկն է դառնում հակապրոլետարական, նացիոնալիստ գրող կոչելուն՝ գտնելով, որ

11 Այս նախադասությամբ է սկսվում Կ. Միքայելյանի «Գրական եզրակացության» դեմ փետրվարի քսաներեքին գրված 14 էջանոց բացատրության մեջ, ուր իրեն մեղադրում էին՝ հորջորջելով «հակահեղափոխական գրող»:

նա «արտահայտում է մանր բուրժուական քաղքենիական մտորումներ»: Այսպես՝ Միքայելյանը իր նախատեսած հայ պոեզիայի անթալոգիայի մեջ իրավացիորեն տեղ չէր հատկացրել մի շարք իր կարծիքով ապաշնորհ գրողների, այդ թվում գրողների միության այն ժամանակված քարտուղար Գուրգեն Բորյանին, «Խորհրդային Յայաստան» օրաթերթի խմբագրի տեղակալ Բաբկեն Կարապետյանին: Եվ գրական գործչից վրեժ լուծելու համար, պահը չկորցնելով, անհաջող գրողները Միքայելյանի գրական վաստակը որակում են հակաազգային, իսկ իրեն «բուրժուական-դաշնակցական տականքներից սերված»: Դրանով առանց այդ էլ որպես աջ-տրոցկիստական կազմակերպության անդամ «քաղաքականապես անհուսալի տարրի» ձեռքակալված ազգանվեր գրողի «հանցանքն» ավելի խորացնելով: Կարեն Միքայելյանը Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի աշխատակից էր: 1925-27 թվականներին որպես Յայաստանի Կարմիր խաչի ընկերության և ՅՕԿ-ի պատվիրակության անդամ՝ շրջագայել էր Եվրոպայում, ԱՄՆ-ում՝ լինելով աշխարհի 96 քաղաքներում, ամենուր փորձելով պիտանի լինել հայ ժողովրդին: 1926 թվականի Լենինականի երկրաշարժի հետևանքների վերացման համար Փարիզում կազմակերպում է հանգանակություն, որով մեծ օգուտ է տալիս հայրենակիցներին: Սակայն ժամանակաշրջանն այնքան վտանգավոր էր, որ լավ գործի համար ավելի հաճախ խարազանվում էին և ոչնչացվում: Ցանկացած անհատ չէր, որ կարող էր իշխանությունների կողմից հուսալի դիտվել, այլ միայն որոշ ընտրյալներ, որոնց անմաքուր ձեռքերով էր պտտվում պետական ողջ ապարատը: Յուրաքանչյուր գործ, խոսք, միտք, անգամ լռություն կարող էր մեկնաբանվել իշխանությունների դեմ և դատապարտվել: Այդ տարիներին ակտիվացած գրական պայքարը ստացավ քաղաքական բնույթ՝ իր ողբերգական հետևանքներով: Տաղանդի գնահատման չափանիշն իշխանություններին հնազանդվելով էր բնութագրվում: Միայն մարդկային կորուստներով ու անձնական նվաստացմամբ չէր սահմանափակվում կարմիր սատանայի ոճիրը, այլ շատ ավելի հեռուն էր գնում, կալանավորվում և արգելվում էին բազմաթիվ գրքեր, բռնագրավվում ու ոչնչացվում ձեռագրեր: Երկիրն ամայանում էր, ամայանում էր նաև մարդկային միտքը, ու ոգու սովն էր թեւածում ամենուր: Բուլշևիկյան կարմիր սատանայի հրեշավոր ուրվականը սպառնում էր լուսավոր ու պայծառ ապագայի երազանքին անգամ: Երբեմն «բարի» էին գտնվում և որոշ ազատագրկված հեղինակների թույլ էին տալիս զբաղվել գրական գործունեությամբ: Կ. Միքայելյանն

այդ «երջանիկներից» էր: Նա Երևանի բանտում 1941 թվականի ապրիլ-հունիս ամիսներին գրել է «Անմահություն» նովելների ժողովածուն, որը մինչև այժմ նրա «Երբ ես խելագար էի» 1927թ-ին գրված քաղաքական հալածանքները ներկայացնող վեպի հետ մեկտեղ սպասում է տպագրության:

Կարեն Միքայելյանը ոչ այնքան հավաստի տվյալներով մահացել է սրտի կաթվածից 1941թ-ի դեկտեմբերի 13-ին որպես քաղաքական Վոլոգդայում՝ Ուսույեի ճամբար չհասած:

Իհարկե, 1956-ի փետրվարի 14-ի որոշմամբ Կ. Միքայելյանը որպես քաղբանտարկյալ արդարացվել է, կարծես թե վերականգնվել է նրա ազնիվ անունը, սակայն նվաստացումների, հիասթափության, հոգեկան ծանր ապրումների, ֆիզիկական ճնշումների, հուսահատության ու կորած երազների համար ոչ ոք և երբեք պատասխան տալ չի կարող: Մնում է միայն Միքայելյանի գրական վաստակը գնահատելով, ինչ-որ չափով նրա մտքերին, խոհերին հաղորդակից լինելով շնչել անջրպետը մեր և նրա միջև, մեկ անգամ ևս ապրել տալ, այս անգամ որպես գրող ու մտածող, որպես խոհեր ու երազներ ունեցող հավերժի ճամփորդ՝ մռայլի գրկում թողնելով մարդ-մահականացուի կյանքի տխուր դրաման:

Կարեն Միքայելյանի պատմվածքների և պատկերների անդրանիկ ժողովածուն՝ «Չրկանքի հույզեր» վերնագրով (213 էջ) հրատարակվել է 1907-ին Թիֆլիսում: Հեղինակը գիրքը կազմել է նույն թվականի գարնանը Գերմանիայում: Այստեղ ամփոփված են «Առաջաբանի տեղ» հատվածը և թվով յոթ ստեղծագործություններ: Դրանցից «Հացթուխ Սիմոն», «Վրեժ» պատմվածքները կեղծ ստորագրությամբ նախապես տպագրվել էին 1904-ին «Մուրճ» ամսագրի երկու համարներում, իսկ «Փորձության ժամին» պատմվածքը հայտնի էր ընթերցողին «Կյանք» շաբաթաթերթի էջերից: Մյուս չորսը՝ «Էվուլյա», «Մարտակոչ», «Մահակ-Թումանը» և «Կեցցեն հաղթածները» հրատակարվում էին առաջին անգամ: Ի ժողովածուն՝ «Ձմռան երեկո» խորագրով լույս տեսավ 1912-ին Մոսկվայում: Այն կազմված է «Նահանջ», «Կախաղանի վրա», «Վերջին հորձանքներ», «Ձմռան երեկո», «Վարդանանց պատերազմը», «Սաքուլի խումբը», «Առաջին վիշտ», «Հայ-թուրքական կոտորած» պատմվածքներից:

1926-ին Փարիզում Կ. Միքայելյանը տպագրում է մեկ գործողությամբ «Գյուղական հեռախոս» պատկերը, որի նյութը վերցված էր ժամանակակից Հայաստանի կյանքից:

ՀՕԿ-ի հրատարակությամբ Կ. Միքայելյանը 1928-ին Մոսկվայում լույս է ընծայում արտասահմանյան շրջագայությունների

ընթացքում կատարած իր ուսումնասիրություններից մեկը՝ «Հայ ժողովրդական հարստություններն արտասահմանում» գրույքը, որով մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայոց կտակների, նվիրատվությունների, հասարակական գումարների վերաբերյալ, որոնք այն ժամանակ արդեն անցնում էին տասնյակ միլիոն ռուբլուց:

Կ. Միքայելյանի պատմվածքների III ժողովածուն ամենածավալունն է (138 էջ) և կրում է «Majestic» («Մաժեստիկ») վերնագիրը, ուր ամփոփված են թվով 23 ամերիկյան կարճ պատմվածքներ: Գիրքը լույս է տեսել Մոսկվայում 1928-ին, շարվել է Մանուկ Աբգարյանի ձեռքով և պտագրվել ՀՍԽՍՀ Պետհրատի 3-րդ տպարանում 15.000 օրինակ: Ժողովածուն կազմող հետաքրքրաշարժ երկերից են «Մեր գաղտնիքը», «Ռուսաստանի սիրահարը», «Հայաստանի քարտեզը», «Անկախ Հայաստան», «Ըսեք՝ գրաբառը չմոռնան», «Լուսարարը» և այլն:

Պատմվածքների IV ժողովածուն վերնագրված է «Գույների կռիվը», որը կրկին հրատարակվել է Մոսկվայում 1929-ին: Այն կազմող առաջաբանը «Գույների կռիվը» ավելագորհան և թվով 5 պատմվածքները՝ «Հորեղբոր հարսանիքը», «Երազը վանքում», «Առաքելը», «Հեքազ բաջին» և «Հանցավոր տունը» բավականին հաջողված ստեղծագործություններ են և հաստատում են Կ. Միքայելյանի արձակի ծանրակշիռությունն ու խոսում նրա վարպետության, տաղանդի մասին:

Կ. Միքայելյանին հետմահու արդարացնելուց հետո մասամբ վերանայվեց նաև նրա թողած գրական ժառանգությունը և 1961-ին Երևանում տպագրվեց «Կեցցեն հաղթածները» պատմվածքների ժողովածուն: Այն կազմող 12 պատմվածքները վերցված են նախկինում պտագրված ժողովածուներից: Գիրքը կազմել և խմբագրվել է Ս. Պայազատի ջանքերով: Այն տպագրվել է 5.000 օրինակով, սակայն Կ. Միքայելյանի ստեղծագործությունների մի հսկայական մաս վերատպման են արժանի, իսկ շատ ստեղծագործություններ դեռ անտիպ են: Գրականագիտության մեջ շատ քիչ է խոսվել Կ. Միքայելյանի մասին, իսկ նրա ստեղծագործությունները ուսումնասիրությանների չեն արժանացել և համեստորեն սպասում են դրան:

Նախորդ դարասկզբին հայ գրականության մեջ իշխող էր դարձել փոքր արձակը, և պատահական չէ, որ Կ. Միքայելյանն էլ է նախապատվությունը տալիս այս ձևերին, որոնցով առավել ամբողջական են դառնում և պարզորոշ ցուցադրվում արձակագրի գրական հնարավորությունները, վարպետությունն ու ճա-

շակը: Միքայելյանը քաջածանոթ էր իրեն նախորդած գրական ավանդներին, որոնցից ժառանգեց հակիրճ, սեղմ պատմելաոճը, դիպուկ, միևնույն ժամանակ առանց սեթևեթանքի, պարզ խոսքը: Հատկապես ուշագրավ են նրա քնարական շնչով գրված պատմվածքները («Ձմռան երեկո», «Էրֆուրտի ծրագիր», «Վարդանանց պատերազմը», «Սաքուլի խումբը», «Առաջին վիշտ», «Կեցցեն հաղթվածները», «Վրեժ».) ուր բնության շքեզ պատկերների կողքին ներկայացվում են մարդկային հոգեկան ապրումների՝ սիրո, ատելության, հիասթափության, հույզի ու կարոտի գեղեցիկ գուգահեռումներ:

Կ. Միքայելյանը համախոհն ու գործընկերն էր Վ. Տերյանի, Ալ. Մյասնիկյանի, Պ. Մակինցյանի, Գ. Լևոնյանի և ժամանակի մի շարք այլ առաջադեմ մտավորականների, ուստի նրա աշխարհընկալումը, հատկապես լեզվի, արվեստի, գաղափարի տեսանկյունից մոտենում, երբեմն էլ հաճախ նույնանում է Տերյանի հետ, հետո արդեն Բակունցի, Համաստեղի, որոշ իմաստներով նաև մոտ է Սո. Չորյանին ու Դ. Դեմիրճյանին: Տերյանի, Բակունցի և Միքայելյանի ստեղծագործություններում մեծ է ընդհանրությունը, հատկապես նրանց հուզական աշխարհների միջև: Ամենուր գրեթե նույն քնարական-բանաստեղծուկական շունչն է, լուռ, առանց ավելորդ խոսքերի ու ջղածգումների անամոք թախիծը, ավելի շատ ասվածի մեջ քողարկված չասված իրողությունը, ինչպես նաև ամենօրյա անտարբերության, սովորականի մեջ խնամքով ծպտված անսովորի հմայքը, որն էլ հենց գրողի տաղանդի, նրբանկատ ոգու ու քնարական-փիլիսոփայական մտքի վկան է:

Հետաքրքիր ու գրավիչ է Կ. Միքայելյանի գրելաոճը: Այն անկեղծությունն է ներշնչում: Ընթանում է երբեմն գրույցի, ասող լսողի, երկխոսության անմիջականությամբ, երբեմն էլ վերհուշի կամ հեղինակի կողմից քողարկված՝ իբրև թե երրորդ մարդու տեսանկյունից: Այս ձևերից յուրաքանչյուրն ունի իր գրավչությունը և համապատասխանում է ընտրված թեմային՝ մատչելի, պարզ ու անկեղծ դարձնելով ասելիքը: Այս է պատճառը, որ ընթերցողը հեղինակին համարում է իր մտերիմը, անվերապահորեն հավատում նրա ամեն մի խոսքին, դառնում հեղինակի ու նրա ստեղծած հերոսների կարեկիցը: Սա Կարեն Միքայելյանի ստեղծագործությունները գնահատելու համար բացահայտ առավելությունն է:

Միքայելյանը, լինելով հասարակական ակտիվ գործիչ, քաջ գիտակցում էր խորհրդային երկիր ստեղծելու դժվարությունները և գրեթե համոզված էր, որ հայ ժողովրդի ճակատագրում այն թարմ, ցավոտ ակոս է բացելու: Թշվառ հայրենիքի ողբերգական

անցյալը, ծանր ներկան ու անորոշ ապագան դառնում են այն ազդակները, որոնց հիման վրա ծնվում են հայրենիքի թեմայով ստեղծագործությունները («Հայաստանի քարտեզը», «Անկախ Հայաստան», և այլն):

Արձակագիր Կ. Միքայելյանը հայոց մեծ ողբերգության՝ տարագրության կողքով անտարբեր անցնել չէր կարող: Նա ներկայացնում է օտար ավերում ապրող հեյերի, որոնք ֆիզիկապես ապրում են, սակայն հոգիներում դատարկություն է: Անցյալի ողբերգությունն ամայացրել է նրանց հոգիները և ուրվականի պես հետևում է ամեն քայլափոխի: Օտար ավերում որպես հայ իրենց կորցրած մարդկանց հոգեկան ծանր ապրումներն ու երբեմն արտաքնապես անհոգ թվացող մղձավանջային կյանքը Միքայելյանը ներկայացնում է առանց ավելորդ հրճվանքի, ողջ թշվառությամբ ու մռայլությամբ:

Հետաքրքիր կերպարներ են այս շրջանում մեր գրականության մեջ նմանը չունեցող, անպետք, անբան, ոչ մի լավ բանի անընդունակ կերպարները («Էվուլա», «Նահանջ»): Վերջիններս սփյուռքահայության այն օտարացող սերունդներն են, որոնք եթե Նախնիներով, անցյալի հիշողություններով հայ են, ապա իրենց մտածելակերպով, վարքագծով ոչ մի ընդհանուր բան չունեն հայի իսկական տեսակի հետ, ուստի ապագայում ոչինչ են հայի և հայրենիքի համար: Դրանք տոթակեզ ավագի մեջ շոգիացող ջրի վերջին կաթիլներն են, որոնց համար հեղինակը մեծ ցավ է ապրում: Այս ողբերգության արմատը հայերի տեղահանությունն է ու եղեռնը, որը չնայած չի պատկերվում, սակայն սերունդների այս ապրելածևը դրա անմիջական հետևանքն է:

Նախկին սոցիալիստ Արսեն Ռոստոմյանը («Նահանջ») ընդունակ չէ աշխատելու. արհեստ չունի, ապրել է անգաղափարակից ուրիշների հաշվին և երբ նրանցից գումար ստանալու հույսը կորցնում է, անիմաստ է դառնում նաև ապրելը: Նա ոչ սեփական երազանք ունի, ոչ նպատակ, ոչ կամք, իսկ թուլամորթից հանցագործ կես քայլ է, և նա դառնում է մարդասպան: «Բուք մատների հաստ եղունգները սեղմելով կնոջ փափուկ պարանոցը»¹² կարծես փորձում է խեղդել նաև իր անցած «փափուկ» կյանքն ու փուչ, անիմաստ սեփական գոյությունը:

«Էվուլա» պատմվածքի հերոսն ապրում է միայն մի հանդուգն փիլիսոփայությամբ. «Ես աշխահքը ղօջաղի մեյդան ե... Հը՛մ, տօ(, ո՞վ զավօղում աշխատելով մարդ դարձավ... ՉԷ, ախպեր, իմ բանը

12 Չրկանքի հույզեր, Նահանջ, Թիֆլիս, 1907, էջ

չի...»¹³, և որոշում է իր գլուխը պահել առանց շատ տանջվելու և քրտինք թափելու, որին ինքը սովոր չէ: Նա հետապնդում է սրճաբանում հարբածներին, թալանում և անհոգ հեռանում:

Սրամիտ թախիծով հեղինակը ներկայացնում է օտար ափերում ապրողների, որոնցից մի մասը, եթե կորցրել է հայի իր դիմագիծը, ապա մի մասն էլ կարոտով ու պարծանքով է հետևում Հայաստանի հզորացմանն ու շենացմանը («Խաղաղականի ափերին», «Միսիսիպի գետի պղտոր ջրերը», «Հայաստանի քարտեզը» և այլն): «Անկախ Հայաստան» պատմվածքում այնքան են հայրենակիցները հպարտանում Հայաստանի նորաստեղծ անկախությամբ, որ ամերիկացի լրագրողը նկատում է՝ եթե ունենք պետություն ու պետական բյուջե, ուրեմն «կարող եք վճարել ձեր պարտքերը, այն, որ արավ Ամերիկայում ձեր նախկին կառավարությունը»¹⁴:

Մարդկային հասարակությունից միշտ էլ անբաժան է ողբերգությունը, սակայն դրա գիտակցումն է տարբեր Միքայելյանի կերտած հերոսների մոտ: Սրանում է հենց թաքնված կյանքի հարցերի հարցը, առանց որի չէին լինի հակադրություններ, ուստի և կյանքը կոդարեր գոյություն ունենալուց: Մի շարք պատմվածքներում պատկերված է քաղաքաբնակների կյանքը, փողի գերիշխանությունը, ամօրյա պայքարն անիրավ աշխարհի դեմ, որտեղ ամեն ինչ օտար է մարդկային ազնիվ հոգուն, և մարդու անտարբերությունը մարդու նկատմամբ տանում է դեպի կործանում: «Հացթուփա Սիմոն» պատմվածքում այդ բուրժուանտարբերությունն է, որ տապավորի մոտ ծնում է չարություն և ատելություն: Աստծո ստեղծած մարդիկ պետք է ողորմած ու կարեկից լինեն իրար: Սիմոնը շարունակ փորձել էր գտնել լավ, բարեկեցիկ կյանքի բանալին, որը նրան երբեք չի հաջողվել: Հեշտ վաստակվող փողի ու ապահով կյանքի ետևից գնացել էր քաղաք, տեղափոխել նաև ընտանիքը, սակայն չդիմանալով նոր պայմաններին՝ հիվանդացել ու մահացել էին կինն ու երեխաները: Համոզված լինելով, որ քաղաքն է մեղավոր, Սիմոնն այլ տեղ էր գնացել, և փորձելով հարմարվել ճակատագրին՝ դարձել էր հացթուփա ու ապրել օրվա հոգսով՝ առանց պայքարի, առանց տրտնջալու: Իսկ կյանքի մայրամուտին, երբ հիվանդ էր, սոված ու անօգնական, գտնում էր, որ սխալ քայլ էր կատարել տեղից տեղ գնալով և փորձելով հարմարվել թշվառ ճակատագրին՝ մտածելով, որ «Աշխարհումս հո բոլորն էլ երջանիկ չեն լինի, այն ժամանակ իսկի աշխարհս էլ աշխարհ չի լինի...»: Գուցե այս համոզմամբ էլ մնար Սիմոնը, եթե շրջապա-

13 Չրկանքի հուլյան, Էվուլյա, Թիֆլիս, 1907, էջ

14 Majestic, Անկախ Հայաստան, Մոսկվա, 1928, էջ 33

տի անտարբերությունը չփոխեր նրա վերաբերմունքը կյանքի ու ճակատագրի հանդեպ: Բոլորն էլ գտնում էին, որ «ճակատագիրն էր այդպիսին»: «Վաղն էլ կընկնի ու կմեռնի»¹⁵, և առանց մի նշույլ կարեկցանքի ու ափսոսանքի կուշտ ու ապահով մարդիկ կասեն. «Ինչու՞ մեռավ, չկարողացավ ապրել, մեռավ, հա՛, հա՛, հա՛...»¹⁶, որովհետև ապրել բոլորը չէ, որ կարող են:

Իր ողջ կյանքում բարի, հեզ ու խոնարհ հացթուխը մահից առաջ դառնում է դժգոհ ու ըմբոստ և անտարբերությունից ու արհամարհանքից ծնված չարությամբ վերջին շնչում զղջում է, որ թույն չի խառնել այն հացին, որը տարիներ շարունակ թխել է ուրիշների համար:

Յեղիակը փորձում է շեշտը դնել անտարբերության վրա՝ գտնելով, որ աշխարհի ամենամեծ չարիքները դրանից են ծնվում: Մարդիկ պետք է բարեգութ լինեն միմյանց հանդեպ, հատկապես ծերերի ու հիվանդների նկատմամբ, որոնք դրա կարիքն ավելի ունեն:

Յոգեբանական նման բարդ ապրումներ են ներկայացված Միքայելյանի գրեթե բոլոր պատմվածքներում: Նրա հերոսներն ավելի շատ խորհում են, մտորում, տվյալովում իրենց վերհուշերի ծանր ապրումներից («Վրեժ», «Յեքազ բաջին») քան գործում, ինչ-որ բան անում:

Մեկ այլ ճանապարհով է ընթանում բեռնակիր Վարդանի կյանքը: Նա ևս դժգոհ էր. «Շան կամ կատվի չափ տեր չենք մեր կյանքին»:¹⁷

Վարդանը հակադրվում է կյանքի հարվածներին, համամիտ է ընկերոջ՝ Արշակի ասածին, թե «Գուցե մեր ճակատագիրն էլ այս է»¹⁸: Գաղափարապես առաջադեմ լինելով հացթուխ Սիմոնից՝ Վարդանը գտնում է իր տեղը կյանքում, դառնում հեղափոխական. «Մինչև այժմ բեռնակիր եմ եղել, հիմա էլ պիտի դրոշակակիր դառնում»:¹⁹

Ժամանակի գրականության խնդիրն էր պատկերել նոր մարդուն, գաղափարապես հասունացած, իր իրավունքները ճանաչող անհատին, որը հակադրվել էր հին, դաժան կյանքին: Միքայելյանն ունի մի շարք ստեղծագործություններ, որոնց հերոսները այդ վերափոխված մարդիկ են:

15 Յացթուխ Սիմոնը, Թիֆլիս, 1907, էջ 20

16 Նույն տեղում

17 Կեցցեն հաղթողները, Մարտակոչ, Երևան, 1961, էջ 43

18 Նույն տեղում, էջ 46

19 Նույն տեղում, էջ 52

Բավականին հետաքրքիր, մյուսներից խիստ տարբերվող վերաբերմունք ունեն Միքայելյանի որոշ կերպարներ հայ-թուրքական հարաբերությունների և ընդհանրապես Հայաստանի անցյալի ու ապագայի վերաբերյալ («Փորձության ժամին», «Անկախ Հայաստան», «Հայաստանի քարտեզը»): «Փորձության ժամին» պատմվածքի հերոսները իրարամերժ կարծիքներ են հայտնում հայ-թուրքական կոտորածներից: Հերոսներից մեկը ելևում է «թուրքը, որ ոսկի էլ դառնա, գրպանդ մի դիր» կարգախոսից և թուրքերի դեմ կռվելու, վրեժ լուծելու կոչ է անում. «Պետք է կոտորել... Տասնյակ դարերով դրանք մեր արյունը ծծեցին, մեր ոսկորը քամեցին: Եթե նրանց յոթը պորտ պապի փորը պատռես, հայի հաց ու հայի արյուն դուրս կգա... Այժմ էլ հավատարիմ իրենց պապերի ավանդին, շարունակում են նրանց սկսած գործը՝ բավական է, որքան համբերեցինք: Պետք է, որ մենք էլ միանանք որպես մի մարդ և նրանց արածով նրանց պատասխանենք»²⁰: Իսկ մյուսը՝ երիտասարդ ուսուցիչը գտնում է, որ բարեկամանան, իրար չկոտորեն, քանի որ և՛ հայն է տուժել և՛ թուրքը այդ անընդմեջ կռիվներից:

Ժամանակի թելադրանքով Միքայելյանը ներկայացնում է բուլշևիկյան գաղափարներ, սակայն զգուշանալով սեփական խոսք ասելուց, հերոսի բերանով ներկայացնում է նաև թուրքերից վրեժ լուծելու գաղափարը:

«Հայաստանի քարտեզը» փոքրիկ պատմվածքում հերթական անգամ Ամերիկայում տպագրվող հայկական թերթում տեսնելով ծովից ծով Հայաստանի քարտեզը՝ վրդովվում է. «Երբ պիտի վերջ տան այս սին իլյուզիաներին: Այսպիսի անմիտ քարտեզներով միայն մոլորեցնում են մեզ և գրգռում մեր հարևաններին»²¹: Հեղինակը հորդորում է ապրել ներկայով և ոչ թե անցյալը շահարկել: Մ.թ.ա. գոյություն ունեցած ծովից ծով Հայաստանով, որը մի՛ֆ է, ցավոք, հայերն ավելի են ոգևորվում, քան փոքր, բայց իրական Հայաստանով:

Միքայելյանն իր պատմվածքներում անդրադարձել է նաև հայ մարդու հետամնաց բարքերին, ավանդական ապրելակերպին, սովորույթներին՝ իրենց ողջ հմայքով և երբեմն էլ կործանարար հետևանքներով («Հորեղբոր հարսանիքը», «Հեքազ բաջին» և այլն):

Կարեն Միքայելյանի ստեղծագործությունները, որոնք դեռ շատ ուսումնասիրությունների առիթ են դառնալու, ժամանակի

20 Majestic, Փորձության ժամին, Մոսկվա, 1928, էջ 30

21 Majestic, Հայաստանի քարտեզը, Մոսկվա, 1928, էջ 27

գրականության պահանջներին տուրք տալով՝ մի կողմից պատկերում են նախահեղափոխական հայ աշխատավորության ծանր վիճակն ու նոր մարդու ձևավորումը՝ իր գաղափարական տեղաշարժերով, մյուս կողմից էլ՝ սփյուռքահայության օտարացող բարքերը և հայ մարդու գերագույն բաղձանքը՝ հզոր հայրենիք ունենալու երազանքը:

Միքայելյանի ստեղծագործությունները, ժամանակի խորը կնիքն իրենց վրա ունենալով հանդերձ, հայ նորագույն գրականության հետաքրքիր էջերից են՝ իրենց երբեմն ոչ ընդունված մտածելակերպով և դիպուկ հարցադրումներով:

Գրականություն

1. Կ. Միքայելյան, Չրկանքի հույզեր, Թիֆլիս, 1907
2. Կ. Միքայելյան, Ձմռան երեկո, Մոսկվա, 1912
3. Կ. Միքայելյան, Գյուղական հեռախոս, Փարիզ, 1926
4. Կ. Միքայելյան, Majestic, Մոսկվա, 1928
5. Կ. Միքայելյան, Գույների կռիվը, Մոսկվա, 1929
6. Կ. Միքայելյան, Կեցցեն հաղթվածները, Երևան, 1961

«Պայծառ համաստեղություն» չխամրող աստղաբույլը Վաչե Պարտիզունու համանուն ժողովածուում

Չարենցը սիրում էր կրկնել արևելյան հետևյալ ասույթը՝ «Աստված տվել է, էլ մարգարեն ի՞նչ անի»: Մարգարեին մնում է միայն հաստատել աստծո տվածը. պետք է եկեղեցի, որ տվյալ դեպքում՝ մարգարեն գրաքննադատն է: Հաջողված գրաքննադատ լինելու համար անհրաժեշտ է լավ գրող լինելու ընդունակություն:

Գերմանացի դրամատուրգ Ֆրիդրիխ Վոլֆի խոսքերով. «Քննադատությունը գրական ճանաչողության մայրն է»: Գրականության ճանաչման ու արժևորման մեջ մեծ տեղ ունի գրաքննադատը, որին ոչ միայն բնատուր տաղանդի անկայությունն է պարտադիր, այլև բազմակողմանի գիտելիքները, կյանքի դասերն ու հարուստ կենսափորձը: Գրող լինելու համար բավական է ծնվել տաղանդավոր, սակայն գրականագետ դառնալու համար տաղանդից գատ շատ կարևոր է նաև տքնաջան աշխատասիրությունը:

Վաչե Պարտիզունին հայ քննադատների և գրականագետների ամենահայտնի դեմքերից է: Նա անցել է խոչընդոտներով լեցուն ճանապարհ. գրական միջավայր մտնելով 30-ական թվականների մռայլ ժամանակաշրջանում՝ անցել երկրին ու ժողովրդին պատուհասած դժվարին ու հետաքրքրական իրադարձությունների թոհուբոհով, որն էլ գրականագիտական մտքի հասունության, աշխարհայացքի ձևավորման ու առաջադիմության հիմնական ազդակն է:

Պարտիզունին բեղմնավոր գրիչ ունեցող գրականագետ է, նրա հետազոտությունների ոլորտները բազմազան են և չեն սահմանափակվում գրականության պատմության մի շրջափուլի կամ որոշ հեղինակների ստեղծագործությունների ուսումնասիրմամբ:

Պատահական չէ, որ գիտական հոդվածների վերջին ժողովածուներից մեկն ունի «Պայծառ համաստեղություն» խորագիրը, ուր անդրադարձ է կատարվել հայ գրականության աստեղային այն համաստեղությունը, որը գրականագետի հետաքրքրություն-



Վաչե Պարտիզունի

ների մեծ առանցքն է կազմում:

Այն ընդգրկում է գրականության պատմության հեղինակավոր մի շարք գրողների ստեղծագործություններ: Վաչե Պարտիզունուն առավելապես հետաքրքրում էին նոր և նորագույն գրականության նշանավոր դեմքեր՝ Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Մուրացյան, Շիրվանզադե, Յովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ն. Չարյան, Վ. Տերյան, Ե. Չարենց, սակայն ամենամեծ նվիրումով և խորությամբ ուսումնասիրել է Վահան Տերյանի կյանքն ու ստեղծագործությունը, որն էլ գրականագետի ամենամեծ նվաճումներից է:

Վաչե Պարտիզունու «Պայծառ համաստեղություն» ժողովածուն հրատարակվել է 1987 թվականին, ծննդյան 70-ամյակի առիթով և ներկայացնում է 60-80-ական թվականներին գրված միջին և փոքր ծավալի ուսումնասիրություններն ու հոդվածները: Ժողովածուում տեղ գտած նյութերի զգալի մասն անտիպ էր: Որոշները տպագրված են եղել պարբերական մամուլի էջերում կամ առանձին աշխատությունների մեջ: Նախկինում տպագրվածները մասնակի վերամշակման են ենթարկվել: Այս ժողովածուում տեղ գտած գիտական հոդվածները հատկապես արժեքավոր են աղբյուրային հղումների առատությամբ, որոնք վկայում են, որ ցանկացած նյութի անդրադառնալիս կատարվել է հետևողական աշխատանք, ուսումնասիրվել են մատենագիտական տվյալներ, արխիվային փաստաթղթեր, գիտական հետազոտությունների բազմատեսակ շտեմարան, որոնք նպաստել են գրականագիտական հիմնավորումների ու բացահայտումների գիտական հիմքերը կայունացնելու և դրանցից հնարավորինս հավաստի հետևությունների հանգելու համար:

Գրականության պատմության շառավիղը Պարտիզունու գրականագիտական փոքրածավալ հոդվածներում բավականին ընդարձակ է, ուր տեղ գտած տարբեր նախասիրությունների ու ոճերի հեղինակներից կազմվել է մի պայծառ համաստեղություն՝ կողք կողքի զուգադրելով Թումանյան ու Տերյան, Իսահակյան ու Տերյան, Տերյան ու Չարենց, նշմարելով գեղարվեստական հին ավանդներն ու նոր ժամանակների շունչը:

Մեծ լուսավորչի՝ Խ. Աբովյանի պայծառ կերպարին Պարտիզունին անդրադարձել է վաղուց՝ ամբողջացնելով նյութերը 1952 թվականին տպագրված «Խաչատուր Աբովյան» աշխատության մեջ: Սույն ժողովածուի «Սրբազան պատգամ» և ««Վերջ Յայաստանի» վեպի ժանրի պրոբլեմը» հոդվածներում կրկին քննության են ենթարկվում աբովյանական խնդիրներ, որոնցից կարևորվում

Է հատկապես «Աբովյանը և Ռուսաստանը» գերխնդիրը: Գրականագետի բարոյականությանը հատուկ սթափ մտածողությամբ քննության է ենթարկվել որոշ աբովյանագետների՝ մեծ լուսավորչին ցարամուլ համարելու փաստը, սակայն նշվել է, որ նրանցից շատերը տուրք են տվել ժամանակաշրջանի քաղաքական պահանջներին: Պարտիզունին վկայակոչում է ամենայն հայոց բանաստեղծի՝ Յոզի. Թումանյանի վերաբերմունքն Աբովյանին՝ նշելով, որ «Վերք Յայաստանի» վեպով մեծ լուսավորիչը ներկայացնում է ողջ հայ ժողովրդի տենչ-երագանքը՝ տեսնել Արևելյան Յայաստանը Ռուսաստանին միացած:

Պարտիզունին քննության է ենթարկել նաև «Վերք Յայաստանի» վեպի շուրջ ծագած ժանրային պատկանելության հարցերը և բազմաթիվ համոզիչ փաստարկներով համալրել վեպի այդ հարցով մտահոգված այն անձանց շարքը, որոնք երկը համարել են ժամանակակից-արդիական, ուր հեղինակին մտահոգող խնդիրները չեն տեղավորվում գրականության տեսության դասագրքերի սահմանած օրենքներում, և իրենց ասելիքի պահանջների թելադրանքին հետևելով՝ խախտում են ժանրային պարտադիր օրենքները:

«Միքայել Նալբանդյանը և արևմուտքը» հոդվածում Պարտիզունին ներկայացնում է Աբովյանի անմիջական հաջորդի՝ հեղափոխական դեմոկրատի՝ արևմուտքի հանդեպ ունեցած քննադատությունը, որը բարձր աստիճանի է հասնում Նալբանդյանի երկերում: Ամեն կարգի բռնության թշնամին արևմուտքը գիտեր ականատեսի լավատեղյակությամբ, որով էլ պայմանավորված է աշխատությունների բարձրարժեքությունը: Պարտիզունին նշում է, որ Նալբանդյանն իրեն հատուկ նպատակասլացությամբ 1862 թվականին Փարիզում հրատարակած «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» հրապարակախոսական երկում պատկերում է արևմտյան երկրներում բռնկված տնտեսական ճգնաժամը, որն ամբողջ դաժանությամբ ծանրացել էր աշխատավոր ժողովրդի ուսերին, իսկ օրեցօր հարստացող բուրժուազիան պատուհաս էր դարձել ոչ միայն սեփական, այլև գաղութացված ժողովուրդների գլխին՝ փորձելով իր հակամարդկային գործողությունները քողարկել «մարդասիրության» և «քաղաքակրթություն տարածելու» կեղծ կարգախոսների ներքո: Պարտիզունին հատկապես ընդգծել է Նալբանդյանի անսահման ատելությունը Արևմուտքի բուրժուական պետությունների հայկական գործերին միջամտելու մեթոդների վերաբերյալ և նշել, որ հեղափոխական-դեմոկրատը, լինելով հայ իրականության մեջ առաջինը, դեռևս

19-րդ դարի կեսերին հայ ժողովրդի ազատության հարցը կապեց հեղափոխական Ռուսաստանի հետ: Իհարկե, գրականագետը ընդունում է, որ բուրժուական Արևմուտքի անողոք քննադատի՝ Նալբանդյանի վերաբերմունքը ողջախոհ է ու համակողմանի: Նա, բացահայտելով հանդերձ բուրժուական հասարակության արատներն ու հակասությունները, չի անտեսում արևմուտքի տնտեսական նվաճումները, մշակույթն ու գիտությունը: «Յայրենի անձուկով այրված, տոչորված» հողվածում Պարտիզունին ըստ արժանվույն գնահատել է Նալբանդյանի հեղափոխական-հայրենասիրական գործունեությունն ու անուրանալի նվիրումը սեփական ազգի բարօրության համար՝ նրան որակելով «ազատության գինվոր» պատվանունով:

Վաչե Պարտիզունին «Պայծառ համաստեղություն» գրքի «Արվեստի հզոր ուժով» հոդվածը նվիրել է Ալեքսանդր Շիրվանզադերի ստեղծագործության քննությանը՝ նրան որակելով կյանքը խորը թափանցած և ժամանակի կործանիչ ազդեցության հետ «հաշվի չևստող» մեծ արվեստագետ, որի գրական դիմանկարը չի խամրում ժամանակի ընթացքում:

Ինքնատիպ գրականագիտական ուսումնասիրություններ են սույն գրքում տեղ գտած «Յովի. Թումանյանը և Վ. Տերյանն», «Ավ. Իսահակյանը Վ. Տերյանի մեկնաբանությամբ», «Վ. Տերյանը և Ե. Չարենցը» զուգադրությունները, որոնք հրատարակվել են նաև Պարտիզունու 60 ամյակին նվիրված «Տաղանդի ուժը» ժողովածուում: Հատկապես կանգ առնենք «Վ. Տերյանը և Ե. Չարենցը» հոդվածին, որը գրականագիտությանը և մասնավորապես Պարտիզունուն հուզող օրակարգային հարց էր ժամանակաշրջանի գրաքննադատության մեջ՝ նկատի ունենալով, որ գրականության պատմությունը նաև գրողների հարաբերությունների ու ամնչությունների պատմությունն է: Պարտիզունին ամենաընդհանուր ձևով թեման բաժանել է երեք հարցերի՝ Ա/ Տերյան – Չարենց գրական ամնչությունները, Բ/ Տերյանը Չարենցի մասին և Գ/ Չարենցը Տերյանի մասին: Թեման խորությամբ քննության է աննվել 20-րդ դարի հայ գրականության առաջին տասնամյակի համապատկերում: Պարտիզունին համոզված է, որ Չարենցը դուրս է եկել Տերյանի պոետական դպրոցից, հատկապես վաղ շրջանի երկերում, սակայն իրավացիորեն գտնում է ,որ չի կարելի հարցը չափազանցել և այն վերագրել Չարենցի մինչհոկտեմբերյան ողջ ստեղծագործությանը:

Տերյանը Չարենցի համար երիտասարդության արձագանքն է, անցյալի կարոտների ու նվիրական հուշերի ոգեղեն անուրջների

մուսան, որի ազդեցությունը կրել է անգամ կյանքի վերջին տարում գրված ստեղծագործություններում: Տերյանական մեղեդիները սարսուռներ են ցանում բանաստեղծի հոգում, ուր ծնվում է կարոտի երգը.

Այլ երգ չունի էլ հոգին իմ, լուկ, երբ կարդում եմ Տերյանը,-
Լուկ մանկականն ու նաիրյանը,- Ղարսն է հիշում իմ հոգին:

Տարիների հեռվից հեշտ է հետևություններ անել, համաձայնվել կամ կասկածելի համարել ցանկացած, թեկուզ և ճշմարիտ գիտական նորույթ ու անգամ հիմնավորում, սակայն պետք է երբեք չմոռանալ մարդկային մտքի ծանրաբեռնվածության, տարիների տևական ու համառ ջանքերի մասին, որոնց արդյունքում է ծնվում ցանկացած արժեքավոր գործ: Բնականաբար անհնար է անտեսել նաև մարդկային գործունը, որը գրականագիտական ուսումնասիրությունների ամենակարևոր և որոշիչ հիմնաքարերից է:

Լայն ընդգրկումների գրականագետ է Վաչե Պարտիզունին: Նա ոչ միայն գրականության հմուտ պատմաբան է, այլև լուրջ գրական քննադատ: Նրա հարցասիրությունների ոլորտն ընդգրկելով 19-20-րդ դարերի նշանավոր գրողներին՝ ի հայտ է բերում տվյալ թեմաների ու նյութերի հազվագյուտ կենտրոնացում և գրականագետի իր խորաթափանց դիտողականությամբ նշված հեղինակների հետ միասին կազմում է հայ գրականության աստղաբույլի մի պայծառ համաստեղություն, որը տեսանելի է անգամ տիեզերական հեռավորությունից:

Հովհաննես Շիրազը և ազգային ողբերգությունը

Ցեղասպանության վտանգածին եու-
թյան բացահայտումը ոչ միայն հայ,
այլև բազմաթիվ օտար հեղինակնե-
րի գեղարվեստական ստեղծագործու-
թյունների նյութ է դարձել, որոնք հան-
րության իրազեկման համար ոչ պակաս
կարևոր են պատմագիտական աշխա-
տություններից, ավելին՝ զգացմուն-
քային են և տպավորվող պատկերներով
դաջվող գիտակցության մեջ: Հողագնդի
շարունակական պտույտի նման պատ-
մությունն էլ է կրկնվում, ուստի մեր ին-
դիրը ոչ թե կուրծք ծեծելն ու անցյալի
ողբն է, այլ վերահաս վտանգից, որը
կանխատեսելիորեն ամեն օր մեր դուռն է թակում, որոշ չափով
ապահովագրված լինելու համար մարդկության հիշողությունը
միշտ թարմ պահելն է: Այս գործում բազմաթիվ այլ միջոցների կող-
քին իր պատասխանատու դերն ունի գրականությունը: Բոլորովին
էլ մեր մեղքը չէ, որ հայ գրողների ստեղծագործություններում որ-
պես մշտական թեմա է հաստատվել հայրենի երկրի ու հարազատ
ժողովրդի ողբերգական կորստի կսկիծը:

Չերչիլի ցինիկ անկեղծացման. «Մոսուլի նավթն ավելի թանկ է,
քան հայերի արյունը», Հիտլերի կարճամիտ ապահովագրության.
«Ռ՞Վ է այսօր հիշում հայոց կոտորածների մասին» և նորօրյա գեր-
տերությունների խուլ ու համրի կարգավիճակից բազմազբաղ ու
գործունյա, առաջադեմ ու դիվանագիտորեն իմաստուն ձևանալու
բարդության միջև տարբերությունը քիչ է: Պատահական չէ, որ
20-րդ դարի պատանի քնքուշ քնարերգուն՝ Հովհաննես Շիրազը,
ոչ թե ընդամենը բարձրաձայնում է, այլ «մռնչում».
«ազատություն Մասիսին»: Անցյալի անխորհուրդ անդատապարտելիությունը,
լռությունն ու ապագայի տագնապները նրան հանգիստ չէին տա-
լիս:

Մեղք կա՝ դարեր էլ հնանա՝ չի փրկվի՝ կխաչեմ,
Իմ սուրբ ցեղին եղեռնողին մեղացն ամ ու ժամ չկա,
Հազար տարվա իր սև մեղքն էլ ով չքավի՝ կխաչեմ:²²

22 Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 1, Ե., 1981, էջ 328:



Հովհաննես Շիրազ

20-րդ դարի մոլորությունների, սահմանափակումների, անձնապաշտության, անտեղի կորուստների, գահավեժ անկումների ու նաև երբեմն կայծակող վերելքների խաչմերուկում հայտնված Շիրազ-երևույթի մարգարեական խոսքը երեկվանից առավել հնչել է այսօր, առավել պահանջված:

Միշտ չես մնա մի բուռ ածու, իմ նորաշիվ Յայաստան,
Ծաղկիր՝ ընդդեմ խուլ աստծու, գիշեր ու տիվ, Յայաստան,
Այնպես ծաղկի, որ ձագերիդ բույնը դնես Մասիսին...²³

Շիրազն իր ստեղծագործությամբ փորձել է ազգի ապահովության, պաշտպանության, շահերի, պատմական հայրենիքի ազատագրման ու արդարության հաստատման համար ուղիներ նշել:

1. Ժողովրդի հիշողության մեջ պահել պատմական Յայաստանն իր տեղանուններով, շարունակ հիշեցնել Արևմտյան Յայաստանի՝ հայերի հնամենի բնօրրան լինելու փաստը, ճանաչել տալ Յայաստանն իր ամբողջության մեջ և քարոզել հայրենասիրություն: Պատահական չէ, որ մի շարք ստեղծագործություններում բանաստեղծը հիշեցնում է հայոց լեռների, գետերի, լճերի անունները, ավա՛ղ...

Երագիս մեջ Վանա ծովը, Սասունն ու Վանը տեսա,
Ապարանջան աղբյուրներս նորից մեր տանը տեսա,
Ելա Մասիսն համբուրեցի, բայց երբ խիկոյից գարթնեցի՝
Լացի... քանզի միայն մի բուռ լացող Սևանը տեսա:²⁴

2. Բանաստեղծը հորդորում է քաջ լինել և միշտ պատրաստ՝ ջախջախելու նախահարձակ թշնամուն՝

Վարդանվելով՝ այս էլ ահա տասն ու վեց դար անդադար
Մասիսվել է,- ահա ինչու չի մահանում հայ ոգին:²⁵

3. Եղեռնապատումը հայ նոր և նորագույն գրականության մշտամնա թեմաներից է, որն իրեն եղեռնածին համարող բանաստեղծի՝ Յովհաննես Շիրազի պոեզիայում ի լուր աշխարհի հնչում է առավել բարձրագույն ու ահեղաձայն՝ դուրս գալով ազգային նեղ սահմաններից:

23 Նույն տեղում, էջ 322:

24 Նույն տեղում, էջ 320:

25 Նույն տեղում, էջ 320:

Ես հանգիստ չունեմ, քանի չեմ կարդում
աշխարհե-աշխարհ
Հոգեհանգիստը կոտորածների հայոց անհամար,
Որոնք մորթվեցին բաց աչքի առաջ անհոգի մարդկանց:²⁶

4. Շիրազն առաջարկում է միջազգային դատ պահանջել մեծ ոճրագործության մեղավորներին պատժելու համար, որպեսզի այն երբևիցե չկրկնվի: Եղեռնը քանի դեռ չի ստացել համարժեք գնահատական շարունակվում է: Աշխարհը որպես դաս պիտի սերտի հայերի նկատմամբ կատարվածը, որպես հականիշ ընդունվի ազգերի ու ժողովուրդների ապրելու իրավունքի հանդեպ: Բազմաթիվ ստեղծագործությունների միտքը խտացված է հատկապես «Հայոց դանթեականը» դատաստամատյանում, ուր հայրենասեր բանաստեղծը ոչ միայն վկայակոչում է հայ ժողովրդին պատուհասած ցեղասպանության սահմնկեցուցիչ տեսարանները, այլև դատապարտում է աշխարհի առաջադեմ համարվող մարդկությանը լռելու համար: Բանաստեղծը համոզված է, որ ոճիրի, ցավի հանդեպ անտարբեր լինելը նույնքան մեղսալի է, որքան այն իրագործելը: Հայրենապատումի քառյակներից մեկում գրում է.

Վշտի ոչ մի կնճիռ չկա արևմուտքի ճակատին,-
Ինչո՞վ ամպեմ, որ կայծակվեմ սուլթանների ճակատին,
Կես դար անցավ, բայց մահիկը դեռ չի հանվել կախաղան,
Մասիս, գեթ մի քար տուր՝ խփեմ արևմուտքի ճակատին...²⁷

Շիրազը ոչ թե բանաստեղծին հատուկ հուզական-քնարական ապրումներ է ներկայացնում պատմական կոնկրետ փաստերի վերաբերյալ, այլ քաղաքացիական ճշգրիտ մեկնաբանությունների է հանգում և պահանջում արդարացի վերաբերմունք եղածի և կատարվածի իրավական մեղանջումով:

Հեռվից օտար բռն ու մեղուն, երբ մեր ծաղկանց հոտն առան՝
Եկան, ելան մեր լեռները, երկրիս մեղրահորդն առան,-
Ասին, դրախտն այս է որ կա, ու բույն դրին յոթնահող,
Բայց լռեցին աստվածներն էլ, երբ իմ հայոց բոթն առան:²⁸

26 Նույն տեղում, էջ 314:

27 Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 1, Ե., 1981, էջ 330:

28 Նույն տեղում, էջ 330:

5. Ոճրագործ ոհմակի դեմ միայնակ մնալու փաստը որպես պատմական դաս պարտադրում է լինել միասնական:

Զեինք բեկվի թե՛ չորս կողմից հրոսակը չլիներ,-
Թե միաբան ազգի մարմնում իր քոսակը չլիներ,-
Տես՝ որդիներ խնձորի որդն իր միջից է, աստված իմ,
Այժմ մերն էր Ավարայրն էլ, թե Վասակը չլիներ...²⁹

Բանաստեղծը հատկապես խոսքն ուղղում է սփյուռքահայերին, որոնք խաբված ջրերի նման օտար ափեր են շտապում՝

Անուշ է թվում ձեզ կանչող հեռուն,
Բայց դուք կկորչեք ծովերում օտար,
Դարձեք՝ ծովանա թող հայոց առուն,
Մի՞թե մոր գիրկը նեղ է ձեզ համար...³⁰

Մեզ անհրաժեշտ է միաբանվել, որպեսզի հաղթահարենք ազգային մեծ ողբերգության հետևանքներից գոնե անջատ ու անմիաբան ապրելու անեծքը: Բանաստեղծի գերագույն երազանքն է տեսնել հայ ժողովրդին Մասիսի շուրջը բոլորած, հավաքական ու հայալեզու:

Պառկում՝ ականջս դնում եմ հողին՝ իմ սերն է խոսում,
Իմ հեռու Վանա ժայռի մեջ գոցված Միերն է խոսում,
-Այն ժամ՝ դուրս կգամ, երբ միաբանվի իմ ազգն սփյուռքված,
Երբ իմ բանտարկված Մասիսն իմանա՝ իր տերն է խոսում...³¹

Ցեղասպանությունն անհերքելի, անքննարկելի իրողություն է, և աշխարհասփյուռ հայության բեկորների համար այն անցյալը հիշեցնող ցավալի հուշից բացի գոյության անտրոհելի բաղադրիչ է:

Գիտեմ ինչու այսքան բարձր է
Մասիս սարը հույսիս պես,
Աշխարհի ողջ ծայրերին հասած
պանդուխտ հայեր կան պես-պես,
Մասիսն այսքան բարձր է կանգնել, որ ամենքին երևա,
Որ տեսնի հայն ու հայ մնա, ինչպես Մասիսն իր այս վես:³²

29 Նույն տեղում, էջ 332:

30 Հովհաննես Շիրազ, Զևար Հայաստանի, գիրք 2, Ե., 1964, էջ 160:

31 Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 1, Ե., 1981, էջ 322:

32 Հովհաննես Շիրազ, Զևար Հայաստանի, գիրք 2, Ե., 1964, էջ 137:

6. Ճանաչել ու գնահատել երկիրն ու պետականությունը, աչքի լույսի պես պահպանել լեզուն, կրոնն ու մշակույթը, որի շնորհիվ՝

Կհասնի հայ ցեղն իր հայր Մասիսին,
Եվ հայ գրերը ոչ թե ավագին,
Այլ Արարատի ճակատին կգրենք...³³

7. Երբեք չկասկածել, որ Հայաստանը հարատևելու է, իսկ հայոց մեծ ողբերգությունը ոչ թե պետք է մնա մեր քնարի մշտանվագ լարը, այլ ընդամենը հիշողությունը պահպանելու այն ուժը, որն ապրելու և հզորանալու կորով է ներարկելու:

Եղեռնագարկ էլ եղանք, բայց Նորեն
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:³⁴

Ողբերգության թեմային վերաբերվող գործերում հայրենի գրականության մեջ առանձնանում է Հովհաննես Շիրազի քնարերգությունը: Եղեռնի թեման ընդգծող երգերում կարևոր առանձնահատկություններից է համարձակությունը, որի առաջին արտահայտությունը ժամանակաշրջանի մնայլ մթնոլորտում լռելու փոխարեն ավելի վճռական լինելն է: 1942 թվականի դժնի օրերին շիրազյան խիզախումներից են «Բանաստեղծի ձայնը» ժողովածուի՝ մեծ հայրենականի առաջին օրերին գրված, բազմազգ ու խորհրդային եղբայրական ժողովուրդների՝ ֆաշիզմի դեմ ուղղված բոցաշունչ, կոչային ստեղծագործությունների կողքին հայոց եղեռնին վերաբերվող քերթվածները: «Կանգնած տրտմում է կանաչ եղևնին» բանաստեղծության առաջին տողերում ամբողջովին քողարկված է կանաչ եղևնու պատկերը, սակայն բանաստեղծն առանց վարանելու բացահայտում է միտքը՝

Շուրջը թնդում է ուրախ Նոր տարին,
Մարդիկ խմում են, և անհոգ պարում,
Այնինչ՝ լալիս է Հայոց եղևնին,
Մորթված անտառն է նա մտաբերում...³⁵

Հովհաննես Շիրազի հայրենասիրական քնարերգության մեջ ազգային ողբերգության թեման բազմաբնույթ է: Հայաստանի պատմական ճակատագիրը, անցյալի մղձավանջը, անցած ճանապարհը չեն վրիպել բանաստեղծի ուշադրությունից, որի վրա

33 Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը, Ե., 1991, էջ 290:

34 Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 1, Ե., 1981, էջ 112:

35 Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 1, Ե., 1981, էջ 113:

Էլ հենված են դրանցից բխող մյուս թեմաները՝ Հայաստանի վերածննդի երազանքը, օտար ափերում ապրող հայության ճակատագիրը, եղեռնի ճանաչումն ու դատապարտումը, հայի տեսակի՝ առաքինի կերպարին, հայոց լեզվին ու մշակույթին հավատարիմ մնալու պահանջը, ինչպես նաև անցյալի հիշողությունները և հայրենիքի հաղթական ապագայի հանդեպ ունեցած հավատը:

Օսմանյան Թուրքիայի հանդեպ անսահման ատելությանը զուգահեռ՝ Հ. Շիրազը, որքան էլ կարող է տարօրինակ թվալ, չի այրում հայ և թուրք ժողովուրդների միջև եղած բոլոր կամուրջները, այլ դիվանագիտական սթափ ժեստով ընդգծում է հասարակ ժողովրդի և հայաստյաց կառավարության հայացքների և շահերի հակադրությունը: «Հայոց դանթեականը» պոեմում թուրք կինն աղաղակում է.

Ախր, Էրմանին դուշման չէր մեզի,
... Մեր վզին օձ է մեղքը Ելդիգի,
Որդովս եմ երդվում՝ սրանք մեղք չունեն,
Ծովեց արյունը խեղճ հայ տղայոց,
Անեծքը թոկ է վզին մեր որդոց,
Ցեղ են մորթում, ցե՛ղ, այն էլ գարունով,
Ելդզ, խեղդըվե՛ս էս ծով արյունով...³⁶

Միջազգային իրավական դաշտում, որտեղ այսօր էլ ուժն է թելադրում իրավունք, որպեսզի չխլացվի ճշմարտության ձայնը, մեզ անհրաժեշտ են շիրազյան պոեզիայի լավատեսական նոտան ու մինչև հաղթանակ գնալու անհաղթ ոգին: Ազգային ողբերգության թեման արդեն իսկ թելադրում է կոչային, պաթոսային, հրապարակախոսական լիցքեր, որից ըմբոստ պոետի պոեզիան ոչ թե տուժում է ,այլ ստանում իրեն բնութագրող երանգավորում: Հատկապես հատու է աշխարհին ուղղված հորդոր-նախատիևքը՝

Աշխարհ, դու ինձ մի նայիր,
Իմ ողջ ազգին փայփայիր:
Վախենում եմ, թե նրան
Դու պարտք մնաս հավիտյան:³⁷

Շիրազը հայրենացավով տառապել է իր ստեղծագործական ճանապարհի ողջ ընթացքում, անգամ ծնված օրից մինչև մահ: Դրա վկայություններն են. «Ես ծնվել եմ ձորերում,/ Եղեռնի սև

36 Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը, Ե., 1992, էջ 56:

37 Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 1, Ե., 1981, էջ 9:

օրերում...» մինչև՝ «Տեսնեմ Անին ու Լոր մեռնեմ... » ստեղծագործությունները: Մասամբ իրականացվեց նաև նրա կտակը՝ թաղվելու Մասիսի լանջերին:

Եվ եթե հայտնի ճշմարտություն է, որ պատմությունը ննջեցյալների, ողջերի և դեռ չծնվածների սրբազան դաշինքն է, ապրողներս չմարած պարտքեր ունենք հատուցելու անցյալի մեր հիշատակներին ու գալիք սերունդներին: Այսօր եթե շատ ուշ է, ապա ճիշտ ժամանակն է արդարացի ներկայացնելու ցեղասպանության հարյուրամյա ոճիրը, որը քանի դեռ չի դատապարտվել, շարունակվում է: Իսկ եղեռնածին բանաստեղծի ազգային ողբերգության ու ցավի երգը դասագիրք կդառնա «մանուկ մարդկության սեղանի վրա»:

Գրականություն

1. Հովհաննես Շիրազ, Զևար Հայաստանի, 3 գրքով, Ե., 1958-74:
2. Հովհաննես Շիրազ, Երկեր: 5 հատորով, հհ. 1-4, Ե., 1981-1986:
3. Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը, Ե., 1990, 1991, 1992:

Երկխոսություն երկնքից. Համո Սահյան – Մարիա Հակոբյան

Նրանք երկու ընկեր էին ,
Նույն երամի երկու թռչուն,
Մեկը մեկից թև էր առնում,
Մեկը՝ մեկի թևով թռչում:³⁸
/Մարիա Հակոբյան/³⁹

Ամմենեւի էն գործերը Աստծո: Իսկ սերը, որ ճշմարտության ճշմարտությունն է, բացահայտման մտավախությունն չունի: Այն ծնվում է անսպասելի և երբեք չի լքում, չի հեռանում, այլ մնում է քեզ հետ՝ ինչպես քո սեփական էությունն ու ստվերը: «Ի՞նչ է պետք մարդուն, / Սիրո գաղտնիքը,/ Լույսի, ստվերի հրաշալիքը:/ Վկա է Աստված,/ Բնությունն ինքը,/ Բաց չանեք հանկարծ / Սիրո գաղտնիքը...»⁴⁰



*Համո Սահյան
և Մարիա Հակոբյան*

Սակայն սեր ունենալու երջանկությունը բոլորին չէ, որ տրվում է, ուստի պետք է գնահատել ու պահպանել, հակառակ դեպքում ոչ թե կհեռանա, այլ ճակատագրի ծանր խաչի նման կհետևի ողջ կյանքում: Իսկական կեսին հանդիպելն ու նկատելը ևս երջանկություն է: Հին արևելյան ավանդույթն է ասում. «Լեյլիին սիրելու համար՝ Մեջլումի աչքերն են պետք»: Իսկ Սահյանը գրում է.

Տարօրինակ է սերը բարեկամ,
Ոչ ոք նրանից բան չի հասկանում ,
Հաճախ այնտեղ է նա հասկահանում,
Ուր չի գիշերում քարաքոսն անգամ:
Մտնում է հաճախ անապատ ու շամբ,
Ծաղկում է ճահճում անմշակելի, -

38 Մարիա Հակոբյան, Ոսկի տերևաթափ, Ե., 1973, էջ 23:

39 Մարիա Հակոբյանը Համո Սահյանի 1-ին կինն էր, բժշկուհի էր, բանաստեղծուհի, ամուսիններ են եղել 1945-1979 թթ., 1946-ին ծնվել է ավագ որդին՝ Նաիրին, 1954-ին կրտսերը՝ Արայիկը:

40 Մ. Հակոբյան, Ոսկի տերևաթափ, Ե., 1978, էջ 92:

Հաճախ թռչնում է մանուշակների
Ու հասմիկների հարևանությամբ...⁴¹

Երկրային կյանքում սիրո մեջ երջանիկ կարող էր համարվել Համո Սահյան և Մարիա Հակոբյան զույգը, որին Աստված մեծ շնորհ էր արել. բացի բանաստեղծա- կան ձիրքից նաև համբու- րել էր ճակատներն ու սիրո անբացատրելի լույս տվել: Նրանց միությունը, դատելով անհատական հատկանիշներից, մարդ- կային որակից ու խառնվածքից, երբեք չէր խաթարվելու: Ցա- վոք, երկրային կյանքում այն տևեց ընդամենը 34 տարի, սակայն շարունակվում է ապրել հավերժության մեջ: Դրա վկայությունն է նրանց ստեղծած գրականությունը, որը պերճախոս երկխոսու- թյուն է երկնքից: Ինչպես վկայում է նրանց որդին՝ Նաիրի Սահյա- նը, այս երկու անհատականությունները բավականին սման էին իրար. երկուսն էլ տաղանդավոր, ուժեղ, ազնիվ, հզոր, իսկ հայտ- նի ճշմարտություն է, որ սմանները դժվար են լեզու գտնում: Բացի այդ, շրջապատի գորշ մթնոլորտը, բանասարկություններն ու չկա- մությունը, ինչ-որ տեղ նաև նենգավոր թյուրիմացությունը, իրենց բացասական ազդեցությունն ունեցան նրանց ճակատագրերում:

Ոչ ուրիշների գրպարտությունը,
Ոչ քո ընկճված հպարտությունը,
Ոչ հաղթանակած քո պարտությունը,
Եվ ոչ էլ պարտված քո հաղթությունը,
Երկուսիս այս մեծ դժբախտությունը
Հարկավոր չէին ոչ ինձ, ոչ էլ քեզ:⁴²

Այս երկու բանաստեղծների իրական աշխարհի ըմբռնումն ու հոգևոր-մշակութային յուրացումը սնունդ էին առնում միևնույն միջավայրից, որի արդյունքում զարմանալի չէ, որ նրանց գե- դագիտական ընկալումներն ու պատկերացումները բազմաթիվ հարցերում համընկան: Չնայած ստեղծագործությունների առա- ջին հայացքից թվացող հետաքրքրաշարժ սմանությանը՝ բառա- պաշարի, հանգի, անկեղծության, մի շարք գեղարվեստական արժանիքների, նրանք նաև տարբեր են հատկապես քնարական հերոսի, կյանքի ու մահվան, լինելու ու կայանալու որոնման մեջ: Ինչպես Շչորոս Դավթյանն է նշել. «Մարիա Հակոբյանը Համո Սա- հյանի բացած հունով չի քայլում, քանզի ինքը վաղուց բացել է

41 Հ. Սահյան, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 2 Ե., 1984, էջ 58:

42 Նույն տեղում, հ. 1, էջ 194:

թեն համեստ, սակայն ինքնուրույն արահետ:»⁴³

Մարիա Յակոբյանի գուտ կանացի, քնքուշ պոեզիան հնչում է շատ մտերմիկ: Այն վստահելի, հարազատ մեկին շշուկով սրտինդ հայտնելու անկեղծությունն ունի, որից ընթերցողին փոխադարձ համակրանք ու սրտացավություն է փոխանցվում: Նրա պոեզիան իր երազկուն հոգու ճիշտ պատճենն է և այնքան է նուրբ, որ իր խոսքերով ասած «մանուշակագույն բարակ մուարից թաշկինակ» է պետք, որ կոպիտ մատնահետքեր չդրոշմվեն վրան, ու վաղորդյան շողից, արցունքի ցողից, շուրթերի դողից չխոնավանան ու չխախտեն տողերի տակ թաքնված առինքնող միամտությունը:

Երկնային լույս սերը երկուսի հոգում էլ ծնվում է աննկատ, այնպես, ինչպես բնության մեջ ներդաշնակորեն աճող ու ծաղկող ամենը, ինչ վեր է գիտակցությունից ու քար կանոններից: «Ես եությամբ դարձա դու, / Դու եությամբ դարձար ես, / Խառնվեցին երկու ես / Ու դարձան մեկ՝ ես ու դու»⁴⁴ կամ «Եղել է արդեն երանելին, / Այս ի՛նչ հրաշքով իրար գտանք, / Բախտից չեմ ուզում ես ավելին, / Միայն գտածը ձեռքից չտանք», - գրում է Սահյանը, իսկ Մարիա Յակոբյանը կարծես շարունակում՝ «Ոչ որոնել եմ, ու ոչ երազել, / Դու երկնքից ես ինձ բաժին հասել:»⁴⁵

Եթե Մ. Յակոբյանի պոեզիան ամբողջովին սիրո տարաբնույթ երգ է հիշեցնում, ապա Յամո Սահյանի ստեղծագործությունները դիտարկելիս թվում է՝ սիրո երգն աննշմար է: Սակայն այն ամենուր է. բնության ու մարդու, հայրենիքի, կյանքի ու մահվան, խոհափիլիսոփայական երգերում, որոնց համար սիրո բերկրանքն ու ավելի շատ տառապանք - ցավը հիմք են հանդիսացել՝ նոր իմաստ հաղորդելով ասելիքին: «Իմ տխուր տողերն արդյոք չեն հերքում, / Որ քո անունը չեմ հիշել երգում:»⁴⁶ / Յ. Սահյան / Մարիա Յակոբյանին թվում է՝ իսկական սերն այնքան էլ նման չէ երազածին, այն ավելի շատ իր հորինածն է: Իսկ երբ շոշափելի են դառնում տարբերությունները, հիասթափությունը չի ուշանում.

Ես քեզ արարեցի սիրո երգի նման,
Քեզ կյանք նվիրեցի ու երազներ անվերջ,
Ցուլերի փունջ առա իմ աչքերից վառման,
Թաքուն շաղ տվեցի քո սև աչքերի մեջ...⁴⁷

43 Ծչորս Դավթյան, Լուսապսակ հավերժի ճանապարհին, Մ. Յակոբյանի

«Մարինե վանքում» գրքի առաջաբանը, Ե., 2004, էջ 3:

44 Յ. Սահյան, Երկեր 2 հատորով, հ. 2, Ե., 1984, էջ 132:

45 Մ. Յակոբյան, Մարինե վանքում, Ե., 2004, էջ 27:

46 Յ. Սահյան, Երկեր 2 հատորով, հ. 2, Ե., 1984, էջ 255:

47 Մ. Յակոբյան, Մարինե վանքում, Ե., 2004, էջ 100:

Եվ զարմանալի չէ. որքան էլ երգի նման արարվի սերը և վարար ու անհամբեր զարուն հիշեցնի, միևնույն է, եթե հորինված է, մնալու է անհաս: Եվ մի՞թե զաղտնիք ենք բացահայտելու նկատելով, որ սերը շինծու չի կարող լինել: Ուղղակի անհրաժեշտ է նկատել անկեղծ զգացմունքը և ընդունել այնպիսին, ինչպիսին կա: Դ. Սահյանը մի շարք բանաստեղծություններերում տալիս է այս անհիմն նախատիևքի պատասխանը: «Փնտրում ես դու ինչ-որ հանցանք, / Դեզնում ես ինձ ու չես ներում, / Բայց կա ինչ-որ մի կարեկցանք / Զո հեզնական ժպիտներում:»⁴⁸ Զանի դեռ նրանց միջև ընդամենը ժամանակավոր անհաշտություն է՝ հեզնական ժպիտներում կարեկցանք կա, դառնագին խոսքերում անզամ քաղցրություն, և նկատվում է քնքշություն նույնիսկ անողոք ձևացող դեմքին, ուրեմն հանցանքը բացահայտ չէ, և հաշտության միտքն ավելի ծանրակշիռ դեր կարող է ունենալ: «Մերթ փարվում ես ինձ հովի պես, / Մերթ հողմի պես ինձ չարչարում, / Ա՛խ, երբ այդպես սիրել գիտես, / Էլ ինչու՞ ես ցավ պատճառում:»⁴⁹ / Դ. Սահյան /

Խիստ զգացմունքային ու միամիտ է կանացի եությունը, որքան էլ որ վշտանա, կասկածի ու չարանա, մի թեթև ակնարկից, մի կիսաքնքուշ հանդիմանանքից անզամ նորից շարունակում է հավատալ, իսկ զղջման ու սիրո խոստովանության դրսևորումները չեն ուշանում: «Էլ չեմ անի, էլ չեմ անի, / Զեզ ինձանից էլ չեմ վանի, / Էլ չեմ գնա, որ չգնաս, / Զեմ հեռանա՝ չհեռանաս, / Կհավատամ, որ հավատաս:» / Մ. Դակոբյան / Այստեղ արդեն սիրո, ինքնանվիրումի գագաթնակետն է, գլխապտույտ առաջացնող հուզում այն աստիճանի, որ կնոջ սերը գերազանցում է ինքն իրեն, անզամ, / մեղաքեզ, Աստված, բարի կամենում իրենից հեռացող սիրեցյալին. «Ու թե գնաս, ու թե գնաս, / Ծանապարիդ թող կանաչի:»⁵⁰

Կյանքի հավերժական հոլովույթի մեջ սիրո մի ակնթարթն ու մի տեսակը չէ, որ հարագատ է Դամո Սահյանի հոգուն: Նա ապրում է պատանեկան սիրո անորոշ զգացումից մինչև հասուն սիրո վայելք, ոգևորություն ու հիասթափություն, սիրո պատճառած թովչանք ու ցավագին տանջանք: Սակայն բոլոր դեպքերում էլ մնում է իրեն հավատարիմ՝ ընդունելով սերը որպես երկնային պարզև՝ բնության նման անքննելի ու տարողունակ, որի արմատը սևվում է ինքնանվիրումից: Անզամ մերժումն ու ուրացությունը սիրո կրակը մարել չեն կարող: Սա է առեղծվածների առեղծվածը, և Դամո Սահյան-Մարիա Դակոբյան սիրային դաշինքի հավերժ

48 Դ. Սահյան, Զարե պատարագ, Ե., 1999, էջ 70:

49 Նույն տեղում:

50 Մ. Դակոբյան, Մարինե վանքում, Ե., 2004, էջ 106:

ծության անմեկնելի հրաշքի հմայքը: «Յաճախ շատ սիրելուց՝ տանջում ես,/ Լռում ու ներում եմ – պոետ ես»⁵¹, - անկեղծանում է Մ. Յակոբյանը: Գուցեն իսկական սերը հենց դա է. կարող ես քեզ նեղել, անտեսել անգամ, միայն թե մնաս նրա կողքին:

Դու ուզեցիր, որ ես քեզ տիրություն անեմ
Ու ես անտեր մնամ.
Ամեն-ամեն ինչ տամ, տեղը ոչինչ չառնեմ
Ու քեզ ընկեր մնամ:⁵²

Սահյանական սիրո այս յուրօրինակ տեսակը մի կրավորական զգացում է, երբ պատրաստ ես ամեն ինչ տալու՝ փոխարենը չպահանջելով ոչինչ: Ներել, լռել, համբերել՝ ընդունելով սեփական անկատարելությունը, և երբեք չհասնել աննյութեղեն երազվածի աստիճանին: «Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ, / Չեմ հասել երբեք քո որոնծին,/ Զո որոնածն աննյութեղեն էր, /Իսկ ես հողեղեն, հողոտ, հողածին:»⁵³

Տղամարդուն հատուկ կարճամտությամբ բանաստեղծին թվում է՝ սիրածին կողքին պահելու համար հրաշագործ պիտի լինել: «...Ես կարող էի/ Անվերջանալի իմ կորուստներով/ Գնել հարդագողն ու տալ քեզ նվեր:/ Դու հարդագողի կարիք չունեիր,/ Քեզ լոկ մի խավոտ ուղեգորգ էր պետք՝ /Վրան քանդակված/ Իմ ոտնահետքը տեսնելու համար:»⁵⁴

Իսկ ինչ է երազում կինը՝ դժվար չէ հասկանալ: Եթե սրտում իսկական սեր է, գտնված երազ, այն նյութապաշտ չէ, այլ ընդամենը ավստսում է, որ «Ամբողջ կյանքում մեկը չեղավ,/ Յոգնած ուսով հենվեի»⁵⁵, որ չտաճնապեր սիրտը սիրուց, ձեռքերին իջներ մի օգնող ձեռք, և երգերի դողը չմարեր: Բանաստեղծը ևս համոզվում է դրանում.

Քեզ մի մեղրամիս, մի մեղրատարի
Եվ մի արծաթե հարսանիք էր պետք,
Քո բախտի վրա և ուսիդ վրա
Իմ հասնող ձեռքը տեսնելու համար:⁵⁶

51 Նույն տեղում, էջ 79:

52 Յ. Սահյան, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 1, Ե., 1984, էջ 191:

53 Նույն տեղում, էջ 191:

54 Յ. Սահյան, Տոհմի կանչը, Ե., 1981, էջ 319:

55 Մ. Յակոբյան, Ոսկի տերևաթափ, Ե., 1978, էջ 16:

56 Յ. Սահյան, Տոհմի կանչը, Ե., 1981, էջ 320:

Այսինքն՝ ընդամենը հասկանալ ու գնահատել է պետք: Հաճախ առօրյա կյանքի հոգսերի ետևից ընկած չենք էլ նկատում, թե որքան ենք կարծրանում ու անտարբեր դառնում, անգամ ամենահարազատի հանդեպ, որին կորցնելուց հետո կյանքը իմաստագրվում է: «Բախտ ասած բանից բան չհասկացանք./Նրա խորհուրդը բնավ չբացինք.../ Բախտը մեզ հաճախ հեռավոր մի գանձ./Հաճախ թռչուն է թվում ոսկեթև/, Եվ դու մտքերիդ ետևից ընկած/ Փնտրում ես նրան յոթ սարի ետև:»⁵⁷ /Յ. Սահյան/

Երբեմն սիրող զույգերի միջև անհաղթահարելի արգելքներ են լինում, որոնք սովորական աչքով հնարավոր չէ տեսնել, հոգու տեսողություն է պետք: Մ. Հակոբյանը գրում է. «Իմ և քո միջև /Բարակ մի պատ էր./ Փոքրիկ մի դուռ էր հայալապատված./ Որը միշտ փակ էր:»⁵⁸ Եվ այդ հայելու մեջ յուրաքանչյուրն իր սեփական արտացոլանքն էր տեսնում, ինքն իրեն խղճում ու խնայում, որից էլ ծնվում էր երգերի խռովքը, վեճն ու երազ – տենչերի կործանման ցավը, միևնույն՝ «Հիշում ես, Երբ էր, / Ինձ ասում էիր՝ / -Թե որ դու տխրես, / Կհիվանդանամ.../ Ես ուրախ, անհոգ/ Թռչկոտում էի:» Ավելին՝ «Եթե հիվանդանաս, կմահանամ./ Եթե մահանաս՝ կքարանամ, /Հավատում էի...»⁵⁹ / Մ. Հակոբյան /

Հավատի կորուստն ամենամեծ ցավն է, որ կարող է ունենալ սիրող սիրտը: Այդ գիտակցելով՝ բանաստեղծը փորձում է անել անկարելին՝ հոգնության թույնից հավատը փրկելու համար:

Արար աշխարհից ես ինձ կզրկեմ,
Կգամ,գլուխս քարերին տալով,
Որ իմ հավատով հավատդ փրկեմ,
Եվ նորից գրկեմ քեզ՝ հավատալով:⁶⁰

Սակայն դժվար է վերականգնել նախկինում եղած սիրո ու նվիրումի զգացումը, և միայն հարազատ աչքերն են, որ նկատում են, թե ինչպես է սիրելին կամաց մեղավորի նմանվում: «...Բայց այնքան լավ եմ ճանաչում ես քեզ./ Որ նայում հաճախ ու չեմ զարմանում, /Որ դու մեղավոր մարդու ես նման:» /Մ. Հակոբյան/

Պարտադիր չէ հանճար լինել հասկանալու համար, որ անկեղծությունից բացի ամեն ինչ ավելորդ է սիրո մեջ: Հ. Սահյանը գրում է. «Հարկավոր չէին ոչ ինձ, ոչ էլ քեզ / Ոչ իմ անհամեստ համեստությունը, / Ոչ իմ անիմաստ իմաստությունը, / Ոչ այսքան

57 Հ. Սահյան, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 1, Ե. 1984, էջ 244:

58 Մ. Հակոբյան, Մարինե վանքում, Ե., 2004, էջ 14:

59 Նույն տեղում, էջ 12:

60 Հ. Սահյան, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 1, Ե., 1975, էջ 287:

փխրուն իմ խստությունը, / Ոչ էլ երկուսիս նվաստությունը:»⁶¹

Սիրո արդեն ալեկոծ ծովում տարուբերվում են սիրող սրտերը, տատանվում, և փոխադարձ վստահությունը անէանում է:

Մեր արանքով մթին հեղեղներ են անցել ու գնացել:
Երկու հանդիպակաց քարափներ են դարձել ու մնացել:
Ավաղ, ոչ երբևէ հանդիպել ենք կարող, ոչ հեռանալ:
Ու նայում ենք իրար...
Ոչ հիշել ենք կարող,
Ոչ մոռանալ:⁶²

/Յ. Սահյան/

Գուցե ամեն ինչ դեռ կորած չէ, և կարելի է վերականգնել խարխված հարաբերությունները, չէ՞ որ մեջտեղում դեռ սեր կա: «Ինձ ասելու ոչինչ չունե՞ս, / Գուցե էլ չենք հանդիպելու... / ... Դու հիշելու ոչինչ չունե՞ս, / Ոչինչ չունե՞ս հարցնելու... / ... Դու զղջալու ոչինչ չունե՞ս...»⁶³ /Մ. Յակոբյան/

Սակայն այլևս պատանեկան վախվորած կամ երիտասարդական կրակ սերը չէ, որը կարող է թեթև քամի խանդից նորից բոցավառվել: Այս դեպքում վիրավորանքն այնքան է խոր, որ սկսվում է մի անբացատրելի ու տատասկոտ ուղի՝ չհեռանալով՝ կորցնելու, սոսկ հուշերում ու երազներում իրար վերագտնելու, և որ ամենացավալին է, օտարանալու կսկիծով:

...Յագար քարեր փշրելով ճանապարհին մեր հեռու՝
Փշրվեցինք քարերին և փշրեցինք իրարու:
Ծովին հասանք և գտանք, ինչ որ բախտն էր մեզ տալու,
Բայց չիմացանք, որ արդեն կորցրել ենք իրարու:⁶⁴

/Յ. Սահյան/

Այս ամենից հետո սիրահարը կանգնում է ճշմարտության առջև միայնակ՝ ինքն է ու ինքը, ու երբ կույր աչքերը բացվում են ու ազատվում է սիրո թմրեցնող թույնի ազդեցությունից, նկատում է իր եսի կորուստը, տարրալուծումը անորոշի մեջ: Մարիա Յակոբյանը գրում է. «Դու կոտրեցիր իմ մեջ / Իմ վեհությունը, / Աշխարհին նայելու / Իմ պարզությունը:»⁶⁵ Արդյունքում փշրված կամք է ու հավատի կորուստ: Բնականաբար, սրան պիտի հետե-

61 Յ. Սահյան, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 1, էջ 194:

62 Յ. Սահյան, Երկեր երկու հատորով, հ. 2, Ե., 1984, էջ 49:

63 Մ. Յակոբյան, Մարինե վանքում, Ե., 2004, էջ 17:

64 Յ. Սահյան, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 1, էջ 193:

65 Մ. Յակոբյան, Մարինե վանքում, Ե., 2004, էջ 13:

վեր ամենացավալին. «Դու կոտրեցիր իմ մեջ / Զեզ համար ապրելու / Իմ ցանկությունը...»⁶⁶ Կատարվածն այնքան է շեշտակի, որ անգամ հարվածի պահին սուր ցավ չի պատճառում, սակայն զգացնել է տալիս իր մասին, երբ դարձել է փաստ՝ սառնություն, օտարացում, որին պիտի հետևի անդունդին հասած ինքնակործան քայլը, նոր զգացմունքի, մեկի ուսին հենվելու, նեցուկ փնտրելու մեղսավոր քայլը: «Մեկը լինի, /Նրան սիրով իմ զարդարեմ, / Որ սիրելուց, տառապելուց, / Երգ գրելուց չդադարեմ:»⁶⁷ /Մ. Հակոբյան/

Սակայն ապրված սերը այնքան նվազ չէ, որ խանդի հովից հանգչի անհետ, և ծնվում են ներման, գղջման երգեր, որոնք գալիս են հավաստելու, որ մեղքը երկուստեք է: Սակայն սա էլ չի սփոփում, քանզի վեր է ածվում մի կեղծ զգացմունքի, որը սիրո անաղարտ առաքելության հետ եզրեր չունի: «Իմ սրտով սիրածն իմ սերն ավերեց... / ...Ու ես ներեցի...Բայց ամբողջ կյանքում / Ներելուս համար նա ինձ չներեց:»⁶⁸ /Հ. Սահյան /

Ուժեղ հողմ էր պետք, կործանիչ մի ուժ սիրո անառագաստ մակույկը ծովում խորտակելու համար, որը դեռ համառում էր փոթորկուն ծով-հոգու չարագույժ ալիքներին: Եվ վրա է հասնում խանդից ծնված տառապանքի 9 - րդ ալիքը: Մ. Հակոբյանը գրում է.

Մեջտեղ է եկել անցածը հիմա,
Իմ ու քո միջև վիհեր արարել,
Զեզ այդպես անվերջ ներելու համար,
Չեմ կարողանում ինքս ինձ ներել:⁶⁹

Համատեղ կյանքը դառնում է տառապանք, ամենօրյա ինքնամերժում, ուր շարունակ ներկա է մեղքի գիտակցումը, որը ցանկացած չնչին արարքից կարող է առաջվանից ավելի թունոտ հորդել, և անհանդուրժողականությունը ոչ թե հնությունից թունդ գինի է դառնում, այլ թթված քացախ, ու կարող է լինել պայթյունավտանգ: Անխուսափելի է բաժանումը: Անգամ սիրո կորուստը թվում է երկրորդական: Ավելի ողբերգական է միմյանց չգնահատելու զգացումը:

Չես էլ ուզում մի հարցնել,
Ինչի՞ց է, որ քնած տեղը

66 Նույն տեղում:

67 Նույն տեղում, էջ 60:

68 Հ. Սահյան, Երկեր երկու հատորով, հ. 2, Ե., 1984, էջ 382:

69 Մ. Հակոբյան, Ոսկի տերևաթափ, Ե., 1978, էջ 37:

Մարդը հանկարծ բաց է լինում,
Եվ ինչ վերք է, որի ցավից
Նստում մեկ-մեկ լաց է լինում:⁷⁰
/ Բ.Սահյան/

Սակայն բոլոր բաժանումները չէ, որ սիրո ավարտ են նշանակում: Ճանապարհները ոլորաններով են թե ուղղադիր, քարքարոտ են թե ողորկ, միևնույն է, երբևիցե հատվում են: Գալիս է մի պահ, որ անցնում են վիրավորանք, քեն ու դավ, և պղտոր ջրերը, երբ պարզվում են, ավելո՞ծ հոգիների անհատակ ծովում պարզորոշ նշմարվում են մարգարտափայլ հակինթները՝ սիրո առեղծվածներ անվանումով: Երբեք հավերժական հաղթարշավը չի ընդհատվում, թեկուզ ոչ համաքայլ, այն շարունակվում է: Չնայած բանաստեղծը նկատում է, որ «հավքը ձեռքից որ թռավ, էլ ետ չի գալիս», համարձակվում է խոստովանել:

Թող մուրճն ընկներ... անտառի մեջ մի հեռու
Մենք հրաշքով հանդիպեինք իրարու...
Ակնթարթը հավասարվեր մի տարու,
Չանջատվեինք, չտանջեինք իրարու:⁷¹

Հեռվից կարոտել, ափսոսալ ու սպասել... Սպասել ոչ թե հուշերում կամ երագի մեջ այցի գալու, այլ երկնքում, հավերժության մեջ հարատևելու համար: Երկու բանաստեղծների մոտ էլ երկրային կյանքը ճանապարհի սկիզբ է, երկնային մի լավագույն կյանքի խոստում՝ վեր մարդկային անհանդուրժողականությունից, զրպարտանքից ու նախանձից հեռու, ուր երկխոսում են նրանք իրենց քնքուշ երգերով:

Մեր սիրո տունը արևին մոտ էր,
Արևահար էր ու արևոտ էր,
Երագից հյուսված երգ ու վրան էր,
Իմն ու նրանն էր...⁷²

/ Մ. Հակոբյան/


70 Բ.Սահյան, Երկեր 2 հատորով, հ. 1, Ե., էջ 328:

71 Նույն տողում, էջ 185 :

72 Մ. Հակոբյան, Մարինե վանքում, Ե., 2004, էջ 140:

Մենք ապրելու ենք...

Մեր ժամանակակից դասականներից թերևս Համո Սահյանն ամենաքաջատեղյակն էր Ղարաբաղյան խնդրին: 20 տարի ապրելով Բաքվում, աշխատակցելով հայկական պարբերականներին՝ ծանոթ էր ղարաբաղցու կյանքի մանրամասներին, Ադրբեջանի իշխանությունների վերաբերմունքին, և ամեն անգամ վրդովվում էր, երբ խոսք էր լինում Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու տխրահռչակ իրողության և նրա դժնի հետևանքների մասին:



Համո Սահյան

Մեզ ասում են.- Դուք մերը չեք,
Մինչև անգամ դուք ձերը չեք,
Ձեր տեղը չեք, ձեր տերը չեք,
Դուք տերը չեք ձեր երդերի,
Տաճարների ու բերդերի:
Մեզ մեր ցավն են թողնում մենակ...⁷³ /Էջ 140/

Սահյանը միշտ էլ այդ հարցի վերաբերյալ ուներ իր հստակ վերաբերմունքը, որն էլ նոր ծիլեր տվեց ազգային զարթոնքի, Հայաստանի անկախության հռչակման և Ղարաբաղյան պատերազմի ժամանակահատվածում:

Դեռ 1988 թվականից առաջ էլ, մինչև համաժողովրդական շարժումը, քաղաքականության մեջ չխորացող բանաստեղծին մտահոգում էր Արցախի ճակատագիրը, սակայն համազգային շարժման ակիքի զորանալուն զուգընթաց, նրա հոգում հզոր տեղաշարժեր նկատվեցին, և Արցախյան հարցի հայանապաստ վերջաբանի տեսլականը կյանքի խաչուղիներում իմաստացած, 7 տասնամյակը վաղուց հատած բանաստեղծին հույսի կերոն թվաց:

Տղերք կան պինդ, պնդակուռ,
Ում տեսնես՝ մի Սասնա ծուռ...
...Հոգնած ու խմած էինք,

⁷³ Համո Սահյան, Ինձ բացակա չընեք, Եր., 1997: Այսուհետ բանաստեղծական բոլոր մեջբերումները կատարվելու են այս գրքից, ուստի կնշվեն միայն էջերը:

Խաբված ու քնած էին,
Արթնացանք, էլ քուն չունենք: / Էջ 141 /

Այս ոգևորությունն էր պատճառներից մեկը, որի արդյունքում, դեռ 1989 թվականին Ամերիկյան ելույթներից մեկում Հայաստանի անկախությունը «կախադանի սյուն» համարող Սահյանը, մի օր էլ փորձեց օպերային թատրոնի հարթակից խոսել հարազատ ժողովրդի հետ: Սահայն, Նախ ապշեց, իսկ հետո հիասթափություն ապրեց այն բանից, որ հավաքվածները չէին լսում իրեն, իսկ ավելի ճիշտ՝ ամբողջած ժողովրդին ինքը ոչինչ ասել չէր կարող: Փորձելով մեկնել իրականությունը՝ բանաստեղծն իր համար բացահայտում է . «Ժողովուրդն ավելի շատ իր պաշտամունքն է պաշտում, քան այդ պաշտամունքի առարկա Արցախը»⁷⁴: Նույն շփոթությունն ու հուզումնալից ալիքն էր, որ հանճարեղ, բայց տվյալ պարագայում միամիտ բանաստեղծին Էկրանի այն կողմից ժողովրդին դիմելու, նոր ընտրությունների համար կողմնորոշելու հարկադրանքն ունեցավ: Սթափվելուց հետո պիտի մարգարեանար՝ երկրի ապագայի հեռանկարը սարսափով կանխագգալու ցավից:

Փնտրեցինք տաք մի հովիտ,
Եկանք ու դեմ առանք ցրտին...
Եվ հիմա ես ի՞նչ ասեմ՝
Իմ խաբված ու խաչված սրտին: / Էջ 119 /

Այս անսովոր իրադարձությունների արձագանքն են բանաստեղծի վերջին՝ «Ինձ բացակա չղևեք» ժողովածուի մի շարք բանաստեղծություններ, որոնք անցել են նրա ներաշխարհով, ցավոտ հետք են թողել հոգում ու դարձել տազնապոտ հարց:

...Ե՞րբ պիտի վանենք մեզանից հեռու
Այս թանձրաթախիծ մշուշն օրհասի...
Ի՞նչ է լինելու, պարոն Սատանա,
Ես ի՞նչ իմանամ, սատանան գիտի: / Էջ 213 /

Իբրև խորաթափանց արվեստագետ՝ Սահյանը տեսնում էր, որ երկար սպասված անկախությունն իր հետ բերել էր նաև անցանկալի երևույթներ, որոնք չկանխելու դեպքում կարող էին երկրի ու ժողովրդի համար աղետալի հետևանքներ ունենալ:

74 Շչորս Դավթյան, Համո Սահյան հանրագիտարան, Եր., 2012թ., էջ 115:

Գևանք օտարի դռները բախենք,
Թերմացքներ մուրանք, որ սովը թաղե՞նք...
Ավելի լավ չէ՞, որ մեզ ազգովի
Այս անկախության պարանով կախենք: / Էջ 235 /

Համո Սահյանը, բանաստեղծ լինելուց զատ, նաև իր երկրի շարքային քաղաքացին էր և իր ուսերին ու սրտին զգում էր օրերի ծանրությունը, դժգոհում դրանից, սակայն հիասթափության այս շեշտերը որպես պահի անցողիկ անակնկալների հետևանք, նրա կենսասեր խառնվածքին ու բանաստեղծական հավատամքին թույլ չտվեցին, որ խաթարվեր հավատը գալիք երանելի ժամանակների հանդեպ: Սահյանը 1990 թվականի հունվարիմեկյան շնորհավորական ուղերձում նկատում է . «Վերջին երկու տարին շատ բան խլեց մեզանից, բայց, փառք աստծո, տվածը խլածից շատ է: Մենք սկսեցինք մեզ ճանաչել, մեր ուժին ու մեր պնդությամբ հավատալ»:⁷⁵

Ինքն իրեն երբեք չկեղծող բանաստեղծը ոգևորված էր Հայաստանի անկախության հռչակմամբ, վերջապես իրականացել էր ողջ ազգի երկար ու ձիգ դարերի երազանքը: Բանաստեղծը պատվիրում է չընկրկել ցրտի ու սովի չարագույժ աղետի առջև, այլ սնվել հույսի մեղր ու կարագով, որպեսզի մեր խորոխտ երթի դեմ չքվի ցրտի, սովի, թուրքի դաշինքը:

Կտաքանանք մեր սրտի կրակով,
Կրքի պաշարով դեռ հանդուրժելի:
Արցախ կտանենք մեր վրեժն արյան,
Օրերի ոգին մեր փետրվարյան:
Կմերժենք անլուր այցը հաճույքի,
Սպառնալիքը կհեգնենք թուրքի: / Էջ 213 /

Արցախյան պատերազմի հաղթանակների ու հատկապես Շուշիի ազատագրման ցնծությունը ուղղակի կենդանություն էին պարզևում արդեն հիվանդ ու աշխարհի հետ իր պարտքերը վաղուց մարած բանաստեղծին: «Ուժս ներեր, կռվի դաշտ կիջնեի զենքով: Լացս գալիս է, որ շահել չեմ, որ կարողանամ իմաստ տալ ոչ այնքան կյանքիս, որքան մահիս»:⁷⁶

Համո Սահյանի ամենահամարձակ ու հեռահար մտքի արտահայտություններից է «Մի աղբյուր կա Գյուլստանում» բա-

75 Համո Սահյան, Գրչի, խոսքի, խղճի կշիռը, Ե., 2003, էջ 60:

76 Շչորս Դավթյան, Համո Սահյան հանրագիտարան, Եր., 2012թ., էջ 117:

նաստեղծությունը / էջ 233 /: Իր ժամանակին Ռաֆֆին Ռափայել Պատկանայանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը որակեց «հայրենասիրական քնարերգության թագուհի», այսօր Յամո Սահյանի վերը նշված բանաստեղծությունն առանց վարանելու կարող ենք համարել Արցախյան պատերազմի, հայոց Նորոյա զարթոնքի ու հաղթանակների արքայազն, որի թագադրումը շատ չի ուշանալու: Բանաստեղծությունը մի գողտրիկ գրույց է հայոց պատմական Գյուլստանի / այժմ Շահումյան, որը Ադրբեջանի կազմում է / գերված աղբյուրի ու հայրենասեր բանաստեղծի միջև: Սև սատանի բաժին դառած, զուլալ ջուրը լեղի կտրած Գյուլխտանի գերի աղբյուրը պատվիրում է հայոց բանաստեղծին. «Աչքդ, ասեմ, ուր էլ գնաս, / Յեռվից-հեռու պահես վրաս»: Իսկ գյուլստանյան անմահական ջրին պապակ բանաստեղծը հոգու խորքում հավատում է աղբյուրի երազանքին. «Աչքալուսանք կտանք շուտով/ Ես ցուրտ, իսկ դու տաք շշուկով»: Չհավատալու պատճառ չունենք, որ հանճարեղ բանաստեղծի այս երազանքն էլ է ի կատար ածվելու. «Աստված իջել Գյուլստանում, / Մեր հին օրն է մեզ խոստանում», իսկ առայժմ՝ Գյուլստանի գերված աղբյուրը, որի «կարոտը մարդ կսպանի», «Կանչում ու չի հանգստանում»: Բանաստեղծը գերված ժողովրդի տառապանքն առավել ընդգծելու համար շնչավորել է հայրենի աղբյուրը: Ավելի համոզիչ ու կենդանի, հուզիչ ու սրտաբուխ հնարավոր չէր արտահայտել հայրենասիրական խոսքը, քան ստեղծման օրից ի վեր հայ ժողովրդի համար սրբացված ու հզորություն առաքող հայրենի ջրիկի կերպարով:

Յետաքրքիր հեռագագսություն ու շատ քաղաքագետներից առավել խորաթափանց միտք ունի բանաստեղծ Սահյանը:

Եվ կրկնվում է պատմությունն էլի,
Եվ մենակ ես դու վայրի ցեղերի
Պղտոր հեղեղի հորձանքների դեմ,
Մութ, անակնկալ փորձանքների դեմ...
Մեկ է, քեզ պիտի հավատով գինես,
Յավատով, որ կաս ու պիտի լինես... /էջ 160 /

Պատմությունն, իրոքմ կրկնվում է. անցյալ դարի 90-ական թվականների և դրան էլ նախորդող պատմական դեպքերն ու հայերիս ճակատագիրը ժամանակների շարունակական հոլովություն կրկին դարձել է գերիսնդիր: Նորից թափառ մի ցեղ փորձում է մեզ խլել մեզանից, իսկ աշխարհի «մեր հույս» պետությունները ոխով փորձում են մեղքեր փնտրել մեր մեջ:

Մեզանից ի՞նչ են ուզում,
Ախր մենք ու՞մ ենք վնասել,
Եղբայրներ շատ ունեինք,
Ինչու՞ ենք մենակ մնացել... /Էջ118 /

Բանաստեղծի բնորոշմամբ «Սասնա ծռու Յայաստանը» կրկին համախմբվել է, ցավոք, այս անգամ էլ ժողովրդի համար օրհասական լինել-չլինելու ճակատագրական պահին և պատրաստ է անգամ որդիների արյան գևով հաղթանակ տանել:

Վաչկատուններ դուք մերօրյա,
Թող մոտ չգան խաշները ձեր,
Դեռ են գլխից դրախտավայր,
Դրախտի դուռ Յայաստանին:
Քանզի՝
Խանձարուր էլ դեռ չունեիք,
Երբ ծանոթ էր աշխարհն արար
Մեսրոպի լույս, Ղևոնդի խաչ,
Վարդանի թուր Յայաստանին: / էջ 138 /

Վաղուց թվում է, թե փոխվել են ռուս-հայկական անցյալ դարի 90-ական թվականների հարաբերությունները, և մենք՝ հայերս, կիկին ներել ենք ու «մոռացնելու տվել» անցյալի տխուր իրողությունները, սակայն Սահյանի քաղաքական սթափ մեկնությունն ու հարցի ճշմարիտ բացահայտումը, կարծես արված են մեր օրերի հեռավորությունից:

«Վերջապես ազգովի գլխի ընկանք, որ ավագ եղբայրը խորթ է եղել: Մենք հայ քրիստոնյա ենք և միշտ թույլին ենք պաշտպանում և արդարության կողմն ենք: Թվում էր՝ մեր ավագն էլ Նույն-պիսին պիտի լինի: Բայց ավագը մեզ խաբեց ու դեռ շարունակում է խաբել: Նա անցավ ուժեղի կողմը, արհամարհեց մեր արդար պահանջը, փորձեց ու դեռ փորձում է աշխարհի համար երեք հազար տարի տներ շինած մի ազգի հավասարեցնել երեկվա վաչկատուն ցեղերին»:⁷⁷

Լավատես լինենք բանաստեղծի նման ու հպարտ ձայնենք աշխարհով մեկ.

«Չէ՛, այդ չի լինելու, ինչպես ասում են, վերևն Աստված կա...»⁷⁸

Եկե՛ք հույսներս դնենք Աստծո, և որ Նունն է, ինքներս մեզ վրա, մեր զինվորի ու սեփական բազկի վրա և չկասկածենք մեր կողքից

77 Յամո Սահյան, Գրչի, խոսքի, խղճի կշիռը, Եր., 2003, էջ 60:

78 Նույն տեղում:

Երբեք չբացակայող բանաստեղծի մարգարեական խոսքին.

Մեր հողի վրա մերն ենք լինելու,
Մեր անտեր գլխի տենն ենք լինելու,
Մենք ապրելու ենք, ինչ էլ պատահի:
... Մեր հողի վրա մերն ենք լինելու: / Էջ 63 /

Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ են սահյանական սթափեցնող պատվիրանները, և համախմբվելով մեծ մարգարեի գաղափարի շուրջը, մի վերջին ու հուժկու հարվածով պիտի հաստատենք ի վերուստ մեզ տրված տեղը աշխարհի վրա և ի լուր ամենքի հայտարարենք.

Ելի՛ր, անգեն իմ ժողովուրդ,
Բարձրացիր քո լեռները լուրթ,
Եվ թո՛ղ աշխարհն ականջ անի, /Էջ 140 /

որ Արցախը ես եմ, Սահյանը ես եմ, ես հայ եմ ...

Վխտում են շուրջդ նորից,
Քեզ նորից դիսով հոտոտում...
Բայց մեկ է, կուլ չես գնա,
Կմնաս նրանց կոկորդում: /Էջ 119 /

Անվան արժանապատվությունն ու ստորագրության պատիվը

Եսքիզի ենթաժանրն իր մեջ ամփոփում է խորհմաստ լրջություն: Քիչ չի պատահում, որ այն մնա իր ստեղծման ժամանակի և միջավայրի մեջ, երբեմն նույնիսկ ժամանակից հետո մնա, բայց առաջ գնալ, ապագայինը լինել հազվագյուտ երևույթ է: Լրագրողական այս սովորական թվացող ժանրը ընդարձակում է իր սահմանները, ձեռք է բերում խորություն, վերլուծական հնարավորություններ, նյութեր, դեմքեր, արարքներ ներառում իր մեջ, և Վարդգես Պետրոսյանի ուրույն մտածելակերպի ու ոճի շնորհիվ դառնում լիարժեք գրականություն:



Վարդգես Պետրոսյան

Վարդգես Պետրոսյանի «Հայկական Եսքիզները» կարող ենք այդ հազվագյուտներից մեկը համարել՝ իր նյութով, խոհերով: Ասելիքի պարզությամբ ու միևնույն ժամանակ խորությամբ այն մնայուն է անցյալ, ներկա և եկող ժամանակի մեջ:

Ժամանակի պահանջը գրականությունից երբեք չի փոխվում, այն կյանքը, իրականությունը պատկերելու արվեստն է: «Հայկական Եսքիզներում» ոչ թե փոխվել է երկի ասելիքը, այլ այն ասելու ձևը: Ներկայացվող նյութը խիստ բազմազան է, բայց կա գլխավորը, հիմնականը, որը հայրենիք կոչվածն է: Հայաստանը հայի տունն է, անցյալ, ներկա ու ապագա ունեցող հայի, աշխարհով մեկ սփռված, բայց հայաստանոտ, հայաստանակարոտ հայի հայրենիքը:

Ժանրային առանձնահատկությունից ելնելով՝ Եսքիզներում բազմազան են նաև կերպարները, սակայն մեկն է համակրելի հեղինակին: Այն մտածող, խորհող, զգացմունքով առաջնորդվող անհատն է, որը եթե դառնա բազմաթիվ, մոլորակաբնակ, Հայաստանը գուցեև դառնա մոլորակատեր: Երկը, հեղինակի խոսքերով ասված, լուսամուտ է դեպի մեր երկիրն ու ժողովուրդը:

Հուզիչ է Կարելիայից ստացված մի սովորական ընթերցողի՝ ազգությամբ ռուս կնոջ նամակն ուղղված Վարդգես Պետրոսյանին. «Իմ աչքերը կարծես թե բացվեցին կարդալով Եսքիզները»:

րը, ես սիրեցի ձեր երկիրը, ձեր ժողովրդին, սիրեցի միանգամից և անվերապահ»:⁷⁹

Մեր ժողովրդի ճակատագիրը մի բարդ հավասարում է բազմաթիվ անհայտներով, որի բացահայտումը հսկայական ջանքեր ու նվիրում է պահանջում:

«Մեր ժողովուրդն իմն է, ինչպես իմ վիշտը»⁸⁰, գրում է Վ. Պետրոսյանը: Մեծ լրագրողի բոլոր գրքերը և մասնավորապես «Հայկական էսքիզները» իրենց վրա կրում են Պետրոսյանի տաղանդի դրոշմը, և դժվար է տարբերակել, թե որտեղ է վերջանում հրապարակագրությունը և սկսվում գեղարվեստական գրականությունը: Գրողի ուսուցիչն իր ապրած կյանքի փորձն է, իր տեսածն ու զգացածը, որն անցնելով սեփական զգայարանների միջով՝ գտվում է ու ներկայացվում ընթերցողին որպես մաքուր, գրական ստեղծագործություն:

Հայաստանն ու հայը էսքիզներում պատկերվում են Վարդգես Պետրոսյան հայի աչքերով ու մեկնաբանությամբ: Թվում է, թե այս թեմայի մասին շատ և բազմաձև է խոսվել, սակայն Պետրոսյանը ոչ թե կրկնում է մինչ այդ եղած հայրենասիրական թեմայի հպարտ կամ ողբերգական հույզը, այլ փորձում է սովորեցնել հասկանալ միմյանց, սիրել, օգտակար ու կարեկից լինել, որն էլ հզոր ու ապագա քայլող հայրենիք ունենալու գաղտնիքն է: Ում և ինչի մասին էլ գրում է հեղինակը, ասելիքը պտտվում է մեկ գաղափարի շուրջ՝ ճանաչել հային, գնահատել նրա լավ տեսակը: Երբեմն էլ ոչ թե հիանում է ու հպարտանում, այլ բարկանում այնպես, ինչպես մտերիմիդ, հարազատիդ, թեկուզ անգիտակից կատարած զանցանքի համար, անճարությունից ու սրտնեղությունից կարող ես նախատել: Գրքի էջերում շարունակ որոնվող հայն ու Հայաստանը փոփոխական են, տարբեր ու հակասական. կարող է լինել երբեք չմոռացվող պատմական ավանդություն կամ մոռացության մատնված դամբարան, ուր այդ ավանդության իրական հերոսներն ու հայոց հպարտություն թագավորներն են թաղված: Մի կողմից հայի ճակատագրի անողոք հարվածներից առնականացած ու Հայաստան պահող, Հայաստանի օրով ու հոգսով ապրող անհատ, թեկուզ և օտար ափերում, մյուս կողմից՝ ազգն ու հայրենիքը մերժած ոմն, որը կարող է նյութականի ետևից գնալ ապրելու անգամ Ստամբուլ՝ իր գոյությամբ մերժելով հայկականությունը: Եվ շատ դիպուկ է այստեղ Վ. Պետրոսյանի

79 Պետրոսյան Վ., Հավասարում բազմաթիվ անհայտներով, Եր., 1977, էջ 474:

80 Վ. Պետրոսյանի վերջին գրքի խորագիրն է:

խոսուն լռությունը, անտարբեր ձևացող սրտնեղությունը, հերոսի հանդեպ ամփոփված ատելությունը: Նա համոզված է, որ հայրենիքից հեռանալ ցանկացողի մնալուց ինչ օգուտ կա, որ գնալուց ինչ վնաս լինի:

«Չայկական էսքիզների» առաջին տպագրությունից անցել է շուրջ կես դար⁸¹, սակայն մինչև օրս այն չի կորցրել իր այժմեականությունը: Այսօր էլ հայրենադարձվում են ժամանակավոր կամ մշտական բնակության՝ մի այլ երկրից փախչելու, պատսպարվելու կամ հայրենիքը սիրելու ու այն շենացնելու մտադրությամբ: Ցավոք, քիչ չեն այնպիսիք, որոնք էսքիզի հերոսի նման դժգոհ են հայրենիքից, և դժգոհության պատճառները շատ անհեթեթ են, չնչին. «... իր նոր ստացած բնակարանում դռները ոչ բացվում են, ոչ փակվում, թե երևանի շուկայում դժվար է թարմ միս ճարել շաբաթ օրերին, թե տրամվայները առավոտյան լիքն են լինում...»⁸²:

Նրանց միայն մի պատվիրան է տալիս Պետրոսյանը՝ երբեք «Անտունին» չերգեն: Իսկ հարցին. «Ինչ է, դուք ա՞լ չեք քաջալերի որոշումս»⁸³, արհամարհանքն է պատասխան: Պատասխանը մեկ այլ էսքիզի հերոս Յովակիմ Թութունջյանը կտա, որը անդամալուծի ձեռնասայլակին գամված՝ Լոս-Անջելեսից եկել է հայրենիք: Նա անցորդների հարցերին ու հայացքներին անհաղորդ է, հմայված է շենքերով, հայրենակիցներով, անգամ հայրենիքի օդով:

Վարդգես Պետրոսյանի «Չայկական էսքիզները» հայրենասիրության դասագիրք է մի ժողովրդի, որի պատմության գիրքը «... դեռ չի դարձել գրապահարանի վերին դարակի գիրք, որ հանում են հինգ-վեց տարին մեկ, այն մեզ համար դեռ ոչ միայն գրասեղանի, հաճախ ճաշասեղանի գիրք է, գրպանի գիրք է, ճամփորդության ուղեկից, մի խոսքով՝ մեզ հետ է ինչպես մեր հողացավը, մեր սովերը, մեր անձնագիրը»⁸⁴: Ուստի շատ կարևոր է հայոց պատմության և Չայաստանի մասին սերունդներին ճիշտ ասելն ու հերոսների ոգով դաստիարակելը, հակադրելը դավաճաններին, որ ապագայում չմոլորվենք ճիշտ ու սխալ արարքների միջև:

Էսքիզներն իրենց մեջ բովանդակում են մանրապատումային, կյանքի որևէ դրվագի մի քիչ վավերագրական, մի քիչ ակնարկային պատկեր, սակայն իրենց արվեստով, ոչ այնքան գեղարվեստական պատկերավորման միջոցների առկայությամբ, այլ

81 Պետրոսյան Վ., «Չայկական էսքիզներ»-ը տպագրվել են 3 առանձին գրքերով՝ 1964, 1983, 1984թթ., Եր.:

82 Պետրոսյան Վ., Ապրած և չապրած տարիներ, Եր., 1970, էջ 250:

83 Նույն տեղում, էջ 250:

84 Նույն տեղում, էջ 265:

ուղղակի պատումով հուզական են և ճշմարիտ գեղարվեստական արժեք են ներկայացնում: Հեղինակը որևէ երևույթի դեմ կռիվ տալու նպատակով մի փոքր խտացրել է գույները, խոշոր գծերով ներկայացրել թերությունները, որովհետև բացասականի հաջող պատկերներով ավելի շատ է նպաստում դրականի ընդգծմանը: Վատի մասին հեշտ է կրքով խոսելը, և ընթերցողի մոտ երկար ժամանակ նստվածք է տալիս նողկալիի քննադատությունը: Ինքը ևս կյանքի երևույթներին նայում է ավանդապահ հայի խստաբարո հայացքով, իսկ դրանից կատարված ոչ մի շեղում չի վրիպում նրա ամենատես աչքից:

Ֆելիքս Բախչինյանն իր «Հիշիր, որ դու չես վերջանում, որ դու պիտի վերսկսվես թեկուզ վաղը» հոդվածում գրում է. «...Իր անցած, ապրած տարիների պահոցից հանել է իր հույզերը, ցավերը, ահերն ու ապրումները, որոնք ժրաջան մեղուների նման նրան հանգիստ չէին տալիս և կերտել է «Հայկական Եսքիզները»⁸⁵:

Այստեղ խտացված են հեղինակի հույզերը, խոհերը, ոգևորություններն ու հիասթափությունները, երազանքներն ու կարոտները հայի ու Հայաստանի մասին, որոնք հաճախ այնքան են ոգևորում հեղինակին, որ քնարական շունչ են ստանում: Հայի ու Հայաստանի մի կողմը, մի տեսակը չէ, որ դարձել է հեղինակի հուզումների պատճառը, այլ բազմազան ու բազմաբնույթ, տարբեր կողմերից ու տարբեր հարթություններում: Կարելի է ասել Պետրոսյանն էլ Սևակի նման իր ափի մեջ է առել այս անգամ հային իր հայրենիքով՝ հին ու նոր Հայաստանով:

Եսքիզների գլխավոր ասելիքը հանգում է կատարսիսի: Այս գիրքը անցյալի հարուստ պատմություն ունեցող ժողովրդի, երկրի ճշմարիտ պատկերն է ներկայացնում, տալիս հայ մարդու հոգեբանության նրբերանգները:

Գրքի կառուցվածքն ավանդական չէ: Այն կազմող մանրապատումները որքան էլ տարբեր են իրենց ասելիքով, կերպարներով, շոշափում են միևնույն նպատակը՝ հայի ու Հայաստանի թեման, որը հեղինակը որոնեց երկար ու ցավագին, գտավ հազար անգամ ու կորցրեց: Հայաստանը մի՞՞չ չէ, այն աներևույթ կամ թեկուզ տեսանելի մի գոյ չէ, որին կարելի է կույր պաշտել, կամ ատել, այն ամենուր է, ամեն հայի մեջ, Պետրոսյանը կասեր՝ «... Հայոց կաթողիկոսների աղոթքներում ու ամեն հայի հայիոյանքի մեջ, իմ աղջկա դպրոցական առաջին տետրի մեջ և Մատենադարանի մագաղաթներում»⁸⁶:

85 Բախչինյան Ֆելիքս, Մեր տանելու խաչը, Եր., 2008թ.:

86 Պետրոսյան Վ., Ապրած և չապրած տարիներ, Եր., 1970, էջ 327 :

Հային ու Հայաստանին համեմատում է ավերակի պատին աճած ծիրանի ծառի հետ, որը հրաշքով ոչ թե միայն ամրացել է ու աճել, այլ ծաղկել է ու պտուղ տվել: Հայը ծառի նման կոհիմանա և որքան էլ ճյուղակոտոր, էլի կծաղկի գարնանը և կտա անուշահամ պտուղներ: «Ե՞րբ, ո՞վ մեր ժողովրդի սերմը շաղ տվեց այս քարաստանում, որ սխալմամբ արտասանվում է Հայաստան: Ե՞րբ, ո՞վ այդ քնքուշ ծառի արմատներին պողպատալարի ամրություն, հույսի երկարություն և մոր համբերություն տվեց, որ նրանք ծակեցին-անցան քարափները, գալար-գալար տարածվեցին, պնդացան և ապրեցին»⁸⁷:

Վ. Պետրոսյանի ստեղծագործությունը համակ սեր է հայրենիքի, հայի և մարդու հանդեպ:

Պետրոսյանը սիրահարված էր կյանքին, իր երկրին ու ժողովրդին, և այդ սերը դրսևորվում էր նրա բոլոր երկերում, կյանքի ու գործունեության մեջ՝ «սկսած «Երկիր Նաիրիի» ցավատանջ փնտրտուքից մինչև իր վերջին գտածոն՝ «Երկիր Նաիրի» շաբաթաթերթը»⁸⁸:

Վ. Պետրոսյանի հրապարակագրության, գրական խորհրդածությունների և վավերագրական արձակի էջերում «Հայկական էսքիզների» թեմաներն ու կերպարներից շատերի նախատիպերն արդեն իսկ ներկայացված են:

Պետրոսյանը համոզված է, որ գրողը «այն ժամանակ չի գրում, երբ նստում է սպիտակ թղթերի առաջ, գրում է մինչև այդ»⁸⁹: Շատ մտքեր, դեմքեր, իրադարձություններ հեղինակի գիտակցության մեջ կարող են ապրել տարիներով և հանկարծ, երբ ժամանակը գա, արթնանան: Այդպես էլ տարիների փորձի, զգացածի, հուզումների ու ապրումների խտացում է «Հայկական էսքիզները», այդ է պատճառը, որ այն այդքան ապրված է, թրծված, և հային բնութագրելու, մարդ արարածին ներկայացնելու տեսակետից կատարյալ: Ավելորդ ոչինչ չկա այս գրքում: Գեղարվեստական երկի կանոններին հակառակ Պետրոսյանի հերոսներից շատերը ներկայանում են իրական անուն ազգանունով, ունեն տուն, հասցե, սակայն այնքան են զերծ առօրեական մանրուքներից, համակված զգացմունքայնությամբ և գեղարվեստական երանգներով, որ դրանից էսքիզների գեղարվեստական արժեքն ավելի է բարձրանում:

87 Նույն տեղում, էջ 326:

88 Անանյան Լ., Դիմակայություն, Եր., 2006, էջ 150:

89 Պետրոսյան Վ., Հավասարում բազմաթիվ անհայտներով, Եր., 1977, էջ 474:

Առանց հուզմունքի չես կարող կարդալ Եսքիզը մի փոքրիկ հովիվ տղայի մասին, որը Մեքսիկայից եկած հարուստ հայ շրջագայողից քաղցրավենիք չվերցրեց⁹⁰: Նա հպարտ գորավարի էր նման՝ իր արարքով հաղթելով հայի խեղճությունն ու ընկճվածությունն ամփոփող թշնամի գորքին: Եվ դժվար էր համոզել մեքսիկացի հային, որ տղային ոչ ոք ոչինչ չէր սովորեցրել, այլ հենց դա է հայի բնատուր, հայկյան տեսակը, որով և ապրում է իրական հայն ու Յայաստանը, և ոչ թե իր նմաններով, ովքեր հյուր են հայրենիքում: Մի Եսքիզում գրում է. «Ես սիրում եմ աշխարհի ճանապարհները, որովհետև վերջին հաշվով նրանք հայրենիք են բերում»⁹¹: Ցավոք, շատ հայերի ճանապարհներ ոչ թե զուգահեռվում, այլ խաչվում են ամայի ճամփաներին ու ավելի օտարացնում նրանց: Պետրոսյանը ցավով է պատմում կանադահայ Ալբեր Մարտիկյանի մասին⁹², որը օտար ճամփաներում վթարից մի կերպ փրկվելով, օտար լեզվով երկար վիճում է մեղավոր վարորդի հետ, անգամ ոստիկան կանչում և վերջում միայն, ազգանունը հուշում է, որ իր ախոյանը հայ է: Սակայն հայերը միայն միմյանց կորցնելով չէ, որ ապրում են, այլ նաև Արաքսի այն ափի ավերակների միջից պարկապզուկով քոչարի նվագող հայերով, որը չէր վախենում սահմանապահներից, և իր նվագով գորակցում է պարող հայերին: Երկու դեպքում էլ օտարության մեջ հայերը հանդիպեցին, սակայն չի կարելի ասել, թե երկու դեպքում էլ գտան իրար: Առաջին դեպքում վարորդներն ավելի օտարացան, դարձան ախոյան, իսկ երկրորդ դեպքում՝ քոչարու երաժշտությունն ու պարը կտրեց անցավ Արաքսն ու կամուրջ դարձավ նրանց միջև. ահա թե որտեղ է հեղինակի համակրանքը:

Մայակովսկու «Ես այնտեղ եմ, որտեղ ցավն է:» հանրահայտ միտքը Վ. Պետրոսյանը շարունակում է այսպես. «Մենք այնտեղ ենք, որտեղ նաև ուրախությունն է»⁹³:

Մի՞թե իսկական ուրախություն չէ բժիշկ Նասիբյանի⁹⁴ նման հայեր ունենալը, ով արհամարհելով սեփական տկարությունը՝ կյանքի վերջին օրերին իր մեջ ուժ է գտնում և մահից փրկում հարևան գյուղում ապրող մի հիվանդ տղայի: Նրա տեսակը չէր կարող անտարբեր լինել ուրիշի նկատմամբ, երբեք սեփական ցավը չէր մթազևի ուրիշին օգնելու պատրաստակամությանը: Եվ արդա-

90 Պետրոսյան Վ., Ապրած և չապրած տարիներ, Եր., 1970, էջ 327:

91 Նույն տեղում, էջ 295:

92 Նույն տեղում, էջ 293:

93 Պետրոսյան Վ., Հավասարում բազմաթիվ անհայտներով, Եր., 1977, էջ 464:

94 Պետրոսյան Վ., Ապրած և չապրած տարիներ, Եր., 1970, էջ 300:

րացի է, որ համագյուղացիները նրա գերեզմանին լույս են վառում: Նա աստօծ լույսն էր, ով իր գոյությամբ, իր գործով ցրում էր մարդկային կյանքի խավարը, և եթե Նասիբյանների նմանները բազմապատկվեն, Հայաստանը հոգու պայծառ լույսերից հավերժ կփայլի ու կշերմանա: Իհարկե, հեղինակը ցավով է նշում նաև այն անտարբերներին, որոնք Մասիսների կենացն են խմում, պատմությամբ հպարտանում, սակայն ավերում են հայոց հիևավուրց գերեզմանները, կառուցում խանութ ու ցանկապատ՝ հիմք դարձնելով ամուր, դիմացկուն խաչքարերը⁹⁵: Հաճախ էր Վ. Պետրոսյանը շրջում գերեզմաններում ու կարդում հիևավուրց, փոշեծածկ խաչքարերի մակագրություններն ու ընկնում մտածմունքների գիրկը: Պատահական չէ, որ այդ մասին հիշատակվում է մի շարք էսքիզներում: Հին Ջուղայի գերեզմանների ու խաչքարերի ավերման հարցը, որը վերջին ժամանակներս այսքան հնչեղ դարձավ, Վ. Պետրոսյանին մտահոգել է դեռ վաղուց և դարձել էսքիզի նյութ: «Մենք կանիբալ չենք»: Ի լուր աշխարհի հայտարարում է էսքիզների հեղինակը, հատկապես գոհ լինելով, որ օտարերկրացին ծանոթանալով հայի պատմությանն ու մշակույթին՝ համոզվում է դրանում:

Պետրոսյան հայի տեսակը բացահայտող կերպարներ են այն ծերունիները, ովքեր հաճախում են հայկական դպրոց և սրտի թրթիռով սովորում հայոց տառերը, կամ մթագնած ուղեղով պառավ Մարանը, որը վառել էր ամայացած գյուղի բոլոր օջախները, որ երդիկներից ծուխ բարձրանա այնպես, ինչպես ամեն առավոտ, երբ հաց էին թխում, ու շեն թվա գյուղը: Տխուր, բայց խորիմաստ է նաև Վահան Պասկասի⁹⁶ կյանքը, մարդ, որն ապրեց ու մեռավ հյուրանոցում, իր երկրից դուրս, լավ թե վատ՝ ինչ նշանակություն ունի: Օտար երկիրը նման է հյուրանոցի. որքան էլ ուզում է շքեղ լինի, քոնը չէ, իսկ ապրելու համար մարդուն տուն է հարկավոր. ափսոս, որ Վահան Պասկասը ուշ էր հասկացել: Հայրենի հողը, երկիրը մի անասելի ուժ է տալիս մարդուն, այդ է վկայում Բեյրութի Սահակյան վարժարանի մասին պատմող էսքիզը⁹⁷: Հենց բեմի կենտրոնում մի քար էր դրված, որը բերված էր Հայաստանից: Այն վարժարանի սրբությունն էր: Ով պիտի խոսեր հայրենիքի մասին, կանգնում էր այդ քարին, և ոտքի տակ Հայաստանն էր զգում ու զորանում: Հին հունական դիցաբանության հերոս Անթեյը և մեկ էլ հայոց թագավոր Արշակը գիտեին, որ կանգնելով

95 Նույն տեղում, էջ 272:

96 Նույն տեղում, էջ 275:

97 Նույն տեղում, էջ 282:

հայրենի հողին կարելի է ուժ ստանալ: Երանի՛ բոլոր հայերն էլ այդ հասկանային: Որքան տխուր է Թուրքիայի Հուսեյնիկ գյուղի պատմությունը: Այնտեղ ապրող թրքացած հայերը խոստովանում են. «Իսկ մենք հավատացած էինք, որ մեզնից բացի աշխարհում ոչ մի հայ չէր մնացել...»⁹⁸: Սակայն անգամ այն հայերը, որոնք ճակատագրի կամոք կորցրել են լեզուն ու կրոնը, հոգում ինչ-որ հույս են պահել՝ երբևիցե ակունքներին հասնելու: Այդպիսին է նաև Եսբիզներից մեկի հերոսը, որը հայերեն չի խոսում, սակայն շարունակ փնտրում է հոր երգած երգը, որը նրա ականջներում է անընդհատ, իսկ գտնելուց հետո չգիտի ուրախանա, որ գտել է, թե տխրի, որ հոր սիրած երգը տխուր է:

«Հայկական Եսբիզներ»-ում պատկերված կերպարները չեն կրկնվում: Նրանք շաղկապված են իրար և առանձին գոյություն ունենալ չեն կարող:

Վարդգես Պետրոսյանի ստեղծագործությունն անկեղծ երկխոսություն է ընթերցողի հետ, ուր չկան նյարդային ջղաձգումներ, այլ գրույց է կարծես ինքն իր հետ, իր խոհերի, մտքերի, սեփական եսի բացահայտում ու փոխադարձ հասկացվածության ակնկալում: Ամեն ինչ չէ, որ բացատրվում ու մեկնաբանվում է, բավական է մի բառը, արտահայտությունը, և ընթերցողը հասկանում է նրան, վարակվում հայրենասիրությամբ:

Գրողի վաստակի իրական ճանաչումը սկսվում է ետմահու: Ետևում են մնում երկրային կյանքի հույզերն ու հիասթափությունները, երջանկությունն ու դժբախտությունը, և գալիս է տաղանդին գնահատելու անվերջանալի ճանապարհը՝ հավերժության ուղեգրով: Պետրոսյանն այդ ճամփի արժանի ուղևորն է: Նրա ապրած տարիների շղթան մեծ նյութ կուտակեց և եղավ այնքան իմաստալից, որ չապրածների տեղն էլ լրացրեց: Անգամ տարիներ անց նա պահում է իր ստորագրության պատիվը և տողավերջում ազգանունը գրելու արժանապատվությունը:

Վարդգես Պետրոսյանը Իսահակյանի ծննդյան 100-ամյակին արտասանած ճառում վկայակոչում է վերածնության տիտաններից մեկի՝ Պետրարկայի խոսքերը, որը պատգամել էր, որ գրեին իր գերեզմանին՝ «Նա այստեղ չէ, փնտրեցեք նրան ապրողների մեջ»: Այս խոսքերը կարելի է ասել Վ. Պետրոսյանի համար. նա մեր մեջ է, յուրաքանչյուր հայի լավատեսական հույզերում, ծերունիների իմաստուն մտքերում ու մանուկների ապագան կերտող երազների մեջ:

98 Նույն տեղում, էջ 269:

Օգտագործված գրականություն

1. Անանյան Լևոն, Դիմակայություն, Եր., 2006թ.:
2. Բախչիսյան Ֆելիքս, Մեր տանելու խաչը, Եր., 2008թ.:
3. Պետրոսյան Վարդգես, Ապրած և չապրած տարիներ, Եր., 1970թ.:
4. Պետրոսյան Վարդգես, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Եր., 1977թ.:
5. Պետրոսյան Վարդգես, Հայկական էսքիզներ, Եր., 1983թ., 1984թ.:

Իր ժամանակի տարեգիրք. Հրանտ Մաթևոսյան


Ամենաբարդ գործն արարելն է: Միայն աստված գիտի, թե ինչ ջանքերով ու ինչ անհայտից աշխարհն աշխարհ բերեց ու աշխարհի, իր կերտած աշխարհի հոգսն ու բախտը չափսոսաց, հանձնեց ամենատես ու ամենագետ, ամենատենչ մարդուն:

Աստծո ստեղծած աշխարհն աշխարհ դառնալու համար իրականությունը բավարար չէր, երազանքի ու երևակայության, կարոտի ու հուզականության շաղախն էր պակաս, ու արարիչը թույլ տվեց, որ ստեղծվի իրական աշխարհին զուգահեռ երևակայականը, ավելի մերձ՝ մարդկայինը, ստեղծվի գրականությունը, ծնվի գրողը, որն իր արարման պահին, իր ողջ եռությամբ արարիչ է:

«Աստծուն հավասար արարիչ է գրականությունը: Գրականությունը մարդկության կարոտն է կյանքին» [1, 31], - այսպես է բանաձևում գրականության դերը Հրանտ Մաթևոսյանը:

Աստված մարդկանց մեղքերի համար կյանքով փոխհատուցեց, իրենն էր, իրենից պիտի գևար, իրեն էր ցավ պատճառելու: Այդպես էլ յուրաքանչյուր գրող իր ստեղծած աշխարհի պատասխանատուն է, տերն ու ծառան: Աստված իր պատկերով ստեղծեց մարդուն, գրողն էլ իր երազանքով, իր հոգուց է ստեղծում և պատասխանատու է նրա ճակատագրի համար: Ինչպիսին գրողն է, այնպիսին էլ իր ստեղծած աշխարհն է: Իր ստեղծած կերպարներն իր բուն եռությունից շատ հեռու չեն կարող լինել:

Մաթևոսյանն իր կերտած աշխարհում տեր ու տիրակալ է, և իր ստեղծածն այնքան է մաթևոսյանական, որ ոչ մեկի հետ շփոթել հնարավոր չէ: Արձակագիրն իր ստեղծագործությամբ սեփական Ծմակուտ – աշխարհ է ստեղծել ու բնակեցրել՝ մանկությունից եկող հերոսների կողքին նորերը ստեղծելով: «Շատ կուզեսայի՝ որ իմ հովիտը մեծ ու արևոտ լիներ, կուզեսայի՝ որ նրա բնակիչները միայն լավ մարդիկ լինեին և վատերի համար իմ հովտում տեղ չլիներ, որ իմ մարդկանց կյանքը ծաղկեր լավ ժամանակներում և պատերազմն ու խեղճ թշնամանքը իմ հովիտ խուժելու միջոց



Հրանտ Մաթևոսյան

չունենային, բայց ստիպված եմ լինել իմ ժամանակի տարեգիրը» [1, 6]:

Հրանտ Մաթևոսյան մարդու ու գրողի տեսակային արմատը սնունդ է առնում արարող, ստեղծող, տքնող ու չարչարվող անհատների կենսադաշտից: Նա հերոսներ չի փնտրում, չի հորինում նրանց, այլ տեսնում է կյանքի սովորական ընթացքի մեջ: Մաթևոսյանի բոլոր հերոսներն ունեն իրենց նախատիպերը, որոնք իր շրջապատից են, նրանց մեջ ծնվել ու մեծացել է ինքը: Նրանք, կասեր Մաթևոսյանը. «Մարդիկ են, էլի, իրենց գործին: Բոլորն էլ նշանավոր, և դրա համար էլ ոչ ոք չի առանձնանում» [2,93]: Ուստի բոլորն էլ հավասարաչափ կարող են գրական կերպարների հավակնել: Առանձնակի հայացքը նրանց կյանքի առօրեական թվացող խղճուկ ընթացքին արդեն դարձնում է հասարակ մահկանացուին գրական կերպար: Մաթևոսյանը անտեսում, անգամ երբեմն դատապարտում է սովորականը՝ դարձնելով այն անսովոր: Կերպարները իրենց մեջ նմաններին խտացնող, հավաքական, երբեմն՝ սյուժեից սյուժե թափառող, եզակի կամ կրկնվող, առանձնանում են զգացմունքայնության առատությամբ, անգամ, երբ թվում է, թե անտարբեր են: Նրանք գտնվում են «սահմանային իրավիճակներում», որոնք են՝ տառապանքը, պայքարը, աշխարհի անողջությունը և թշնամանքին դիմակայելու ուղիներ որոնելը, որն էլ, ըստ էքզիստենցիալ փիլիսոփայության / Յասպերս /, իմաստավորում է մարդու գոյությունը [3]: 20-րդ դարի սկզբին ձևավորված, ժամանակակից փիլիսոփայության ամենաազդեցիկ հոսանքներից մեկի՝ էքզիստենցիալիզմի / լատիներեն *existentia* – գոյություն / համար առաջնայինը մարդն է, նրա ներաշխարհը, զգացմունքները, որոշումները: Իսկ որքան շատ է մարդը տառապում, այնքան շուտ է հասնում կատարսիսի / հոգեմաքրում /:

Հրանտ Մաթևոսյանն այն հազվագյուտ գրողներից է, որ կենդանության օրոք դարձավ դասական: Պերճ Չեյթունցյանի գնահատմամբ «Ահնիձոր տանող անհրապույր, քարքարոտ ճանապարհը դարձավ մեր գրականության ամենահրաշալի մայրուղիներից մեկը» [4]:

Երրորդ կուրսի ուսանողի՝ «երկու խմբագիր հեռացնող մեկ ակնարկով» [5, 4] և դրան հաջորդող գործերով Ծմակուտ- Ահնիձոր – Ալավերդի – Հայաստանն իր տեղը ցույց տվեց քարտեզի վրա, որի մասին, ըստ Մաթևոսյանի, Անաստաս Միկոյանը երևի թե կասեր. «Ալավերդին Ամերիկայի ետևից արդեն հասել է» [2, 93]:

Չնայած կուսակցական ու կառավարական նենգավոր հետապնդումներին և ընթերցողի համար երբեմն լեզվի ու մտքի

խրթինությանը, նա սիրվեց ու գնահատվեց, ընդունվեց ժողովրդի կողմից՝ ընկալվելով դարձավ նրա հոգևոր արժեքներից ու ճշմարտության ճանապարհի ուղեցույցներից մեկը: Հաճախ դժվարամարս են ներկայացվող նյութերը, սյուժեները խրթին և ճյուղավորված, բազմատարր, սակայն դրանից ստեղծագործության մեջ ավելի ճշմարտանման է դառնում ասելիքը, ավելի հավաստի: «Եթե սյուժեն հաջողված է, այն երբեք կատարյալ կարգ ու կանոն, կատարյալ պարզություն չի բերում, պետք է պահպանվի սկզբնական որոշ անկարգությունը, բազմատարրությունն ու բարդությունը, հակառակ դեպքում սյուժեի մեջ կյանք չի մնա» [6, 13]: Հարցին, թե ինչու՞ չեն այնպես գրում, որ բոլոր ընթերցողները քեզ ընկալեն ամբողջությամբ, տվել է մաթևոսյանական սրամիտ պատասխան. «Իմ բաստուրման ես կծու եմ անում, ում դուր է գալիս, թո՛ղ ուտի, ով կծու չի սիրում...» [5, 5]: Եվ մաթևոսյանական կծու գրականությունը, ժամանակի հիվանդ ստամոքս-մթնոլորտում ցավի նոպաներ առաջացնելով, ախտորոշեց ու բուժման դեղատոմս առաջարկեց: Իր գրականությամբ «նա նշանավորեց մի ամբողջ հեղափոխություն մեր ազգային գեղարվեստական մտածողության մեջ» [6, 97]:

Հրանտ Մաթևոսյանի՝ դեպի չերևացող հեռուները գնացող գրական ճանապարհը սկիզբ է առել մանկությունից: Հետպատերազմյան տարիներին, մոտավորապես 1947 թվականին, Ահնիձոր գյուղի Ճրագթաթ հանդամասում թուրք խաշնարածների հետ վեճի ժամանակ սպանվել են գյուղից երկու երիտասարդ՝ Զառյան Գիքորն ու Ավետիքը: Դեպքը ցնցել է ողջ գյուղը, որն էլ պիեսի նյութ է դարձել 5 - 6 -րդ դասարանցի Հրանտ Մաթևոսյանի համար: Համագյուղացիների, դասընկերների և հարազատների վկայությամբ այն բեմադրվել է աշակերտների ջանքերով, գյուղի ակումբին կից գործող թատերական խմբակում: Ցավոք, պիեսի ձեռագրերը չեն պահպանվել:

Ըստ Հրանտ Մաթևոսյանի կնոջ՝ Վերժինե Մովսիսյանի, մեծ գրողի առաջին գեղարվեստական լուրջ գործը ուսանողական տարիներին գրված «Ծաղրածուների մեր տոհմը» պատմվածքն է: Ստեղծագործությունը մանկության տպավորությունների վրա է հյուսված: Հեղինակը պատմում է. «Ավետիք պապիս մեծ ընտանիքը հավաքվում էր՝ հարսները և տալերը: Մենք՝ երեխեքով, ներկա էինք լինում և լսում գյուղի ամբողջ թատերացված կյանքը հարսների կատարմամբ: Ամբողջ գյուղի տնազն անում, ամբողջ գյուղը ներկայացնում էին: Շարժումներից բոլորը ճանաչվում էին: Եվ հենց այդտեղ ստեղծվում էր դրաման, կոմեդիան» [9, 516]:

Պատմության մեջ իրերի և մարդկանց, նրանց արարքների ընկալումը մեկ կերպարի հայացքով ներկայացնելը մաթևոսյանական արձակի յուրօրինակ դրսևորումներից է, որն էլ ընկած է այս պատմվածքի հիմքում: Աննկատ, էջ առ էջ, խորասուզվելով բովանդակության մեջ, սկսում ես խորհել ու անգամ դատել գրողի համակրած կերպարների իմաստասիրությամբ: Երբ տարբերությունները հերսների սպասելիքների և բացահայտածի, աննկալիքների և ստացածի, պատրանքի և իրականության միջև նկատելի են դառնում, ծնվում է ցավը, և սկիզբ է առնում հերոսի հոգեկան դրաման, որը դեռ չի սպիացել և ամեն քայլափոխի հիշեցնում է իր մասին: Աշխարհի մերկացած նյարդը լինելով՝ Մաթևոսյան գրողը պարտավորվում է մատը դնել արյունոտ վերքի վրա, ցավ պատճառելով որոնել բուժման մեթոդներ: «Գրողը բժշկի նման ցավի մասնագետ է» [6, 166]: Եվ նրա նման «Փռշու վրայով գլորվող ջրի հուշիկությամբ իմ մեջ մի բան ուռչում է, վարակելով ամբողջ մարմինս: Եվ բջիջներս տեղի են տալիս» [2, 7]: Պատմվածքի հերոսը մեզ փոխադրում է գյուղ, ուր մենք շրջապատված ենք տոհմեցիներով: Նրանք բոլորն էլ ծաղրածուներ են, ամեն մեկը մի գյուղ կծիծաղեցնի, և եթե միանան, կծիծաղեցնեն աշխարհի բոլոր գյուղերին: Այդ ծիծաղը գյուղում պատեպատ է խփվում, ամպրոպի արձագանք տալիս: «Մարդ է ծնվում մեր տոհմում, մարդ է մահանում – ոչ ոք չի իմանում այդ. գուցե և իմանում են, բայց լուրջ չեն համարում, թատրոնի պես մի բան են համարում» [2, 14]: Պատմվածքի՝ առաջին դեմքով պատմող հերոսը չնայած միայնակ չէ, կան այլ հերոսներ, խոսում է ամբողջ տոհմի անունից, որն իր միջոցով շարունակ ներկա է և ներհայեցողությամբ / ինտրոպեկցիա / բացահայտում է իր սեփական գոյությունը: Ինքն իրեն հանդիպել – դիտարկելով՝ առանձնանում է ընդհանուրից և իր եսի մեջ խտացնում տոհմի դրամատիկ ճակատագիրը:

Չհասկացված, չգնահատված, խորթ չափանիշներ դավանող շրջապատում իր նման մտածող, գործող, առաջնորդվող անհատների բացակայությունը ստիպում է պատմվածքի «ծաղրածու» հերոսին զբաղվել հավիտենական մենախոսությամբ, որը դառնում է սփոփանքի մի ձև՝ երկխոսություն իր և իր միջև, ես-ի մեջ կարեկից, զրուցակից, հոգեկից որոնելու ու գտնելու հայտնագործություն:

Ծաղրածուները միայնակ չեն, տոհմով են, որոնցից ամեն մեկը մի գյուղ կծիծաղեցնի, սակայն. «Դժբախտությունն այն է, որ աշխարհը լուրջ է, մտածում է, մտածելու ջիղն է զարգացրել ըմբիշի թիկունքի պես, իսկ ծիծաղի ջիղը դարձել է ճգնավորի թև» [2, 11]:

Եվ չնայած տոհմակիցները ծիծաղում են աշխարհի վրա, նրանց ծիծաղը վշտից է ծնված: Յուրովի դժբախտ է և՛ Մացակը, որի խելքությունը մարդիկ չհասցրեցին նկատել, և՛ համալսարան չսովորելու մտքի հետ հաշտվող Վախթանգը, և՛ «պատերազմին ողջ եվրոպան ոտքի տակ տված», բայց զգվելի խելհույսունից մի բուռ դարձած հորեղբայրը, և՛ «պատերազմում ախպոր յոթ տղա, մեկ ախպեր, չորս որդի ու տասնմեկ թոռ» [2, 21] կորցրած տատը, որն «իրեն պինդ է պահում, որ հիշողությունները քսաներեքի մասին ապաստարան ունենան» [2, 22], և՛ ինքը՝ պատմող- հերոսը, որն արդեն յոթերորդ դասարանում է և գիտի, որ «աքսիոմաները ապացուցման կարիք չեն զգում» [2, 16]: Եթե ոչինչ փոխել չես կարող, մնում է լիաթոք ծիծաղել, ու «տրեխը կոշիկ է թվում» [2, 23]: Այդպես առաջորդվում է թալանողներին նայող, անմիտ ծիծաղողների ողջ տոհմը, որը անգորությունից աշխարհին դեմ է տալիս իր ծիծաղը:

Յետպատերազմյան տարիների դրամատիկ պատմություններ են ընկած Հրանտ Մաթևոսյանի «Վերադարձ», «Թռուցիկ համբույրներ» պատմվածքների հիմքում, որոնք «Ահնիժորի» շուրջ բարձրացված «աղմուկից» և հեղինակի հարկադրյալ լռությունից հետո Բեյրութի դաշնակցական բյուրոյի անդամ դոկտոր Փափագյանի շնորհիվ հրատարակվեցին սփյուռքի համար տպագրվող «Սովետական Հայաստան» ամսագրում 1962 թվականին [9, 500]: Ինչպես Մաթևոսյանի բոլոր գործերը, այնպես էլ «Վերադարձ» պատմվածքը, որը հեղինակն իր առաջին լուրջ գործն է համարել և տպագրել «Հովսեփը վերադառնում է բանակից» [6] վերնագրով, իրական հիմք ունի [9, 498-500]: Պատանեկան սիրո, հուզմունքի արտահայտություն է այն, հիշողության ծալքերում ինամքով պահ տվածի վերաիմաստավորված կարոտ և յուրօրինակ հարգանքի տուրք պատերազմում զոհված շատ սիրելի փոքր հորեղբորը՝ Երանոսին: Մաթևոսյանն անկեղծ և հազվադեպ պատահող հիացմունքով է խոսում պատմվածքի մասին. «Փոքր գործ է, բայց շատ կարևոր է ինձ համար» [9, 498] և ավելացնում. «Հիմա եթե տպեմ՝ «Վերադարձ» կդնեմ վերնագիրը» [9, 499]:

Մանկությունից եկող տպավորությունների սուբյեկտը հենց ինքն է՝ հեղինակը: Վերջին անգամ հիշում էր հորեղբորը, երբ իրենց դռանը կոպ էին մորթում, իսկ ինքը չորս տարեկան էր: Ֆինսական պատերազմի ավարտից հետո չէր հասցրել զորացրվել և մասնակցելով Երկրորդ համաշխարհայինին՝ զոհվել էր: Գյուղում մնացած դուստրը մահացել էր հիվանդությունից, իսկ կինը երկար չեմուչումից հետո ամուսնացել էր ու գնացել Դսեղ: Նրանց կիսա-

կառույց տան փլատակները վկայում էին երիտասարդ ընտանիքի կորստյան մորմոքը: Այս մասին Մաթևոսյանը գրել է նաև «Ահ-նիձոր» ակնարկի «Երեխաները» վերնագրով հատվածում, որը տպագրվեց «Գրական թերթի» 08.04.2011-ի համարում [10, 19]: Սովորական թվացող պատմություն, որի մեկ օրինակ էր, որ գիտեր թեկուզև Ահնիձորի նման փոքր գյուղը:

Միայն կենսագրական փաստը կամ հիշողության չխամրող պատկերները որպես հաջողված ստեղծագործության նյութ բավական չեն կերպարների հույզերը, կյանքը ներկայացնելու համար: Անցյալի հուշին գումարվում է հեղինակի երևակայությունը, այն ինչը բացակայում էր իրական կյանքում, գեղարվեստական երկում դառնում է հիմնական ասելիք: Եվ քանի դեռ անցյալը մասնակիցն է ներկայի ապրումին, անհրաժեշտ է ներքին կյանքն ավելի դրամատիկացնել, որպեսզի արդյունքում ըստ Բերգսոնի տեսնենք «շարունակականությունը լինելիության, որ ապրող իրականությունն է» [11,231]: Յեղիևակը համաձայն էր, որ հերոսը սպանված լինել, և մաթևոսյանական աշխարհում Յովսեփ դարձած Երանոսը չի գոհվում, այլ վերադառնում է: «Այդ վերադարձն իմ վերադարձն էր: Ես, տասնհինգ տարեկան, եկել էի Երևան և ամեն անգամ մտքով, այդ ճանապարհով դարձյալ հայրենի տուն էի գնում: Նրա վերադարձով իմ վերադարձն էի տեսնում...» [9, 499]: Յեղիևակը չի կեղծում, այլ իր զգացմունքներից, հույզերից ու երազներից ստեղծում է մի երևակայական աշխարհ, ուր ամեն ինչ ընթանում է իր նախընտրած ճանապարհով: Ճշմարիտ գրողը չի կարող գրել իրեն անծանոթ երևույթների ու զգացումների մասին: «Ինչպե՞ս ասել, որ մեռնող գնդապետի համար աշխարհը խլացավ ու կուրացավ՝ երբ ես մեռած չկամ», - անկեղծա- նում է Մաթևոսյանը [1, 32]:

Կերպարներին ներկայացնելիս հեղինակը պերճախոս է: «Յովսեփը կտրիճ տղա էր, բանակ գնաց մի կատաղած հովատակի վրա» [2,24]: Կարծես ամեն ինչ ասված է կերպարի մասին՝ կտրիճ և կատաղած հովատակ սանձող, սակայն պատերազմը ուժ ու քաջություն հաշվի չի առնում: Շատերի նման գալիս է Նրա «սև թուղթը»: Էմմայի կերպարը ևս ավելորդ լրացումներով չի առանձնանում: Բավական է, որ «նա իր վշտի մեջ գեղեցիկ էր ու հպարտ» [2,24]: Կերպարները սեփական արարքներով ու անցյալի հիշողությամբ բացահայտում են իրեք իրենց: «Մարդն այն է, ինչ նա հիշում է» [6, 256]: Ոչ մի գրող կերպարի անցած կյանքի ամբողջական պատկերն այնպես սպառնիչ, մանրամասն և միևնույն ժամանակ այնպես իմիջիայլոց, խոսքի մեջ չի տվել, ինչպես

Յրանտ Մաթևոսյանը: Նա ողջամտորեն բաց է պահում անցյալի և ներկայի միջև գոյություն ունեցող ուղիները, և հենց անցյալի հուշն է, սիրո ու քնքշանքի, փոխադարձ հոգատարության մի գիշեր, որ փրկում է հերոսների ներկան:

Պատերազմական ցուրտ գիշերներին Էմման հաճախ էր հիշում և հեկեկում անօգնական երեխայի պես «Աչքերի առաջ աղի ճաշի և բրդե ֆուֆայկայի գիշերը» [2,30]: Ամուսնու՝ բրդե հաստ վզով հին ֆուֆայկան, որն ըստ Էմմայի ամենաշատն էր սագում նրան, և տասը հատ ունենալու փոխարեն մաշվել է, արմուկները մի քիչ քանդվել, բայց մնում է: Էմման խնամքով սարքել է այն, որն իր տաքուկ հուշերի առանցքն է, ամուսնուն հիշեցնող ու նաև իր փափկությամբ սիրտ փափկեցնող հուշը: Յովսեփի համար Էլ ամենակարևորն այն է, որ թեկուզ և կարկատած, բայց մնում է: Էմման Էլ մի քիչ «անմաքուր», մի քիչ կուչ եկած ու բարկացած իր ու ողջ աշխարհի վրա, իրենն է, իր հարազատը, ինչպես բրդե ֆուֆայկան, դեղնած դդումը, Բոբը, կանացի թույլ ձեռքերով պոկոտած հին կոճղը, չորացած քիվը, տերևաթափ այգին, ցանկապատը, թիթեղյա վառարանը, սպիտակ սփռոցով սեղանը, իրենց հարսանեկան նկարն ու պատի խալին՝ շրջապատված ձեռագործ կատվով իր յոթ ձագերի հետ, որոնք կարծես հսկում էին դռնից ներս մտնողներին: Իրենն էր նաև սեյյակի անկյունի անկողնակալը, որն առաջվա նման ծածկված էր ուղտի բրդից հյուսված կանաչավուն ծածկոցով ու վրան ականջները ցցած միակ բարձով: Այս ամենի հետ իրենն էր նաև Էմման, որին գրկելով Յովսեփը խորն ու անբացատրելի զգացում ապրեց: «Նման բաներ Էլի եղել են Յովսեփի հետ. պատահել է՝ գրկած տանելիս է եղել վիրավոր սանհտարուհու, մահացել է թևերի վրա, նրան թողել է, տարել մի ուրիշ վիրավորի» [2, 30]: Եվ Յովսեփը փորձում էր մոռանալ, որ աշխարհում շեկ գլխով ֆինբաժնի տեսուչ կա, տանը օտար առարկա՝ ընդամենը մոխրաման, կամ երկու հոգի միասին են քնել: Նա տուն է մտնում պատերազմ հիշեցնող սապոզները հանած, որը ոչ մի կապ չէր կարող ունենալ նոր ու խաղաղ կյանք խորհրդանշող, սուսուփուս աճած դեղին դդումի, զուգարան տանող արահետի, տանձենու կարմիր տերևների ու վաղվա միամիտ օրվա հետ. չէ՞ որ աշխարհում այնքան կեղտ կա և այնքան կեղտոտներ: Նրա հոգում կենդանացած պատերազմի պատկերների՝ կեղտի, զգվանքի, սարսափի, ճերմակ ժապավենը գլխին՝ որպես խաղախության աղավնի, սովից ու ցրտից երկուսուկես տարեկանում մահացած դստեր, մայիսի իննին զոհված կապիտան Սոբոլևի հայիոյանքի ,ափսոսանքի ու լացի դիմաց հառնեց խեղճու-

թյունը, որը կար տանն ու այգում գտնվող իրեն հարազատ բոլոր առարկաների մեջ: Ու՞մ վրա գոռար, ի՞նչը ջարդեր, ու՞մ հայհոյեր: Իսկ Էմման խեղճության իսկական մարմնացում էր, անգամ, երբ կտրուկ, չոր-չոր ու թշնամանքով խոստովանեց. «Նա՛ սկսեց, բայց եթե ես առիթ չտայի, չէր սկսի» [2,28]: «Նա / Էմման/ փոքրիկ էր, տակից կարկատած շորեր էր հագնում, ձեռքին ձվեր կային, փոքր-ինչ կուչ եկած էր, կարմրած, թաց կոպերով էր, և նրա մեջ չկար այն դևը,որի վրա շպրտեիր մարմարե մոխրամանը» [2,34]: Եվ կորուստներ ճաշակած Յովսեփի համար բարոյականության այդքան փոքր խաթարումը չէր կարող ավելին լինել, քան տունը, լռությունը, խաղաղությունը, ժպտացող տաքությունն ու իր կողքի աթոռին, վերմակի ծայրը ձեռքին քնած Էմման: Այս ամենի համար ամեն ինչ կտար պատերազմով անցած մեկ այլ հերոս՝ Մաճկալանց Դավիթը՝ Ստեփան Չորյանի «Պատերազմ» պատմվածքից [12,418]:

Յովսեփը Էմմայի համար սոսկ մեկը չէր, որի հետ կարող էր անկողին կիսել, և իզուր չէր, որ տեսուչի հետ վիճելուց հետո անզորությունից կատաղած լաց էր եղել ու սպառնացել. «Դու սպասի՛ր, եթե Յովսեփը եկավ, եթե նա եկավ... Ախ գար, էլի, գա՛ր...» [2,24]: Այդպես մտածում են եղբոր մասին, ամենամտերիմի, հարազատի մասին: Պատահական չէ, որ «Էմմայի մեջ նրա գլուխը, մինչև գոտկատեղը, տաք ջրով լվանալու ցանկությունն առաջացավ: Յետո կլվանար նրա մազոտ ոտքերը. շալվարը կքշտեր ծնկներից վեր ու տաք ջրով կտրորեր: Կասեր. «Դու ծխիր, մեռնե՛մ քեզ, ես կլվանամ», և ոչ մի ուրիշ բան չէր անի» [2,30]:

Նրանց միջև եղածը մի անբացատրելի կապ էր, որը մերժում էր պատերազմ ու ցավ, հիասթափություն ու դավաճանություն: Այն իմաստավորում է այն վերադարձը, որով գալու է մյուս օրվա բարի լույսը, ու կարծես ոչինչ էլ չի եղել, նույն կյանքն է, նույն տունը, նույն ճամփան. «Նրանք գնում էին՝ Յովսեփը շինելը ուսերին ու դրանից ավելի թիկնեղ ու բարձրահասակ երևացող, Էմման՝ նրա թևի մոտ մի քիչ կուչ եկած ու բարալիկ: Կանայք նայեցին, մինչև նրանք փոքրացան, դարձան մի մարմին» [2,26]:

«Թռուցիկ համբույրներս» Էջուկեսանոց փոքրիկ պատմվածքի ասելիքը մաթևոսյանական գրելաոճին համաձայն բավականին խիտ է ներկայացված: Մի քանի կարճ նախադասություններով հեղինակին հաջողվել է տալ պատերազմյան տարիների թշվառ պատկերը, որը կեսկիլոյանոցով մեղրի նման բոլորին էր: Կյանքի ծանր բեռն ու թշվառությունը մարդկանց հոգիները կոշտացնելու փոխարեն սիրո ու կապվածության անբացատրելի գաղտ-

նիքներ են բացահայտում: «Դա նշակում է, որ կա բոլորովին մի ուրիշ աշխարհ, գրագիտության աշխարհը, որտեղ կան այն բոլոր բառերն ու մտքերը, որ մայրս հոգում ունի հորս համար, դա նշանակում է, որ մայրս հորս շատ է կարոտել, բոլորովին ուրիշ կերպ է կարոտել, և այդ կարոտը պետք է ասվի բոլորովին ուրիշ բառերով» ու անգամ «թռուցիկ» համբույրներով [2,37]:

60-ական թվականների սոցիալ-տնտեսական տեղաշարժերի արդյունքում գիտատեխնիկական առաջընթացը թափանցել էր կյանքի բոլոր ոլորտները՝ չբացառելով որոշակիորեն իր կայունությունն ու անդորրը պահպանող գյուղը: Հրանտ Մաթևոսյան գրողն իր ստեղծագործության հիմնական ասելիքը վերցնում է գյուղից՝ նրա մարդկանց, հոգսի ու խնդիրների վավերագիրն ու արձանագրողը լինելուց զատ դառնալով խորհրդատուն ու ցավի տերը: «Գրականությունը գրողական էսի արծարծումն է, եթե դու մարդ ես, գրող ես, քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ գրող ես, եթե իսկապես գրող ես, կամ քո գրվածքները ցողված են ամենաչնչին իսկ անկեղծությամբ, ապա չի կարող պատահել, որ քո ծնած մարդիկ լինեն տասնյոթերորդ դարի շվեդներ» [1, 36]: Եվ եթե «...ամեն, ամեն ինչի կարոտն է գրականությունը» [1, 42], Մաթևոսյանի ստեղծագործությունը համակ կարոտի խտացում է դեպի մանկության աշխարհ, դեպի արմատներ: «Ա՛խ, տեսնես ի՞նչ է անում,/ Ով, որ չունի աշխարհում/ Հայրենական տուն» [13, 8]:

«Գրողը, որի մանկությունն անցել է գյուղում, ինքնաբերաբար աշխատում է իր պատկերացման մեջ «պահածոյացնել» անձնապես իրեն հոգեհարազատ կյանքը այնպիսի ձևերում, ինչպես այն ընկալել է մանկական տարիքում» [14, 61]:

«Մեռելալույս» անտիպ պատմվածքը Մաթևոսյանը հավանաբար գրել է 1969 թվականին, քանի որ պատմվածքի մեջ հիշատակում է Հովհաննես Թումանյանի 100-ամյակի տոնահանդեսը: Դպրոցի տնօրենը՝ Ղևանտի քույր Անուշը, «Աղունի տղային Դսեղում, Հովհաննես Թումանյանի հարյուրամյակի տոնահանդեսին ասաց. «Մեր էս Թումանյանը իսկապես՞ լավ բանաստեղծ է, թե էկպես- տնեցիներով տոնում ենք»» [15, 19]: Գլխավոր հերոսը՝ Աղունը, հիշում է. «... մեր որբ մանկությունից ու հայրական տնից հեռանում, սիրում, ատում, ծեծվում, ծնվում, սնվում, կողոպտվում ենք, բայց մի քայլ էլ չենք հեռանում մեզանից, դեռ կանգնած ենք Վանքերի դպրոցի դռանը, աշևան տգեղ ցուրտ է, մեր խորթ մայրը դպրոցից մեզ հանել է, դասատուն մեզ ներս չի կանչում, քանի որ համաձայնել է Դարպասեցուն, թե մենք անըն-

դունակ ենք, իսկ դասարանում կարդում են՝ «Նանի ջան, նանի, էն սարի լանջին ինչքան ավլուկ է տալիս կանաչին, նանի ջան, նանի, թող գևամ քաղեմ, քաղեմ ու հյուսեմ, էն սարի լանջին ջան գյուլում կանչեմ» [15, 16]:

«Նանա իշխանուհու կամուրջը» վիպակի գործողությունները ծավալվում են 1918 – 20-ական թվականներից մինչև 1960 – ական թվականների սկիզբը: Հարուստ պատկերների, դեպքերի առատության, մարդկային մի քանի սերունդների ու ընտանիքների կյանքի նկարագրությամբ, զուգահեռ ընթացող սյուժեների ու սյուժեից սյուժե թափառող կերպարների շնորհիվ հեղինակին հաջողվել է ներկայացնել մեր երկրի ու ժողովրդի կյանքի ամենաբարդ ժամանակահատվածի ամբողջական պատկերը: Վեպում հանդիպող հերոսները՝ Իշխանը, Նրա հայրն ու որդիները, կինն ու քույրը, դուստրն ու փեսան, վերջապես Նրան շրջապատող աշխարհն ու նաև Ծմակուտը, շարունակվում են «Ծաղրածուների մեր տոհմը», «Մեռելալույս», «Օգոստոս», «Աշնան արև», «Ի սկզբանե էր բանն» և ընդհանրապես Մաթևոսյանի ողջ ստեղծագործության մեջ:

«Տափաստանում» ակնարկը տպագրվել է 1959 թվականի հուլիսին և ներկայացնում է ուսանողական խմբի հետ Չաօգյորնիում (Չեյպբինսկ) աշխատելու անմիջական տպավորությունները: Ակնարկի հիմնական գաղափարը բազմազգ երկրի իրավահավասար քաղաքացիների աշխատանքն է, Նրանց չարքաշ խոպանային առօրյան, դժվարությունները, մահն ու ծննունդը: Հերոսները՝ դազախ ու ռուս, հայ ու ուկրաինացի, կին ու տղամարդ, երիտասարդ ու ծեր հավասար աշխատում էին, ունեին Նույն հոգսն ու երազանքը, և ոչ միայն իրենք էին մշակում տափաստանը, այլև տափաստանը իրենց [19]:

Ստեղծագործական վաղ շրջանում գրված պատմվածքներում՝ «Քննության» [16], «Լեռներս թողեցի վերևում» [17], որը 1967 թվականին տպագրվեց «Օգոստոս» ժողովածուում «Շները» վերնագրով [18, 133], ներկայացվում են պատանեկության տարիների անմար հուշեր, անջնջելի տպավորություններ, որտեղ գեղջուկ տղաները բնութագրվում են կյանքի զարմանալի ճանաչողությամբ, իսկ գլխավոր հերոսը, որն ինքը հեղինակն է, առանձնանում է իր գիտելիքներով և արդեն ձևավորված կայուն ինքնագնահատականով . «Ուսուցիչներս ասում էին, որ ես ընդունակ տղա եմ, և համալսարանի ցանկացած ֆակուլտետի կուկուրսի տակ եղած հիսունից առաջին տեղն ինձ էին տվել» [16, 42]: «Քննության» պատմվածքում պատանի հերոսների համար չափի

զգացողության դաստիարակությունը ամենակարևորն է ավանդական գսպվածությամբ ու բարոյականությամբ ապրող միջավայրում: Ամեն առավոտ դասի գնալուց առաջ տատի կիսափակ սունդուկից չիր հանելու համար պետք է ձեռքը մտցնել կափարիչի տակից, որն օղակներով էր փակված: Ութերորդում՝ հինգ բուռ, իններորդում՝ հինգ բուռ, տասներորդում՝ էլի հինգ բուռ, միայն բռերի մեծանալու հետ ավելանում էին օղակները, և չրի չափը համապատասխանում էր տարիքին: Եթե փորձեր տասը բուռ հանել շատ չսեղմած բռերով, կուշանար ընկերներից ու դասից, իսկ միանգամից շատ լցրած բուռը կլռվեր կափարիչի տակ, մնում էր ենթարկվել ու բավարարվել եղած չափով՝ միշտ հինգ բուռ և ոչ ավելին: Այսպիսով՝ մանուկ հասակից ավանդապահ գյուղացին երեխայի մեջ դաստիարակում է չափի գիտակցությունը, որը հսկելու էր նրան ողջ կյանքի ընթացքում: Նույն փիլիսոփայությամբ է ապրում նաև Գիգոլ պապը, որը թույլ է տալիս ծիրան ուտել այգում, սկզբից չտեսնելու է տալիս, սակայն հետո, իբրև թե բարկանում է՝ թույլ չտալով չափն անտեսել: Պատմվածքում հոլովվում է 5 թիվը՝ 5 բուռ չիր, գյուղից 5 հոգով են գնում քաղաք, 5-ն ամենաբարձր գնահատականն է, համալսարանի բակում կաղ Ռուբիկի մեքենան 5 անգամ ազդանշան է տալիս, քննության ընթացքում դասախոսը 5 անգամ սրբում է ճակատի քրտինքը, համալսարան դիմած գյուղացի տղաները հեռաձայնով տեղեկացնում են նախագահին, որ 5 օր ման են գալու, նախագահը տալիս է 5 ժամ: Սա նշանակում է, որ չափի զգացողությունն ամենամեծ արժանիքն է պատանիների համար, որոնք իրենց անգրագետ ու աղքատ գյուղացի ծնողներից առաջին հերթին հենց այդ են ստանում որպես ժառանգություն:

Մաթևոսյանի ստեղծագործություններում ավագ սերնդի կերպարների համար առավել բնորոշ է ներքին երկվությունը: Մի կողմից որդիների ապագան ավելի պայծառ տեսնելն է՝ կրթություն ստանալը, ավելի հեշտ ու մաքուր թվացող միջավայրում ապրելը, ինչպես «Լեռներս թողեցի վերևում» [17] պատմվածքը, որը կարելի է զուգահեռել Զովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքի հետ [20,261]: Մյուս կողմից տան հոգսի ու թշվառ կյանքի ազդեցությամբ որդիներին գյուղում պահելն ու նրանց աշխատանքի շնորհիվ հոգսը թեթևացնելն է: Այդպիսի հերոսների մի ամբողջ պատկերասրահ ունի Մաթևոսյանը, հենց միայն իր վաղ շրջանի երկերում՝ «Ծաղրածուների մեր տոհմը» [2] պատմվածքում Վախթանգի հայրը, որն իր հաշիվներում շատ նման է Զովհաննես Թումանյանի «Իմ ընկեր Նեսուն» [20,330] պատմվածքի Նեսոյի հորը:

Կարծես այս ամենի ամփոփումն է «Քննության»[16] պատմվածքի վերջում մոր արցունքներին անտարբեր թվացող հոր խոսքը . «Գնալիս ծիրան գողացա՞ք: Վերադարձին գալե՞թ բերիք պահակի համար: Յարցերը գիտեիր, բայց չուզեցի՞ր ուսանող դառնալ: Դարչինով թեյը շատ լավն է» [16,49]: Յետաքրքիր է ավանդապահ գյուղացու կյանքի փիլիսոփայությունը. այն անընդհատ տուր ու առ է՝ խոսքի դրական ու բացասական դրսևորումներով: Յայրը համոզված է, բայց կրկին ստուգում է որդու սերտած ամենակարևոր դասը՝ լավին լավով պատասխանելու, շնորհակալ լինելու կարողությունը: Գնալիս Գիգոլ պապը թույլ տվեց, որ ծիրան «գողանան», ետդարձին «գալեթ» ստացավ, իսկ համալսարան չընդունվելն այնքան էլ մեծ ողբերգություն չէ:

Ողբերգությունը Յրանտ Մաթևոսյանի պատկերացրած «... ծառուղում նստած, իմ գիրքը ծնկներին դրած կարդացող աղջկա բացակայությունն է» [9, 459], որը մտահոգում էր գրողին՝ ցավոք, պատճառ դառնալով կյանքի վերջին տասնամյակում գեղարվեստական նոր երկեր չստեղծելուն (բացառությամբ՝ «Եզրով» անտիպ վիպակի): Արձակագիրն իր ողջ ստեղծագործությամբ խիզախել է իրականությունը տեսնել այնպես, ինչպես այն գոյություն ունի: Նա, իր ժամանակի տարեգիրը լինելով հանդերձ, նաև վավերագրողը լինելու քաջությունն ունի: Յրանտ Մաթևոսյանի թողած գրական ժառանգությունը բարոյականության դասեր տալու յուրօրինակ հանրագիտարան է, որի կարիքն ունի այսօրվա մարդն ու քաղաքացին:

Գրականություն

1. Յրանտ Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև, Երևան, 2004, 366 էջ:
2. Յրանտ Մաթևոսյան, Նանա իշխանուհու կամուրջը, Երևան, 2006, 140 էջ:
3. Карл Теадор Ясперс, Философия. Книга 2. Просветление экзистенции, 2012.
4. «Գրական թերթ», 2005, դեկտեմբերի 2, թ. 42:
5. Սամսոն Քառյան՝ կազմող և խմբագիր, Յրանտ Մաթևոսյանի «Ահնիձոր» ակնարկի քննարկումները և արձագանքները, Երևան, 2007, էջ 80:
6. Լևոն-Չավեն Սյուրմեյան, Արձակի տեխնիկա. չափ և խենթություն, Երևան, 2008, 333 էջ:
7. Զրաջօ, Յրանտ կամ դառնամուխ կյանք, Երևան, 2003, 99 էջ:

8. «Սովետական Հայաստան», 1962, թ. 2:
9. Հրանտ Մաթևոսյան, Ես ես եմ, Երևան, 2005, 518 էջ:
10. Վաչագան Գրիգորյան, Հրանտ Մաթևոսյան. Ստեղծագործությունը, Երևան, 2013, 561 էջ:
11. Д. Ю. Кучерюк, В. И. Мазепа. Искусство и творческая деятельность, 1979.
12. Ստեփան Չորյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 2, 523:
13. Համո Սահյան, Երկեր երկու հատորով, հ. 1, Երևան, 1984, 390 էջ:
14. Ю. Галкин, Деревня- литературная и подлинная, „Вопросы литературы“, 1973, N 3.
15. Հրանտ Մաթևոսյան, Մեռելալույս, անտիպ, 43 էջ:
16. Սովետական գրականություն, 1960, N2, էջ 42-49:
17. Սովետական գրականություն, 1962, N 8, էջ 70-74:
18. Հրանտ Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1967, 290 էջ:
19. Սովետական գրականություն, 1959, N 7, էջ 32 - 42:
20. Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1978, 503 էջ:

Կնոջ կերպարի որոշ առանձնահատկություններ Ալիս Յովհաննիսյանի արձակում

«Կնոջ հոգու մեջ էթե հրեշտակը գրեթե միշտ մրափած է, խոհարարուհին միշտ արթուն է: Կանանց գրականությունը սեռային թերության արդյունք է»:
/Կոստան Չարյան/

Թե ինչի և ում ազդեցության տակ է արտահայտվել Կոստան Չարյանը, այսօր դժվար է մեկնել, սակայն մի բան պարզ է, որ նա հնարավորություն չուներ ծանոթ լինելու մի շարք հայուհի գրողների և, մասնավորապես, Ալիս Յովհաննիսյանի ստեղծագործություններին:

Հասարակության մեջ կանայք իրենց առանձնահատկություններով, իհարկե, խիստ տարբերվում են տղամարդկանցից: Բնականաբար, կին գրողները ևս պետք է ունենան իրենց սեռային տարբերությունից բխող վերաբերմունքը նաև արվեստում, հատկապես գրականության մեջ:

Կնոջ կերպարի կերտումը, նրա պահանջների, սկզբունքների, խնդիրների արձարծումը ժամանակակից հայ արձակի հիմնական խնդիրներից է, որովհետև այսօր գաղտնիք չէ, որ պետության զարգացման, և ինչո՞ւ չէ, ազգի պահպանման համար նրա դերն ու տեղն առավել նկատելի է: Հատկապես հետերկրաշարժյան իրականության մեջ:

Կանացի կերպարների մի հետաքրքիր փունջ ունի Ալիս Յովհաննիսյանը (Յովոյի կինը, Նունիկը, Շուշանիկը, Եղսաբեթը...)

Նրա ստեղծագործություններում առանձնահատուկ է սեփական վերաբերմունքը աշխարհի նկատմամբ, վերջինիս ամբողջությունը իր իսկ զգացողությունների մեջ հնարավորության սահմաններում արտացոլելու ձգտումը: Ալիս Յովհաննիսյանի արձակն այնքան ճշգրիտ է ներկայացնում իրականությունը, որ նրա չափման միավորը նույնանում է կյանքի հետ: Նրա ստեղծագործություններում բացակա են մարդկային այն անհատները, որոնք միայն բարձր կամ ցածր առաքինությունների կրողներ են, որն ապացուցում է գրողի հոգեբան լինելու փաստը: Ստեղծագոր-



Ալիս Յովհաննիսյան

ծություններում հանդես է գալիս կյանքի մարդը, որը եթե անգամ չար է, նախանձ, թունոտ կամ «լաչառ» («Յոզի կնոջ կյանքի մի օրը» պատմվածքում՝ սկեսրայրը՝ Վարագդատը, սկեսուրը և ուրիշներ), ապա նա օտար չէ շրջապատին և ներկայացված է կյանքի բնականոն ընթացքի մեջ:

Արձակագրին հաջողվել է մարդկանց հոգեվերլուծության նուրբ զգացողությամբ կերտել իր կերպարներին՝ օժտելով նրանց այնպիսի բարոյական ըմբռնումներով և չափանիշներով, որոնք դարձել են նրանց բնավորությունների դրսևորման գործոն: «Յուրաքանչյուրը տերն է իր արածի և ծառան՝ անելիքի»։ հենց այս փիլիսոփայությամբ է առաջնորդվում «Յոզի կնոջ կյանքի մի օրը» պատմվածքի հերոսուհին, որն անգամ անձնանուն չունի, այլ պարզապես Յոզի կին: Յենց այս գիտակցությամբ էլ ապրում ու գործում է նա:

Իր կատարած յուրաքանչյուր քայլի, անգամ լուռ կանացիական մտորումների մեջ ելնում է այս տեսանկյունից: Յերոսուհին բավարարվում է միայն ընտանիքի մայր և ամուսնու համար կին լինելով: Անգամ իր հանգստի պահերին պարտականությունները հանգիստ չեն տալիս, և ինքն իրեն քննադատում է, սթափեցնում. «Ախչի՛, դու իրավունք ունե՞ս բազկաթռի մեջ երկու թուփ նստելու. աչքերդ փակեցիր-բացիր, երեխեքը դպրոցից տուն են գալու, հետո դասերը, հետո երաժշտական դպրոց» և այդպես օր օրի: Կանացի բնագոյն ու ինքնագիտակցությունը թույլ չեն տալիս երկար խղճալու ինքն իրեն՝ իր խամրած կյանքի համար: Եվ Յոզի կինը վճռական որոշում է կայացնում, որ հազար անգամ ավելի լավ է անգույն ձևով ապրել, քան բոլորի ու իր մեջ եղած ստից տապակվել: «Եվ հետո ի՞նչ է եղել որ,- ինքն իրեն հույս է տալիս հերոսուհին,- մեջտեղը քննելու բան էլ չկա»: Նա հարմարվել է կյանքի իր դերին, իր կերպարին, իր տանը, զավակներին, ամուսնուն, ինչպես Բակունցի հերոսներն էին. «Կինը հարմարվել էր ամուսնուն այնպես, ինչպես ձին ախոռին», և շարունակում է «ապրել»:

«Երևի օդի մեջ գտնվող օտարությունն է, որ հանգիստ չի տալիս իրեն»:

Կնոջ զգացմունքային դրսևորումներն ու հոգեբանական այն տեղաշարժերը, որ ապրում է Յոզի անսխալ հերոսուհին, փորձում են բացահայտել հեղինակին մշտապես զբաղեցնող հիմնախնդիրներից մեկը՝ կնոջ առեղծվածային անհատականությունը:

Այս պատմվածքում շոշափվում է կնոջ ընտանեկան դիրքի, հասարակական գործունեություն ծավալելու խնդիրները, այն հանգամանքները, որոնք խթանում կամ խանգարում են նրանց ինքնահաստատմանն ու ինքնադրսևորմանը: Յերոսուհին ակնածանքով

ու թաքուն նախանձով է վերաբերվում տղայի դաշնամուրի ուսուչցուհուն՝ Գալինա Սեմյոնովնային, իր տալին՝ Գեղեցիկին, որն անգլերենի դասախոս է:

Նրանք ոչ միայն անուն ունեն, այլև դիրք, բացի կին, մայր լինելուց, նաև հասարակության մեջ դեմք ունեն ու նպատակ: Յովոյի կինը, չնայած նահապետական օրենքների հիւս հպատակ չէ, սակայն ինքնարժևորումն այստեղ նահանջում է: Նա ամեն ինչում, սկսած դպրոցական տարիներից, առաջնորդվում է վաղուց մեռած տատի պատվիրաններով. «Տղամարդը, որ տուն գա, պետք է ամեն ինչ տեղը տեղին գտնի»:

Եվ որքան էլ դժգոհում է դրա դեմ, միևնույնն է, կաշվից դուրս է գալիս՝ ամեն ինչ տեղը տեղին հասցնելու համար, և գոհ է դրանից:

Ինքնագոհաբերվելու, ինքնանվիրման այս խորհուրդն ունի նաև Ալիս Յովիանսիայանի «Սակրավոներ» պատմվածքը, որտեղ ասվում է. «Յեշտ չէ հայ լինել և ծերունի դառնալը: Եթե ծերուկ կամ երեխա ունենք, մեզ արգելվում է մեր մասին հոգալը. հրաման է գալիս մոռանալ մեզ, և մենք չենք փորձում հակառակվել հրամանին»: «Յովոյի կնոջ մեկ օրը» պատմվածքի հերոսուհին իսկապես ժողովրդական խառնվածք է՝ ներող ու համակերպվող՝ չխախտելով արժանապատվության սահմանները. «Արթնացավ վիրավորանքից, ու վիրավորանքը դեռ մնում էր ... Յետո վիրավորանքը հալվեց ... ձուլվեց ամուսնուն աշխատանքի ճանապարհելու ամենօրյա գործողություններին ու մի քանի բառի մեջ...»

Յետաքրքիր է նաև Յովոյի կերպարը, որն ամբողջացնում է կնոջ, ընտանիքի, հարազատների միջավայրը: Բանվորից մատուցողի փոխված տղամարդու և նրան ապականված կյանքից փրկող կնոջ միջև իսկական, զգացմունքային սեր կոչվածը ոչ միայն չքացել էր, այլև երևի չէր էլ եղել, պատահական չէ, որ կինը զգաց, որ «ինքն էլ է տգեղ, պաղած, կարծես տանը ցուրտ լինի, այնինչ վաղ աշուն էր, շոգ էր դեռ»: Եվ այս ամենի մեջ Յովոյի կինը տեսնում է իր մեղքը. «Խեղճ մարդուն էնքան դաստիարակեցի, մի բուռ դառավ», ու ապրում է այս գիտակցումով:

Մի բուռ դարձած տղամարդու կերպարն ավարտուն է դառնում հեղինակի մի դիպուկ նկարագրությամբ. «Կլմացվի, սրբիչը կքսի դեմքին, իբր սրբվեց, կմտնի շալվարի մեջ (որը, ի դեպ, տղամարդ լինելու խորհրդանիշն է), փողոցում գրպանից կհանի սանրը, կքսի մագերին, իբր սանրվեց և կգնա»:

Ահա այդ «իբր» տղամարդն է իր անմեղ թվացող գոյությամբ կասկածի տակ դրել Յովոյի կնոջ հավատարմության-անհավատարմության առեղծվածը:

«Ամուսնացած կնոջ աչքերին նայելն էթիկա չէ»։ կարգախոսով ապրողի մեջ արթնանում է կինը՝ Յոլյոյի՝ Լենինգրադից եկած հորեղբոր նկատմամբ ունեցած զգացմունքի տեսքով։ Այս անգամ նա արդեն չէր խաբվել, հրապուրվել էր ոչ թե սև, գանգուր մազերով և հարբածի աչքերի ամբարտավան փայլով, այլև նուրբ ճաշակով ու խելացի բարքով մեկին։

Եվ Յոլյոյից, երբ գոհ է ու ցանկանում է նրան, ոչ մի անգամ հորեղբոր մասին մտքերը չեն խռովում իրեն, սակայն, երբ զայրանում է, չի կարողանում իրեն ետ պահել նրա՝ իրենց տանն ապրած երանելի օրերը վերհիշելու հաճույքից։

Յոլյոյի կինը սիրում է ամուսնուն որպես հարկն է, հավատարմորեն ծառայում լոկ իբրև կին և հպարտ է, որ շրջապատի մարդիկ իրեն համարում են օրինավոր ու հիանում տան մաքրությամբ ու երեխաների կոկիկությամբ։

Սակայն մի տարօրինակ, իր համար անգամ օտարոտի ու անբացատրելի զգացում գնդանած կրծքում՝ լուռ, միայն իրեն իմանալի ցավով տանջվում է։ Նա զգացական իմաստով հազար անգամ դավաճանել է ամուսնուն, բայց բանականությունը տասը հազար անգամ սաստել է սրտի թելադրանքը և ստիպել ամեն վայրկյան մտածել իր տատի պահանջած համավոր կին լինելու մասին։

Այնքան էլ վառ երևակայություն պետք չէ՝ հասկանալու, որ այն ամենը, ինչ կա տանը, ընդհուպ մինչև բյուրեղապակե սկուտեղը, «շատ տխուր հանգամանքներում» է ձեռք բերվել։ Չնայած իրենը լինելու փաստն արդեն իսկ սփոփող է, սակայն անախորժ հիշողություններ են առաջացնում այն աստիճան, որ երբեմն թշնամանք է զգում դրանց հանդեպ։

Տարբեր է միայն հորեղբոր՝ Յոլյոյի անհիշելի քերած զարդատուփը, որի զարդանախշերը շոյելիս սիրում է իր մատները։

«Երջանկությունն այն է, երբ զգում ես քո մարմինը»։ այս փիլիսոփայությամբ է առաջնորդվում Յոլյոյի կինը՝ չնայած վերջին անգամ մանկությունից հետո իր մարմինն զգացել է Յոլյոյին փրկել-սիրելու իր ոգևորովորության օրերին միայն, շա՛տ վաղուց...

Սակայն սա Յոլյոյի կնոջ մեկ օրն է, շատ նման մյուս օրերին և միևնույն ժամանակ տարբեր նրանցից։

«Էջ ես, Էջ, քեզ հավաքի՛ր», «Վաղը բուրդս կթրջեմ, կլվանամ», - սթափեցնում է ինքն իրեն, կտրվում զգացական աշխարհից, վերադառնում իրականություն և ապրում իրեն բաժին ընկած կյանքը՝ արտաքուստ հպարտ քայլքով ընթանալով դեպի նոր օր, նոր առավոտ, որպեսզի արթնանա ու քթի տակ ինքն իրեն ծիծաղելով՝ շարունակի ապրել...

Ամենակարևորը կյանքում ժամանակին ապրելն է, այն զգալը, շոշափելը: Ժամանակից ուշացար, կկորցնես ամեն ինչ, և «Դարձ նավահանգիստ» պատմվածքի հերոս թռչունը հենց երջանիկ է դրանով, որ ինքը ճիշտ պահին է հայտնվել նավահանգստում և ճիշտ տեղում՝ Օշինի ուսին. «Կարող էի գիշերը թռչել և կամ լուսը բացվելուն պես...բայց կատարյալ չէր լինի այն վայելքը, որ ուզում էի պարզևել նրան»: Թեկուզ վախճան, բայց ժամանակին, երջանիկ պահին, տեղին:

Սիրո քնքուշ մի հեքիաթ է պատմվում Ալիս Յովհաննիսյանի համանուն պատմվածքում («Սիրո քնքուշ հեքիաթ»), ուր հերոսուհին՝ գաճաճ Մարիետան, որի համար պատրաստ էր կյանքը տալ նրա ամուսին Յաշան, ասում է. «Ամեն, ամեն ինչ այս տան մեջ ամբողջ ենք քո վաստակով: Ես ի՞նչ եմ որ: Ես մենակ քեզ սիրողն եմ»,-անմեղորեն չպատկերացնելով, որ հենց դրանում է երջանկությունը:

Շամիրամը չկարողացավ վերակենդանացնել Արային, բայց այդ խեղճ ու կրակ գեղջկուհին կյանք տվեց բնության ու արարչի կողմից անգամ անտեսված խեղճ գաճաճին՝ Յաշային: Նմանը գտավ նմանին- սա է սիրո գոյության ու կյանքը հրաշք հեքիաթի վերածելու գաղտնիքը:

Միշտ չէ, որ Ալիս Յովհաննիսյանի հերոսները կանայք են, նրանք ուղղակի անհատներ են, որոնց համար կենցաղային ամենասովորական իրադարձությունները կարող են դառնալ ինքնավերլուծման, ինքնահաստատման, ինքնարդարացման և ինքնաձաղկման փոլիսոփայություն: Յետաքրքրական և շատ բնական է, որ Ալիս Յովհաննիսյանի գրեթե բոլոր հերոսները քաջատեղյակ են իրենց թերություններին ու թուլություններին, ուղղակի կյանքի որոշակի հանգամանքներ ստիպել են լինել այնպիսին, ինչպիսին երևում են ուրիշների աչքում: «Սուրբ Գևորգի այցը» պատմվածքի հերոսուհի Նունիկը մտորում է ինքն իր մասին. «Փնթփնթան պառաճավ, Էդ Ե՞րբ էիր Եսքան անուշ Էղե: Ի՞նչ կլիներ, որ 62 տարվա մեջ գոնե երկու օր Եսպես անուշ Էղնեիր: Կերար հարսներիդ, տղոցդ, ինամոցդ կերար: Էլ ո՞նց ասեն, թե Նունիկը լավ կնիկ է»: Այս կերպարն օգնում է գնահատել կյանքի ընթացքին ուղեկցող այն չնչին թվացող մանրուքները, առանց որոնց ապրել հնարավոր չէր:

Մի հրաշագործ ուժի աներևակայելի ազդեցությամբ, որն էլ Մարտինի կերպարից է ծնվում, կյանքի մանրուքներին արդեն շատ ուշք չդարձնող Նունիկը դառնում է այնպիսին, ինչպիսին պետք է որ լիներ: Գուցե պատմվածքը գալիս է լրացնելու Յովհաննիսյանի այն կերպարների պատկերասրահը, որտեղ վատ ու լավ անհատներ չկան, այլ կյանքի հանգամանքներն են նրանց ստի-

պում լինել այդպիսին: Նայած, թե ով երբ կգտնի իրենը, այն կարևորը, որով վեհանում է ինքը:

Կյանքի ամենաբազմազան կողմերը Ալիս Յովհաննիսյանի համար դարձել են գեղարվեստական երկի նյութ՝ արտացոլվելով մարդկային բնավորությունների, արարքների ու ապրումների մեջ, որոնք օտար չեն, այլ հասկանալի ու ընկալելի են յուրաքանչյուրիս:

«Սուրբ Գևորգի այցը» պատմվածքի հերոսուհու կյանքին են զուգահեռվում նաև «Պատառիկներ մեր փուլչ կյանքից» պատմվածքի հերոսուհիների՝ թռչակառու բժշկուհի Շուշանիկի և Եղսաբեթ տատի ճակատագրերը: Նրանք շատ տարբեր են միմյանցից, բայց միևնույն ժամանակ շատ նման: Այս հերոսուհիները հիշեցնում են, որ կանայք՝ աղջնակից մինչև ծեր, ունեն նույն երազներն ու հեքիաթները, և նրանցից հաջողված կհամարվի նա, ում ավելի շուտ կհանդիպի հեքիաթի երազային ասպետը, և հերոսուհիներից մեկի խոսքերով ասված՝ «պարտադիր չէ, որ ծովակալ լինի»: Կինը երբեք հոգով չի ծերանում, իսկ վաթսուն տարին, որի սահմանը հատել են Ալիս Յովհաննիսյանի հերոսներից շատերը, դեռ աղջկական հույզեր ունեն, և դա բնական է:

Կյանք կոչվող ամենաարագ միջոցից ուշանալու, ժամանակը ճիշտ չըմբռնելու մորմոք կա նաև «Տեսիլաժամեր» ստեղծագործության մեջ:

Երիտասարդ տարիներին, թվում է, թե ամեն ինչ առջևում է և դեռ կհասցնես: Միայն մեկ վայրկյան. «Յենց հիմա կիջնեմ, մի քիչ սպասիր, սանրեմ խռիվ մազերիս հոծ թնջուկները, մի վայրկյան էլ տուր, որ փոխեմ խամրած ու թռչնած հին այս զգեստը, մի վայրկյան էլ տուր ...», ու հաճախ չքանում է երազը, և ապրելու էլ ոչինչ չի մնում...

Ուստի պետք է շոշափել պահը, զգալ վայրկյանի խորհուրդը և աղաղակել ֆաուստյան հանրահայտ խոսքերը. «Կանգ առ վայրկյան, դու չքնաղ ես...»:

Ալիս Յովհաննիսյան-արձակագիրն ունի իր ընթերցողները, որոնք հավատում են նրան և սպասում նորանոր ստեղծագործությունների:

Գրականություն

1. Ալիս Յովհաննիսյան, «Սիրո քնքուշ հեքիաթ», Երևան, 1994թ.
2. Ալիս Յովհաննիսյան, «Պատառիկներ մեր փուլչ կյանքից», «Նարցիս», N 4, 2008թ.

Բանաստեղծի դավանանքը

Դու՛ բացվող օր
Մաքու՛ր, մաքուր:
Ես՛ մամուռներ,
Մաշած մատուռ:
Դու՛ երգ, դու եռք,
Թռիչք ու ջանք,
Ես՛ ավերված
Որոտնավանք:
Դու՛ հորձանուտ,
Կամուրջ ու երթ,

Ես՛ ջուրն ընկած
Որոտնաբերդ:
Դու՛ երկինքով
Լցված մի լիճ:
Ես՛ ցամաքած
Որոտնակիրճ:
Դու՛ նորերի
Աղոթք ու խիղճ:
Ես՛ անցյալի
Քարեղեն ճիչ...
(Համո Սահյան)

Ռազմիկ Դավոյանը հայտնվեց ժամանակակից գրականության հին ու նոր սերունդների գրական խաչմերուկում: Իր ստեղծագործական ճանապարհը սկսեց Պարույր Սևակի, Համո Սահյանի, Վահագն Դավթյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Սիլվա Կապուտիկյանի, Գևորգ Էմինի ստեղծագործական վերելքի հետ և շարունակեց գրական նոր սերնդի՝ 70-ականների բանաստեղծների հետ: Ժամանակի երևելիների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Ռազմիկ Դավոյանը, որի ստեղծագործությունը հարաբերականորեն հին ու նոր պոեզիաների միջև կամուրջ կարող է լինել: Նա հաջող քննություն էր բռնել՝ ստանալով նախորդների գնահատումը որպես օրինություն, իսկ գրական նոր սերնդի համար պոեզիայի ավանդների շարունակող է ու հարստացնող: Թերևս իր ժամանակակից բանաստեղծներից շատերի հետ Ռազմիկ Դավոյանը տարեկից է, սակայն գրականության մեջ կարևոր է ճանաչման, առաջին գրքի տպագրման փաստը, որով և Դավոյանը ներկայացավ դեռևս 60-ականներին ու անմիջապես էլ նկատվեց որպես կայացած բանաստեղծ:

Նա 3 տասնյակի հասնող բազմաժանր գրքերի հեղինակ է, կատարել է հրաշալի թարգմանություններ, գրել է ակնարկներ, ար-



Ռազմիկ Դավոյան

ծակ և չափածո գեղարվեստական գործեր, արձակից՝ «Թորոս Ռոսլին» վիպակը, «Սահման» գեղարվեստական ակնարկը, վերջին տարիներին գրված «Եթե Աստված կամենա» վեպը, որը այժմեական կյանքի պատմական փոփոխությունների արտացոլումն է, չափածոյից՝ բանաստեղծությունների բազմաթիվ ժողովածուներ, «Խաչերի ջարդը», «Երևանյան աշուն», «Խոստովանանք», «Ուտից գլուխ» պոեմները, գրել է նաև «Ու՞ր են մնացյալ դերասանները» չափածո ողբերգությունը Չարենցի մասին և այլն:

Դավոյանը տպագրվել է և շարունակում է տպագրվել ժամանակակից մամուլի էջերում, հասարակական և հատկապես գրական գործունեությամբ նպաստում մեր հայրենիքի առաջընթացին:

«Ես ծնվել եմ» բանաստեղծության մեջ այսպես է ներկայացնում իր դավանանքը.

-Պիտի շռայլորեն ապրեմ,
Ապրեմ երկրիս բախտով,
Ապրեմ ձեզնով,
Ինձնով,
Ապրեմ, քանի դեռ կամ:
Իսկ թե պետք է մեռնել
Դավանանքի ճշմարտության համար,
Այդ դեպքում հավատը կուզեկուզ թող չգա
Մեր ետևից,
Մեր կոխած հողում տրորվելով
Եվ երբեմն իմաստուն,
Հաճախ անիմաստ մեր խոսքերից
Օրորվելով:

Նրա պոեզիան շարժուն է, այն ձգտում է քարացածություններից դեպի ընթացք, շարժում: Այս առումով հուզական տաղտկությունն ու պարփակվածությունը նահանջում են, իսկ առարկաներն ու երևույթները գծագրվում են ոչ միակերպ, այլ բազմազան դրսևորումներով ու այլևայլ հարաբերություններում: Հենց սրանով է հեղինակը «բացում նյութի կեղևը», սուզվում առօրեական մտածողությունից վեր, անհասանելի ու առեղծվածային գոյի ընդերքը:

Բաց քո կեղևը, ծա՛ռ,
Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ...
Այս անծաղիկ դարում
Ես կձուլվեմ քեզ հետ՝
Որպես փոքրիկ գարուն:

«Ռ. Դավոյանը բանաստեղծական անհատականություն է, - վստահեցնում է Սուրեն Աղաբաբյանը, - նա բանաստեղծությա-
նը նայում է իբրև դժվար, հոգեկան մաքառում պահանջող գործի,
մեր քնարերգության մեջ բերելով հեռանկարային որոշ սկզբունք-
ներ»:

Ինչպես ցանկացած կայացած արվեստագետի՝ այնպես էլ
Դավոյանի ստեղծագործական անհատականությունը մինչև մեծ
աշխարհի ու հասարակության կենսագրության բացահայտումը
սկսվում է ինքնաճանաչումից, անցած կյանքի ընթացքից, հայրե-
նի եզերքից ու սեփական միկրոաշխարհի հայտնաբերումից.

Երեկ տխուր, այսօր ուրախ,
Ալիքի պես ծափ եմ տալիս,
Երեկ՝ դեպի անհայտություն,
Այսօր դեպի ափ եմ գալիս...
... Ինձ բաշխում եմ անմնացորդ,
... Ծիծաղիս մեջ ամեն անցորդ
Յոզնած հոգին է լվանում...

Գոյության անվերջանալի պայքարի մեջ ամեն ոք ունի իր լի-
նելու պատճառաբանությունը: Յուրաքանչյուրը փորձում է ինք-
նաարտահայտմամբ դրսևորել իրեն՝ իհարկե ներդաշնակության
պատկերները չփշրելով:

Յենց այդ բնական ներդաշնակության զգացողությունն է, որ
զգում ես Դավոյանի ստեղծագործություններն ընթերցելիս, չէ՞ որ
նրանցում բանաստեղծն անկեղծանում է.

Մայրամուտի պես հրահալ եմ ես
Եվ մայրամուտի նման աննկուն:

«Ներդաշնակության զգացողությունը, որ նրա բանաստեղծու-
թյունների միջուկն է, դարձել է նաև նրա ծավալուն ինքնաարտա-
հայտումների եռությունը»:- նկատում է Դավիթ Գասպարյանը:

«Պոեզիայի դերը չի փոխվում, ինչպես չեն փոխվում արվեստի
մյուս ճյուղերի, հացի, ջրի, հագուստի դերերը: Ուրեմն պոեզիայի
դերը մնում է մարդուն ազնվացնելը, գեղեցկացնելը»: Եվ Ռազմիկ
Դավոյանի պոեզիան փորձում է հավատարիմ մնալ սահյանա-
կան այս բնորոշմանը՝ իհարկե բանաստեղծական աշխարհի բերե-
լով դավոյանական ինքնատիպ մտածողություն ու ոճ:

Փիլիսոփայական խտացված միտք ու խորը հենք կան Դավո-
յանի այն ստեղծագործություններում, ուր նա ուշադրության է

արժանացնում մեղավոր ու դաժան աշխարհում իր գոյությունը կյանք դարձնող անհատի ճակատագրին: Եվ չի սխալվում բանաստեղծը, երբ մարդուն անհատ դարձնելու բանաձևը առնում է մայր բնությունից՝ բարության ու համաչափության դասեր յուրացնելով նրանից:

Դեռ առավոտ է, և ցողն ու շաղը
Ծաղկաթերթերին ժպտում են, լալիս,
Մի ալիք ճեղքում է շամանդաղը,
Մյուսը ... կարելով է գալիս:
Ես ծովի ափին նստել, կարդում եմ
Լի - Բոի տաղը՝ աշնան մասին,
Եվ անցորդները տեսնում են հանկարծ
Ինձ՝ առանց պատճառի ժպտալիս:

Յեշտ չէ ընթանում ստեղծագործող անհատի կյանքի ուղին, չէ՞ որ նա զգում ու նկատում է արտասովորը, այն, ինչ աննկատելի է չօժտված մարդուն: Բարդ ու պատասխանատու է նաև արածը, իսկ ասածը պատճառաբանված արդարացում է պահանջում: Դավոյանը «որպես բանաստեղծ ու հավատքի քուրմ» ամենից շատ հավատում է երգի ամենագոր ուժին, փորձում մեկնել ու կարևորել բանաստեղծության, երգի արժեքը ազգի, ժողովրդի ու հասարակության կյանքում՝ պահաջելով բանաստեղծներից.

Ապա եղե՛ք հզոր,
Ապա եղե՛ք վսեմ,
Ապա թույլ մի՛ տվեք,
Որ օտար մակույկները նավերի հավակնությամբ
Նավեն ձեր հավատքի վրա:

Հավատարիմ մնալով փիլիսոփայական՝ իրեն դեռ վաղուց բնորոշ տարերքին, Դավոյանը ամբողջացնում է լճացման ժամանակաշրջանի «սեփական պոետական մոդելը»՝ խիզախորեն նկատելով, որ

Մի մեծ գլխի ստվեր,
Մի երկիր է ծածկում,
Եթե այն դրվում է
Յենց լույսի ճեղքում:

Բանաստեղծի այս դիպուկ բնութագրումը հրապարակախոսական լիցքերով է սնվում, երբեմն կորցնելով նաև իր քնարակա-
նությունը:

Հետաքրքիր է Դավոյանի վերաբերմունքը նորին մեծություն
բառի արժևորման հարցում, ու «թեև այն զգացմունքների խեղ-
դող ալիքից խոստովանանքի համար է ծնվում ու շահատականու-
թյան շուկաների մեջ»:

... Սակայն ինչ - որ տեղ՝
Հոգու ծալքերում իմաստունների,
Ապրում է Բառը, և անվերջ թրծվում...
... Շարժվում է դեպի հավիտենություն...

Իսկ բանաստեղծի բառի ու երգի գոյությունը պատճառաբան-
ված է՝ ծառայելով սեփական ժողովրդին, հայրենիքին ու նաև ողջ
մարդկության լուսավոր գալիքի հավիտենությանը: Ու չնայած
բանաստեղծը սարսափով է նկատվում, որ դեռ

Աշխարհը լիքն է կործանումներով
Աշխարհը լիքն է տագնապով վայրի,
Մարդասիրության խենթ սամումներով
Մարդիկ քանդում են տունը աշխարհի...

Սակայն ավելի քան հավատացած է, որ .

Կա աշխարհում բարձրիկ մի Հայաստան աշխարհ,
Որ իր լաջվարդ, լազուր լեռներն ունի,
Եվ իր դաշտերն ունի - ասես նշխար:
Կա աշխարհում բարձրիկ մի Հայաստան աշխարհ:
Եվ կլինի հավերժ:

Գրականություն

1. Ռ. Դավոյան, Իմ աշխարհը, 1963թ.
2. Ռ. Դավոյան, Ստվերների միջով, 1967թ.
3. Ռ. Դավոյան, Ռեքվիեմ, 1969թ.
4. Ռ. Դավոյան, Խաչերի ջարդը, 1972թ.
5. Ռ. Դավոյան, Մեղրահաց, 1973թ.
6. Ռ. Դավոյան, Կեղևի բաց արա, 1975թ.
7. Ռ. Դավոյան, Տաք սալեր, 1978թ.
8. Ռ. Դավոյան, Պղնձե վարդ, 1983թ.

9. Ռ. Դավոյան, Էպոս պատանության, 1984թ.
10. Ռ. Դավոյան, Չանճար և հիշողություն, 1986թ.
11. Ռ. Դավոյան, Քարե հաց, 1989թ.
12. Ռ. Դավոյան, Եթե աստված կամենա, 2005թ.

Նաիրա Արարատի Խաչատրյան

Ուղեկիցներին Երթուղիներով

գրականագիտական հոդվածների ժողովածու

Սրբագրիչ՝ Կարինե Գալոյան
Համակարգչային շարվածքը՝ Ստելլա Բուռնուչյան
Շապիկի ձևավորումը՝ _____

Տպագրվել է՝ _____